



21-րդ դար

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

5 (75)

ԵՐԵՎԱՆ

2017

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից

5 (75), 2017

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ալեքսանդր Գասպարիշվիլի

Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական լայնախառն լրատվամատերիալի վարիչ, փ.գ.թ.
(Մոսկվա, ՌԴ)

Աշոտ Թավադյան

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Արա Մարջանյան

«Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ, ՄԱԿ ԶԾ էներգետիկայի ազգային փորձագետ, տ.գ.թ.

Արամ Սաֆարյան

«Ինտեգրացիա և զարգացում» ՀԿ նախագահ, ք.գ.թ.

Բարկեն Վարդանյան

«Հայք հաստատություն» հ/կ տնօրեն, ՀՀ պաշտպանության նախարարի ավագ խորհրդական
Գազիկ Հարությունյան (համակարգող)

«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Զավեն Եկավյան

Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)

Էդուարդ Լ. Դանիելյան

«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի
պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան

ՀՀ վարչապետ, տ.գ.դ.

Հրանտ Զակոբյան

ՀՀ Սփյուռքի նախարար, ի.գ.դ.

Միհրան Դաբալ

Դոկտոր, պրոֆեսոր, Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր
Սփյուռքի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա)

Մուշեղ Լալայան

ՀՀ Կ փոխնախագահ

Զորջ Կոստոպուլոս

Գիրենանվտանգության պրոֆեսոր (Աթենք, Հունաստան)

Մամվել Մանուկյան

«Նորավանք» ԳԿՀ փորձագետ, տ.գ.թ.

Մերգեյ Գրինյան

Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի
գլխավոր տնօրեն, տ.գ.դ. (Մոսկվա, ՌԴ)

Վահագն Ազյան

«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան

ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի նախագահ, տ.գ.թ.

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Թիվ 5 (75), 2017թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ	Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
<i>Գլխավոր խմբագիր</i> Գագիկ Հարությունյան	Մամուլի Մանուկյան Հայաստանում 2017-2020թթ. ծնունդների թվաքանակի կանխատեսում 5
<i>Գլխավոր խմբագրի տեղակալներ</i> Արա Մարջանյան Վահագն Ազյան	Գեորգի Պոչեպցով Հաղթանակ զանգվածային գիտակցության և մտածողության հանդեպ 15
<i>Պատասխանատու խմբագիր</i> Խոնարհիկ Քարաուղլանյան	Թաթուլ Մանասերյան Պատերազմի տնտեսագիտություն. ազատական տնտեսության գայթակղությունները և ազգային շահը 32
<i>Պատասխանատու քարտուղար</i> Լուսինե Բաղրամյան	Գայանե Հարությունյան ՀՀ ռազմարդյունաբերության զարգացման առաջնահերթությունները 48
Արեստակես Մինավորյան Դիանա Գալստյան Կարեն Վերանյան Վահրամ Հովյան	Նարեկ Մինասյան Պետության «փափուկ ուժի» չափելիության խնդիրը և միջազգային ինդեքսները 68
	Ռոբերտ Խաչատրյան Հետազոտական համալսարանների դերակատարությունը ՀՀ գիտելիքահենք տնտեսության զարգացման համատեքստում 77
	Տարոն Սաքոյան Ռուս-թուրքական հարաբերությունները և Հայաստանը 92
	Միրա Անտոնյան Ինքնության խեղումից մինչև ուժացում. հայ որբերի «անվտանգության ապահովումը» ցեղասպանության տարիներին 103
	Հուշագիր հեղինակին 117

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2017-2020ԹԹ. ԾՆՈՒՆԴՆԵՐԻ
ԹՎԱՔԱՆԱԿԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Մամվել Մանուկյան՝

Բանալի բառեր՝ ժողովրդագրական կանխատեսում, կենդանի ծնունդներ, ժողովրդագրական քաղաքականություն:

«Նորավանք» հիմնադրամը և «21-րդ ԴԱԸ» ամսագիրը պարբերաբար անդրադառնում են Հայաստանի ժողովրդագրական վիճակին վերաբերող տարաբնույթ հարցերին [1-4]: Այդ հրապարակումներում դիտարկվել են Հայաստանի բնակչության թվաքանակը, բնական աճը (ծնունդների, մահերի և դրանց տարբերության) և մեխանիկական աճը (բնակչության ներհոսքի, արտահոսքի և դրանց տարբերության) պայմանավորող քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային գործոնները, տրվել են այդ գործոնների ազդեցության գնահատականները և վերլուծությունը, ինչպես նաև ժողովրդագրական վիճակի կառավարման մոտեցումներն ու մեթոդները: Այդ աշխատանքները հիմնված են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, կոնկրետ սոցիոլոգիական հետազոտությունների, ինչպես նաև հայաստանյան և գլոբալ մակարդակում ընթացող քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային պրոցեսները նկարագրող տվյալների վրա:

Այս աշխատանքում ներկայացված է Հայաստանում 2017-2020թթ. ընթացքում կենդանի ծնունդների կանխատեսումը (Աղյուսակ 1):

Աղյուսակի 2-րդ սյունակում տրված է յուրաքանչյուր տարվա համար կանխատեսված ծնունդների քանակը: Կանխատեսման մոտեցման աղելվատության ստուգման համար այն կիրառվել է նաև 2015 և 2016թթ. համար, որոնք նույնպես ներկայացված են այդ սյունակում:

Աղյուսակի 3-րդ սյունակում տրված է ծնունդների փաստացի քանակն ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների:

Աղյուսակի 4-րդ սյունակում տրված է ծնունդների տարեկան հավել-աճը բացարձակ թվերով: Այն հաշվարկված է կանխատեսված ծնունդների թվաքանակների կիրառմամբ (սյունակ 2):

¹ «Նորավանք» ԳԿՀ փորձագետ, սոց.գ.թ.:

Աղյուսակի 5-րդ սյունակում տրված են կանխատեսված և փաստացի ծնունդների քանակների տարբերությունների բացարձակ արժեքները 2015 և 2016թթ. համար:

Աղյուսակի 6-րդ սյունակում տրված է կանխատեսված և փաստացի ծնունդների քանակի տարբերությունը որպես տոկոս՝ հաշվարկված ծնունդների փաստացի քանակից, 2015 և 2016թթ. համար:

Աղյուսակ 1

Հայաստանում ծնունդների թվաքանակի կանխատեսումը
2017-2020թթ. համար

Հայաստանում ծնունդների թվաքանակի կանխատեսումը 2017-2020թթ. համար					
1	2	3	4	5	6
Տարի	Կանխատեսված ծնունդների քանակ	Փաստացի ծնունդների քանակ, ՀՀ ԱՎԾ	Ծնունդների հավելում (ըստ «2» սյունակի	Կանխատեսման սխալը («2» - «3»)	Կանխատեսման սխալը՝ % («2» - «3»)/«3»
2015	41,751	41,763	-	-12	-0.03%
2016	40,682	40,638	-1,069	44	0.11%
2017	39,626	-	-1,056	-	-
2018	38,609	-	-1,017	-	-
2019	37,647	-	-962	-	-
2020	36,753	-	-894	-	-

Կանխատեսման կիրառությունները

Ծնունդների կանխատեսված քանակը կարող է կիրառվել տարբեր կոնկրետ խնդիրների լուծման համար, մասնավորապես.

- Տվյալները կարող են օգտագործվել եռամյա բյուջետային պլանավորման ընթացքում, այդ թվում.
 - ◊ Պլանավորելու համար ծննդօգնության համար նախատեսվող ֆինանսական միջոցները:
 - ◊ Պլանավորելու համար մանկական առողջապահության և մանկական սոցիալական ենթակառուցվածքների (մանկապարտեզներ) բեռնվածքը և գնահատելու համար կադրերի պահանջարկը:


- ◇ Պլանավորելու համար սոցիալական աջակցության ծավալները:
- ◇ Կիրառելով ծնունդների բաշխման մարզային գործակիցները՝ պլանավորումը կարող է տարածվել նաև մարզային մակարդակում:
- Կիրառելով ծնվելիս սեռերի հարաբերակցության գործակիցը՝ Հայաստանում մոբիլիզացիոն ներուժի գնահատումը կարող է տարածվել ևս 4 տարվա վրա՝ 2035-2039թթ.:

Մեկնաբանություններ

Հայաստանում կնոջ պտղաբերության գործակիցը՝ (*TFR - Total Fertility Rate*) սկսած 1993 թվականից՝ արդեն 24 տարի է, ինչ ավելի ցածր է 2.15-ից, որը բնակչության պարզ վերարտադրության համար անհրաժեշտ մակարդակն է (Գծապատկեր 1):

Գծապատկեր 1

Ծնունդների թիվը և պտղաբերության գործակիցը Հայաստանում, 1980-2016թթ.: Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն: 2017-2020թթ. ծնունդների թիվը հեղինակային կանխատեսումներ են



Հետագա տարիների ընթացքում բնակչության երկարատև հեռանկարում վերարտադրության համար այդ հիմնարար ցուցանիշի նվազման վրա ուշադրություն չէր դարձվում, քանի որ ծնունդների քանակի նվազման հիմնական գործոններն էին՝ բնակչության արտագաղթը և սոցիալ-տնտեսական պայմանների խիստ վատթարացումը: 2000-ականներին, երբ համաշխարհային տնտեսությունը վերելք էր ապրում, ինչն անդրադառնում

էր նաև Հայաստանի տնտեսության վրա, սկսեցին աճել ինչպես ծնունդների թվաքանակը, այնպես էլ կանանց պտղաբերության գործակիցը (տե՛ս Գծապատկեր 1, 2002-2010թթ. հատվածը), ինչը ժողովրդագրական վիճակի աստիճանական բարելավման տպավորություն էր թողնում:

Սակայն իրականում ծնունդների թվաքանակի այդ տարիների աճը պայմանավորված էր հիմնականում նրանով, որ ծննդաբերության տարիքի էին հասնում 1980-ականներին ծնված աղջիկները (տե՛ս Գծապատկեր 1, 1980-1990թթ. հատվածը): Այդ տարիները Հայաստանում ծնունդների թվաքանակի առավելագույն մակարդակի տարիներն էին:

2010-2016թթ. ընթացքում առաջացավ ծնունդների թվաքանակի նվազման միտում, որը 2014թ. միջարկվեց ցուցանիշի աճով, ինչը, մակերեսային դիտարկման դեպքում, կարող էր տպավորություն ստեղծել, որ հնարավոր է ծնունդների թվաքանակի տաստանումներ 41-42 հազար երեխա միջակայքում:

- **Սակայն, սկսած 2016-ից՝ ավարտվեց 1980-ականների ժողովրդագրական ռեզերվը.**

Առաջին ծննդաբերության միջին տարիքին հասան 1993թ. ծնված աղջիկները, ովքեր 11,540-ով ավելի քիչ էին, քան 1992-ին ծնվածները: Դրանից հետո ծնվածների թվաքանակը Հայաստանում սկսեց մոնոտոն նվազել և 2001թ. դարձավ 32,065 երեխա:

Գծապատկեր 1-ի տվյալներից ակնհայտ է, որ այսուհետ, յուրաքանչյուր հաջորդ տարի, Հայաստանում առաջին ծննդաբերության միջին տարիքին են հասնելու ավելի ու ավելի քիչ աղջիկներ: Հայաստանում մոր միջին տարիքն առաջին երեխայի ծննդյան ժամանակ 2015թ. կազմել է 24.4 տարեկան: Դրան է գումարվում նաև այն, որ ինտենսիվ արտագաղթի պայմաններում Հայաստանից հեռանում են նաև դեռահաս աղջիկները, ինչն էլ ավելի է նվազեցնում յուրաքանչյուր տարի առաջին ծննդաբերության միջին տարիքին հասնող աղջիկների թիվը:

Այս իրավիճակն արդեն փաստ է, որն այլևս ոչ մի կերպ չի քողածածկվի: Այսինքն.

- **Հայաստանի ժողովրդագրական ստանդարտ քաղաքականությունները, որոնք հիմնված են ծնելիության բարձրացման նպատակով սոցիալ-տնտեսական աջակցության տրամադրման վրա, այլևս ունակ չեն լինի շտկելու իրավիճակը՝ չեն կարողանա կոմպենսացնել ծննդաբերող կանանց փոքր թվաքանակը:**

Ավելին՝ պետք է հաշվի առնել, որ ծնելիության բարձրացման ցանկա-

ցած քաղաքականության հիմնարար երկարատև ազդեցությունը կարող է ի հայտ գալ նույնքան երկար ժամանակ հետո, որքան որ տևել է անբարենպաստ ժամանակաշրջանը՝ մոտ քառորդ դար:

Ներկայացված կանխատեսումը կարելի էր շարունակել ևս 3-5 տարվա համար, սակայն Հայաստանից արտագաղթի տեմպը, որը ներկայացված կանխատեսման ժամանակ չի հաշվառվել, կարող է էապես փոխել պատկերը և թյուրիմացություններ առաջացնել:

Եզրակացություն. Հայաստանում ժողովրդագրական վիճակի բարելավման հիմնական քաղաքականությունը.

Ներկայացված կանխատեսման և դրա բովանդակային մեկնաբանությունից բխում է, որ.

- **Կարճատև և միջնաժամկետ (մինչև 10 տարի) հեռանկարում Հայաստանում ժողովրդագրական վիճակի էական բարելավման միակ արդյունավետ քաղաքականությունը ներգաղթի կազմակերպումն ու իրականացումն է:**

Այս տեսակետից հարկ է նշել, որ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամում իրականացվել են այդպիսի քաղաքականությունների փորձի ուսումնասիրություններ, որոնք հրապարակված են մի շարք աշխատանքներում (այդ թվում՝ Վերանյան Կ., «Հայրենադարձության կազմակերպման մեխանիզմները (Իսրայելական փորձից)» [5] և Կ.Վերանյան. «Իսրայելի քաղաքականության վերաբերյալ» [6] մենագրությունում:

Հայաստանի ներկա վիճակում ժամանակի հրամայականն է խորացնել այդ ուսումնասիրությունների ուղղությունը՝ որպես դրանց արդյունք ակնկալելով Հայաստան ներգաղթի քաղաքականության մշակումը:

Հարկ է հատուկ նշել, որ ներկայացված դրույթը ոչ մի դեպքում չի հակադրվում Հայաստանում ծնելիության բարձրացմանն ուղղված քաղաքականությանը, որը, մեր խորին համոզմամբ, անվերապահորեն պետք է մնա պետական ուշադրության կենտրոնում և էլ ավելի հզորացվի ինչպես ֆինանսական հավելյալ ռեսուրսների ներգրավմամբ, այնպես էլ բարձրակարգ կիրառական հետազոտությունների արդյունքներով:

Հավելված. Կանխատեսման մեթոդաբանական պարզաբանումներ

Ժողովրդագրական պրոցեսների, այդ թվում նաև ծնունդների թվի դինամիկան, էականորեն կախված է բնակչության ժողովրդագրական, մասնավորապես սեռատարիքային կառուցվածքի բնութագրերից:

Ծնունդների թվի դինամիկայի դեպքում կառուցվածքային բնութագրերից հիմնարար նշանակություն ունեն կանանց տարիքային կառուցվածքը և ծնելիության տարիքային գործակիցները: Մահացության պրոցեսի հետևանքով կանանց տարիքային կառուցվածքը չի կարելի «ուղղակի տեղաշարժել» ժամանակային սանդղակում, այսինքն՝ չի կարելի համարել, որ, օրինակ, 20-24 տարեկան կանանց թվաքանակը 5 տարի հետո կվերածվի 25-29 տարեկան կանանց թվաքանակին: Վերջինս կլինի ավելի փոքր, իսկ այդ նվազումը կախված կլինի կանանց մահացության տարիքային գործակիցներից, տվյալ դեպքում՝ 20-24 տարեկանների մահացության գործակիցից: Հետևաբար, կանխատեսման համար անհրաժեշտ է կիրառել նաև կանանց մահացության տարիքային գործակիցներն այն բոլոր տարիքային խմբերի համար, որոնք կանխատեսման ժամանակահատվածում գոնե 1 տարի կլինեն կանանց ծնելիության տարիքային միջակայքում՝ 15-49 տարեկան:

ՀՀ ԱՎԾ-ն հաղորդում է ամբողջ բնակչության մահացության տարիքային գործակիցները՝ 5-ամյա կտրվածքով: Այդ պատճառով, կանխատեսման ժամանակ կանանց մահացության տարիքային գործակիցի փոխարեն կիրառվել են բնակչության մահացության տարիքային գործակիցները: Այս կապակցությամբ նշենք, որ տղամարդկանց և կանանց մահացության տարիքային գործակիցները, մնացած հավասար պայմաններում (մասնավորապես ինտենսիվ պատերազմի բացակայության դեպքում), էապես տարբերվում են մանկական տարիքում՝ մինչև 5 տարեկան, և ավագ տարիքում՝ 55 և ավելի տարեկանից սկսած:

Բացի դրանից, չնայած դանդաղ, սակայն փոփոխվում են նաև ծնելիության տարիքային գործակիցները: Դրանց փոփոխությունն արդեն ոչ թե ժողովրդագրական, այլ առավելապես մշակութային և սոցիալ-տնտեսական գործոնների հետևանք է [7]: Ենթադրելով, որ կանխատեսման ժամանակահատվածում՝ 4 տարի, տեղի չեն ունենա սոցիալական կամ տնտեսական աղետներ, իսկ մշակութային փոփոխություններն ունեն մեծ իներցիա, ենթադրվել է, որ թույլատրելի է կանխատեսման ժամանակահատվածի համար ծնելիության տարիքային գործակիցները համարել հաստատուն: Կանխատեսման համար կիրառվել են հողվածը գրելիս վերջին հասանելի տվյալները՝ 2015թ. գործակիցները [8]:

Ծնունդների կանխատեսման համար օգտագործված տվյալները, միջանկյալ կանխատեսված տվյալները և հաշվարկների կառուցվածքը ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Կանխատեսման տվյալները, հաշվարկները և հաշվարկների կառուցվածքը

1	B	C	D	E	F	G	H	I
2			2015	2016	2017	2018	2019	2020
3		Ցնվածները, փաստ, ԳԳԱՎԾ	41,763	40,638	-	-	-	-
4		Ցնվածներ՝ կանխատեսումով	41,751	40,682	99,626	98,609	37,647	36,759
5		Ցնված և ղշիկներն են կանխատեսումով	19,623	19,121	18,624	18,146	17,694	17,274
8	ASFR Կենդանության տարիքային գործակիցը	15-19	24.3	24.3	24.3	24.3	24.3	24.3
9		20-24	118.4	118.4	118.4	118.4	118.4	118.4
10		25-29	102.8	102.8	102.8	102.8	102.8	102.8
11		30-34	56.2	56.2	56.2	56.2	56.2	56.2
12		35-39	22.7	22.7	22.7	22.7	22.7	22.7
13		40-44	4.2	4.2	4.2	4.2	4.2	4.2
14		45-49	0.3	0.3	0.3	0.3	0.3	0.3
15	Կանանց միջին քանակը՝	0-4	97,908	97,610	96,875	95,796	94,460	92,946
16		5-9	94,487	94,943	95,249	95,348	95,213	94,841
17		10-14	80,930	83,600	85,827	87,669	89,162	90,329
18		15-19	87,894	86,457	85,841	85,794	86,124	86,686
19		20-24	124,116	116,777	110,622	105,579	101,537	98,371
20		25-29	142,904	139,003	134,421	129,531	124,615	119,878
21		30-34	131,204	133,374	134,331	134,183	133,089	131,234
22		35-39	107,147	111,751	115,861	119,337	122,084	124,061
23		40-44	94,173	96,466	99,211	102,220	105,312	108,326
24		45-49	94,174	93,663	93,710	94,290	95,346	96,800
25		50-54	116,866	111,409	106,969	103,446	100,759	98,829
26		55-59	115,444	114,189	112,135	109,646	106,988	104,361
27		60-64	86,471	90,207	92,914	94,656	95,555	95,757
28		65-69	59,164	62,292	65,430	68,885	71,018	73,242
29	70-74	36,857	37,640	38,771	40,160	41,707	43,313	
30	75-79	54,269	47,890	42,881	39,012	36,085	33,931	
31	80+	46,485	48,042	48,011	46,985	45,391	43,529	
32	ԳԳ՝ Մահացության տարիքային գործակիցներ՝ ամբողջ բնակչություն	0-1	8.9	8.9	8.9	8.9	8.9	8.9
33		0-4	2.1	2.1	2.1	2.1	2.1	2.1
34		5-9	0.3	0.3	0.3	0.3	0.3	0.3
35		10-14	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2
36		15-19	0.4	0.4	0.4	0.4	0.4	0.4
37		20-24	0.6	0.6	0.6	0.6	0.6	0.6
38		25-29	0.6	0.6	0.6	0.6	0.6	0.6
39		30-34	0.8	0.8	0.8	0.8	0.8	0.8
40		35-39	1.2	1.2	1.2	1.2	1.2	1.2
41		40-44	2.3	2.3	2.3	2.3	2.3	2.3
42		45-49	3.9	3.9	3.9	3.9	3.9	3.9
43	50-54	5.9	5.9	5.9	5.9	5.9	5.9	
44	55-59	9.2	9.2	9.2	9.2	9.2	9.2	
45	60-64	14.4	14.4	14.4	14.4	14.4	14.4	
46	65-69	23.0	23.0	23.0	23.0	23.0	23.0	
47	70+	78.6	78.6	78.6	78.6	78.6	78.6	

Աղյուսակի վերևի հատվածում տրված են ծնունդների կանխատեսումները (կարմիր գույնի տառատեսակներով): Ծնված աղջիկների կանխատեսումն իրականացվել է ծնվածների թվաքանակը բազմապատկելով 0.47 գործակցով, որը Հայաստանում սեռերի հարաբերությունն է ծնվելիս [8]:

Աղյուսակի երկրորդ՝ դեղին հատվածում տրված են Հայաստանում ծնելիության տարիքային գործակիցները Հայաստանում 2015թ. ըստ ՀՀ

ԱՎԾ տվյալների [8]: Այս ենթաաղյուսակի սյունակների տվյալները նույնն են, քանի որ ենթաղրվել է, որ կանխատեսման ժամանակահատվածում դրանք հաստատուն են:

Երրորդ՝ կանաչ ենթաաղյուսակում տրված են կանանց տարիքային բաշխումների կանխատեսումները 2016-2020թթ. համար (միջանկյալ կանխատեսումներ) Հայաստանում: Դրանք հաշվարկված են՝ հիմք ընդունելով 2015թ. ՀՀ ԱՎԾ տվյալները: 2016թ. բաշխումները հողվածի գրման ժամանակահատվածում (2017թ. մարտ) ՀՀ ԱՎԾ-ն դեռ չէր հրապարակել:

Չորրորդ՝ կապույտ ենթաաղյուսակում տրված են Հայաստանի բնակչության (տղամարդիկ և կանայք) մահացության տարիքային գործակիցները 2015թ. համար ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների [8]:

Կապույտ սլաքները ցույց են տալիս, թե տվյալ կանխատեսված տվյալի համար ո՞ր տվյալներն են կիրառվել: Սլաքի վերջը (→) ցույց է տալիս կանխատեսված տվյալը, իսկ սլաքի սկիզբը՝ (×) այն տվյալները, որոնք կիրառվել են կանխատեսման համար:

Հաշվարկային բանաձևերը

Խուսափելու համար երկար և ընկալման բարդություններ առաջացնող բացատրություններից՝ ստորև հաշվարկային բանաձևերը ներկայացված են *Excel* ֆունկցիաների տեսքով, որոնք կիրառվել են Աղյուսակում սլաքի ծայրակետը պարունակող վանդակի տվյալի հաշվարկի համար: Նույն գույնի վանդակների հաշվարկային բանաձևերը ստացվում են՝ ներկայացված բանաձևերում փոխելով վանդակների հասցեները: Բացառություն է կազմում միայն կանաչ ենթաաղյուսակի առաջին տողը, որտեղ տրված են 0-4 տարեկանների թվաքանակի կանխատեսումները: Դրանց համար կիրառվում են ոչ միայն նախորդ տարվա սկզբում **արդեն** ծնված երեխաների թվաքանակները, այլև նախորդ **տարվա ընթացքում** ծնված երեխաների թվաքանակները (տրված են աղյուսակի վերևում «Ծնված աղջիկների կանխատեսում» տողում՝ կարմիր գույնի տառատեսակներով):

Բանաձևերի որոշակիության համար Աղյուսակում տրված են *Excel* էջի տողերի և սյուների համարակալումները:

Կանանց միջին թվաքանակի կանխատեսում. 0-4 տարեկանների խումբը՝ 95,796 տվյալը պարունակող G15 վանդակի հաշվարկային բանաձևն է.

$$G15 = F15+F5 - F15/5 - F5*F32/1000 - (F15-F15/5)*F33/1000$$

Կանանց միջին թվաքանակի կանխատեսում մնացած տարիքային խմբերի համար. 86,124 տվյալը պարունակող՝ H18 վանդակի հաշվարկային բանաձևն է.

$$H18 = G18+G17/5 - G18/5 - G17*G35/1000 - (G18-G18/5)*G36/1000$$

Օնվաճների թվաքանակի կանխատեսում՝ 41,751 տվյալը պարունակող D4 վանդակի հաշվարկային բանաձևն է.

$$D4 = \text{SUMPRODUCT}(D8:D14,D18:D24)/1000$$

Օնվաճ աղջիկների կանխատեսում. 19,121 տվյալը պարունակող E5 վանդակի հաշվարկային բանաձևն է.

$$E5=E4*0.47:$$

Մարտ, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Հարությունյան Գ.Ա., Մանուկյան Ս.Ա.,* Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի վրա ազդող գործոնների ուսումնասիրություն (հետազոտական ծրագիր), ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՄԱԿ Բնակչության հիմնադրամ, «Նորավանք» ԳԿՀ, Երևան, 2014թ., 218 էջ:
2. *Манукян С.А.,* Промышленное развитие как фактор улучшения демографической ситуации и ее тенденций в Армении / 21-й ВЕК, информационно-аналитический журнал, 1 (34), 2015, сс. 16-28.
3. *Մանուկյան Ս.Ա.,* Հայաստանում արտագաղթի դիրքորոշումների դինամիկան 2012-2015թթ. // «21-րդ ԴԱԸ», 5 (69), 2016, էջ 25-39:
4. *Մանուկյան Ս.Ա.,* Արժեքային համակարգը որպես բնակչության բնական աճը խթանող գործոն // «21-րդ ԴԱԸ», 2 (72), 2017 կամ «21-րդ ԴԱԸ», 3 (73), 2017:
5. *Վերանյան Կ.,* Հայրենադարձության կազմակերպման մեխանիզմները (Իսրայելական փորձից), / «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 11-12, 2014:
6. Իսրայելի քաղաքականության վերաբերյալ / *Կ.Վերանյան,* Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2016, 224 էջ:
7. *Մանուկյան Ս.Ա.,* Արժեքային համակարգը որպես բնակչության բնական աճը խթանող գործոն // «21-րդ ԴԱԸ», 2 (72), 2017 կամ «21-րդ ԴԱԸ», 3 (73), 2017:
8. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2016, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն:
9. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, 2017, էջ 131:

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2017-2020ԹԹ.
ԾՆՈՒՆԴՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Մամվել Մանուկյան

Ամփոփագիր

Հոդվածում ներկայացված է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների և ժողովրդագրական կանխատեսման մեթոդների կիրառմամբ իրականացված` Հայաստանում 2017-2020թթ. կենդանի ծնունդների կանխատեսումը:

**ПРОНОЗ ПО ПОКАЗАТЕЛЯМ
РОЖДАЕМОСТИ В АРМЕНИИ В 2017-2020ГГ.**

Самвел Манукян

Резюме

В статье представлен прогноз по показателям рождаемости в Армении в 2017-2020гг., осуществленный на основе данных Национальной статистической службы РА и методов демографического прогнозирования.

A FORECAST OF BIRTHRATES IN ARMENIA FOR 2017-2020

Samvel Manukyan

Resume

The article presents a forecast of live birthrates in Armenia for 2017-2020, based on data from the Republic of Armenia National Statistical Service and methods of demographic forecasting.

**ՀԱՂԹԱՆԱԿ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ
ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ
(Ինչպես է աշխատում օբյեկտիվ գործիքանին սուբյեկտիվ հիմքի վրա)**

Գեորգի Պոչեպցով

Բանալի բառեր՝ տվյալների շտեմարան, զանգվածային սուբյեկտներ, ազդեցության քարոզարշավներ, տեղեկատվական ռազմավարություն:

Հումանիտար գիտությունները դասում են սուբյեկտիվ բնույթի գիտությունների շարքին, համենայնդեպս՝ բնական գիտությունների հետ համեմատության մեջ դրանք առաջարկում են իրենց արդյունքը, որը կարող է չհամընկնել նման այլ սուբյեկտիվ վերլուծության արդյունքի հետ, որը կատարվել է ուրիշ գիտնականի համակարգչով: Սակայն վերջին քարոզչությունները, որոնք ձեռք են բերվել *big data*-ներին դիմելու օգնությամբ, վկայում են այն մասին, որ սուբյեկտիվ գիտելիքները կարող են օբյեկտիվ արդյունքներ բերել, երբ դրանք դառնում են ներգործության քարոզչաբազա:

Ստացվում է, որ զանգվածային սուբյեկտներին դիմելը՝ սուբյեկտիվ գործիքանու օգնությամբ, կարող է հանգեցնել օբյեկտիվ արդյունքների: Եվ դա միայն Թրամփի ընտրությունները չեն կամ էլ Մեծ Բրիտանիայի ելքը ԵՄ-ից (մանրամասն տե՛ս 1-9)), երբ ստեղծվում էին բարդ կլաստերներ, որոնք արտացոլում էին մարդկանց սուբյեկտիվ կարծիքները սոցիոմետրիկ ցուցանիշների օգնությամբ, բայց անգամ այնպիսի սուբյեկտիվ գործիքանու օգտագործման պարզ օրինակը, ինչպիսին է լրագրությունը, ավելի ճիշտ՝ տեղեկատվական գործիքանու օգտագործումը, որն ունեն ոչ միայն լրագրողները, այլև քաղաքական գործիչները, արդեն երկու անգամ հանգեցրել է իշխանափոխության Ուկրաինայում: Զանգվածային գիտակցությանը հասցված տեղեկատվական «հարվածին» այդ պահին իշխանություն ունեցողները չկարողացան դիմանալ: Կարելի է ասել, որ սուբյեկտիվ ուժերն ավելի հզոր գտնվեցին օբյեկտիվներից:

* Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ֆեյսբուքը դարձավ լավ բազա նման կարգի տեղեկատվության հավաքման համար՝ մեկնակետ ունենալով օգտատերերի «լայքերն» ու էլեկտրոնային այլ նշումները [10-13]: Ընդ որում՝ Թերեզա Մեյի էլոյթների վերլուծությունը ևս՝ Քեմբրիջի համալսարանի հոգեչափական կենտրոնի մեթոդաբանության հիման վրա, ցույց է տալիս, որ նրա առաջին հազար բառերը տալիս են 67% վարկանիշ բացության բնութագրիչով, նրան մատուցելով որպես «լիբերալ և արտիստիկ», այլ ոչ թե «կոնսերվատիվ և ավանդապաշտ» գործիչ, ինչն, իհարկե, տարօրինակ է պահպանողական կուսակցության առաջնորդի համար: Նա տարօրինակ վարչապետ չի թվում (99%) [14-15]:

Միխալ Կոսիևսկին, որը սուբյեկտիվ նյութը օբյեկտիվի փոխարկման մոտեցման ստեղծողներից է (նրա կայքն է՝ // www.michalkosinski.com/home/Press), ասում է. «Մարդիկ չեն հասկանում, որ այն ինֆորմացիան, որով մենք հաճույքով կիսվում ենք, ավելի քան բավական է լավ ալգորիթմի համար, իսկ ալգորիթմերը շտապ լավն են դառնում, եթե բացում եք ձեր անձնական բնութագրերը, որոնց մասին դուք, հնարավոր է, չէիք ցանկանում բարձրաձայնել, ինչպես ձեր քաղաքական հայացքները, կրոնը, անձը, IQ-ն, սեռական կողմնորոշումը և այլն»: Նա ընդգծում է, որ մեր ապագայում այլևս չի լինելու գաղտնիություն, որ մշակույթը, հասարակությունը, օրենքները պետք է պատրաստվեն հետանձնային (*пост-приватный*) ապագայի: Այնպես որ, հետձմարտությունից հետո մեզ սպասվում է նաև հետանձնայինը (հետմասնավորը):

2015թ. տված հարցազրույցում նա նոր ալգորիթմերի ավելի ցնցող հնարավորություններ է բացահայտում, երբ «լայքերի» հիման վրա կարելի է կանխատեսել, թե արդյոք ամուսնալուծված եղել են ձեր ծնողները: Նա ասում է. «Կան բազմաթիվ այլ անձնային բնութագրեր, որոնք նույնպես կանխատեսելի են ձեր էլեկտրոնային «որոշումներից. ծխելը, ակոհոլը, թմրանյութերը, սեռական կողմնորոշումը, կրոնական և քաղաքական հայացքները և այլն: Իրականում այն ամենը, ինչը մենք ջանացել ենք կանխատեսել, որոշակի չափով ստացվում էր, և բավական հաճախ շատ ճիշտ էր» [16]:

Մ.Սիկորան, որը Թրամփին հաղթանակ էր գուշակել ընտրությունների օրվանից երեք շաբաթ առաջ՝ վերլուծության ենթարկելով Թվիթերը, աշխատում է *Emotive* համակարգով (համակարգի կայքը՝ emotive.systems/how.html), որի օգնությամբ նրանք հույզեր են «կորզում» սոցիալական ցանցերից [17]: Ի դեպ, Թրամփի հաղթանակը նրանք կանխատեսել էին ոչ թե սոցիալականների, այլ արտահայտվող հույզերի հիման վրա: *Emotive* համակարգը ստեղծվել է 2013թ.՝ մշտադիտարկելու համար սոցիալական ան-

կարգությունների հնարավորությունը 2011թ. հուզումներից հետո, պաշտպանության նախարարության փողերով: Համակարգը կառուցված է լեզվաբանական վերլուծության վրա՝ հույզեր արտահայտող բառերի և արտահայտությունների որոնման համար: Բառարաններ են կազմվել բրիտանական, ամերիկյան և կանադական անգլերենի համար, որպեսզի հաշվի առնվի յուրաքանչյուր երկրի սլենգը:

Մ.Սիկորան ասում է. «*Եթե ուզում եք, սա բառերի քարտեզ է: Մենք կարող ենք վերլուծել հաղորդման նշանակությունը փոքր-ինչ ավելի բովանդակալից, քան զուտ ստատիկ մոտեցումները*»: Նրանք իրենց համակարգը կապեցին ազգային անվտանգության պահանջմունքների հետ [18-19]: *Emotive*-ը մշակում է 2000 թվիթ մեկ վայրկյանում՝ ստացված ինֆորմացիան բաշխելով ըստ հույզերի ութ տեսակների [20]:

Մրանք այս մոտեցման առավել ցայտուն հնարավորություններն են, որոնք թույլ են տալիս լուծել, ինչպես մի ժամանակ ասում էին, կարևոր գիտատեխնիկական խնդիրներ: *Big data* ոլորտի առաջատար մասնագետ Ա.Փենթենդն իր գրքում այսպիսի կարծիք է հայտնում, որ մեկ մարդու վարքագիծը գուշակելը դժվար է, բայց մարդկանց զանգվածի վարքը գուշակելը՝ դյուրին [21]: Իսկ ի՞նչ է անում գովազդը. չէ՞ որ դա նույնպես հավանական գործընթաց է, երբ մարդկանց որոշակի քանակություն իր հիշողության մեջ պահում է բրենդը, և երբ գնելու ժամանակը գալիս է, այդ բրենդը «արթնանում» է հիշողության մեջ՝ ստիպելով մեզ գնել: Հարցը միայն այն է, թե ինչ մեթոդներով «կանգնեցնել» սպառողի ուշադրությունը:

Ամենակարևորն այն է, որ փորձ է արվում միավորել հումանիտար և բնական մոտեցումները մեկ գործիքանու մեջ: Դա համահունչ է նաև այն կարծիքին, որ ապագայում հումանիտար տեխնոլոգիաների դերը լուր աճելու է (տե՛ս, օրինակ, [22-23]):

Հումանիտար և բնական մոտեցումները միավորող նման մոտեցման նոր ներկայացուցիչն է դարձել Թալերի և Մանսթեյնի մղման (*nudge*) համակարգը [24-28]: Նրանց գիրքն այնպիսի ընդունելության արժանացավ, որ հեղինակներն անմիջապես աշխատանքի անցան կառավարություններում. Թալերը՝ բրիտանական, Մանսթեյնը՝ Օբամայի վարչակազմում: Այս մոտեցման մեկ այլ անվանումն է ընտրության ճարտարապետություն. ստեղծվող ընտրությունը պետք է մարդուն տանի դեպի ճիշտ ընտրություն:

Սա մարդու բնականության վրա ոչ թե ուղղակի, այլ անուղղակի ազդեցություն է: Իսկ նախորդ մոտեցումների հետ ընդհանուրն այն է, որ գտնվում են մարդուն որոշակի արարքի մղող անցման-մոտիվացիայի՝

առաջին հայացքից անտեսանելի ուղիներ: Դա կարող է լինել որոշակի կուսակցության, վարքագծի առավել առողջ տեսակի, հանրաքվեի ժամանակ այս կամ այն ընտրության համար քվեարկելու որոշումը:

Չանգվածային գիտակցությունն ասես «նոսր» տարածք է, որտեղ յուրաքանչյուր տարրի հատկությունները տարբեր են, ուստի դժվար է հասկանալ ամբողջի վարքագիծը: Այդ ժամանակ մասնագետները «խտացման» նման գործընթացն իրենք են անում՝ ստեղծելով օբյեկտի, օրինակ՝ գովազդ անողի անհրաժեշտ տիպը, այդ անորոշ տարրերը մեկտեղում են ըստ ինչ-որ բնութագրի, երբ գովազդատուին ասում են, որ այդ ֆիլմը երեքշաբթի և չորեքշաբթի օրերին, ժամը 18.00-ին դիտելու են 60-ից բարձր տարիքի կանայք: Նրանք հավաքում են միանման տարրերը՝ արդյունքում ձևավորելով միասնական կանխատեսելի վարքագծով կառուցվածք:

Եվս մեկ տարբերակ է «նոսրի» փոխարինումն արհեստականորեն ստեղծված ամբողջով, ինչը մենք տեսնում ենք փափուկ ուժի օգտագործման պարագայում (Ջ.Նայ) [29]: Դրա հերթական օրինակը դարձավ Հարավային Կորեան: Ի դեպ, այս նոր Կորեան կարողացավ երեք տարի շուտ վերադարձնել ԱՄՆ \$56 մլրդ-ն: Իսկ ինչ վերաբերում է նրա կերպարին, նրա արհեստական փոխարինիչին, ապա *Times Literary Supplement*-ը գրում է. «Կորեան այլևս այն երկիրը չէ, որն արևմտյան մարդու համար ասոցացվում է «պատերազմի, դիկտատորության, արցունքաբեր գազի, Դարթ Վադերի հագուստով ոստիկանության, ՄԷՇ հոսպիտալի, շներին որպես կերակուր օգտագործելու, օլիմպիադայի հետ» [30]: Ի՞նչ է արթնանում մեր հիշողության մեջ Հարավային Կորեա ասելիս: Առաջին տեղում երկնաքերներն են, տեխնոլոգիաները, ճշմարտությունը և դատավարություններն ընդդեմ բարձրաստիճան պաշտոնյաների, ինչը նույնպես, միննույն է, ուրախացնում է: Այսինքն՝ բոլոր մեսիջները կրում են սկզբունքորեն դրական բնույթ:

Դ.Դոնդուրելը շատ է գրել փափուկ ուժի այլ կերպ իրագործման իմաստների կառուցման մասին՝ դրանց աշխատանքով բացատրելով ռուսաստանյան արդի զանգվածային գիտակցության և մտածողության առանձնահատկությունները [31]: Մենք այստեղ հավելել ենք «զանգվածային մտածողություն» եզրը, քանի որ շատ հաճախ որոշումների անհրաժեշտ տեսակներն ընդունում է ինքը՝ ինֆորմացիան սպառողը, անգամ այն ժամանակ, երբ դրանք նրան ուղղակի տեսքով չեն առաջարկում: Ինչպես մղման մեթոդաբանությունում, երբ քո առջև ընտրություն են կատարում, որը ստիպում է քեզ որոշում ընդունել: Բայց այդ որոշումը մարդն ինքն է ընդունում:

Դոնդուրեյը գրել է. «Մենք հստակ զգում ենք այն անտեսանելի իմաստակերտիչ ուժը, որն անընդհատ որոշում է՝ մեր փոխարեն, մեզ համար, այն, թե, մեր տարածքից նայելով, ինչ տեսք ունի մեզ շրջապատող աշխարհը: Քրտնաջան կառուցելով բացատրական սխեմաների, արժեքային գերակայությունների, բարոյական ռուբրիկացիաների շինությունը, որտեղ տեղավորվում է մինչ այդ արդեն ձևաչափված ամբողջ ինֆորմացիան իրականության մասին: Չէ՞ որ մենք, հեռուստացույցից բացի, չենք տեսնում այն տեղերը, որոնցում տեղի է ունենում ամենօրյա այն իրադարձությունների բովանդակային մշակումը, որոնց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պետք է արձագանքի ողջ երկիրը»:

Նույնը տեղի է ունենում նաև արևմտյան մարդու հետ: Սերգեյ Պերելեյեզինն ասում է հետևյալը. «Այնպիսի հասկացություններ, ինչպիսին են «շուկան», «մոնետարիզմը», «հեղինակային կապիտալը», «կայուն զարգացումը», «կանաչ քաղաքները», «հանդուրժողականությունը», «սեռական փոքրամասնությունների իրավունքները», «էկոլոգիական գիտակցությունը», «գլոբալ ջերմացումը», աստիճանաբար անցնում են հնացած հոռտորաբանության շարքը: Այդ բոլոր տրենդները միայն մեկ ֆունկցիա են ունեցել՝ հանրային գիտակցության կառավարում կայուն համաշխարհային կարգի ապահովման համար: Այդ բառերն աշխատում էին 1990-2000-ական թթ.: Այժմ հասարակությանը նոր բառեր են առաջարկվում: Այսօր արևմտյան էլիտաների քաղաքական կոնսենսուս դարձավ վեցերորդ տեխնոլոգիական կարգը, քանի որ դրանց համար իդեոլոգեմները քաղաքականության խտացված շարադրանք են» [32]:

Այստեղից էլ ծագում է տարօրինակ մի եզրահանգում. ամեն բան (կրոն և գաղափարախոսություն, տնտեսություն և, հասկանալի է, քաղաքականություն, գրականություն և արվեստ) ուղղված է գերիշխող ուժի կայունացմանը: Ըստ էության, վաղուց այսպես էր գրում Անտոնիո Գրամշին՝ այդ երևույթի նկարագրման համար մտցնելով հեզեմոնիա եզրը: Կապիտալիզմը, նրա կարծիքով, պահում է ենթակա դասերի համաձայնությունը վերնաշենքի օգնությամբ, այսինքն՝ խոսքը ոչ այնքան հարկադրման մասին է՝ որպես ինքնակամ համաձայնության:

Իրականությունը հեռուստատեսային ընկալմամբ հասկանալու սովորությունն ընկած է այն բանի հիմքում, որ մարդկանց տալիս են պատրաստի մտածական կոնստրուկտներ, միևնույն ժամանակ՝ աշխարհի պատկերում որպես ամենակարևոր մեկնակետ են ունենում՝ ո՞վ է թշնամի և ո՞վ՝

բարեկամ: Զանգվածային գիտակցությունը, նման կոորդինատներ ստանալով, արդեն կարող է ինքն էլ գնահատական տալ տեղի ունեցողին, բայց հեռուստատեսությունը, միևնույն է, նրան օգնում է այդ հարցում:

Վերադառնանք մեր դատողությունների սկզբնակետին: Մեր առջև է գանգվածային գիտակցությունը՝ որպես չկառուցակցված, ազդեցությանը դժվար տրվող օբյեկտ: Ձևակերպենք սա հետևյալ կերպ. օբյեկտիվ գործիքանիով գանգվածային հարվածը սուբյեկտիվությանը հանգեցնում է օբյեկտիվ արդյունքների, քանի որ բազմաթիվ սուբյեկտիվություններ հավաքվում են օբյեկտիվ միասնության մեջ, որի վրա արդեն կարելի է ազդել օբյեկտիվ մեթոդներով:

1937 թվականը խորհրդային պատմության մեջ նույնպես այդպիսի օրինակ է, թե ինչպես սուբյեկտիվ վարքը կարող է էապես օբյեկտիվացվել և դառնալ կանխատեսելի: Երեսուներթի բռնաճնշումները փոխեցին ինչպես այդ իրադարձությունների վկաներին, այնպես էլ պահպանվեցին որպես տրավմա անգամ սերունդներ հետո: Մարդն սկսում է իրեն առավելագույնս զգույշ պահել՝ դրանով իսկ մեծացնելով ճիշտ պահվածքի տարածքը: Պայմանականորեն ասած՝ Ստալինին ասող երկու մարդ միմյանց հետ խոսելիս Ստալինին գովաբանելու են, որպեսզի մատնության օբյեկտ չդառնան: Մա տրավմայի՝ վարքը կանխորոշող նույնպիսի տեսակ է, ինչպիսին էր սեպտեմբերի 11-ը, որը հնարավորություն տվեց փոխել աշխարհի կառուցվածքը՝ դրանում թշնամու նոր տեսակ մտցնելով:

Մենք շատ հնազանդ ենք, ինչին հասնելու համար իշխանությունը կիրառում է ոչ այնքան շատ ուժ, ինչպես կարող է թվալ: Օրինակ, փորձերը ցույց են տալիս, որ մարդը, գտնվելով սոցիալական միջավայրում, պակաս կտրուկ վերաբերմունք ունի ստացվող ինֆորմացիայի հանդեպ [33]: Այսինքն՝ սոցիալականը ծնում է համաձայնություն մատուցվող ինֆորմացիայի հետ:

Ֆրանկֆուրտյան դպրոցին նույնպես հետաքրքրել է հնազանդության և կոնֆորմիզմի ծագումը: Հորքհայմերը և Ադորնոն իրենց «Լուսավորության դիալեկտիկա»-ում նշում են հետևյալը [34]. *«Հեռախոսից դեպի ռադիոն մի քայլ առաջը հանգեցրեց դերերի հստակ բաշխմանը: Առաջինը դեռևս թույլ էր տալիս իրենից օգտվողներին լիբերալ կերպով խաղալ սուբյեկտի դեր: Երկրորդը դեմոկրատաբար բոլորին նույն կերպով վերածում է լսողների, որպեսզի միանգամայն ավտորիտար ձևով նրանց հանձնի տարբեր կայանների՝ միմյանց միջև կատարելապես նույնական ծրագրերի իշխանությանը»:*

«Ոչ մի բանի հետ հաշվի չնստող կինոարդյունաբերության միասնությունը սպասվող միասնության նախակարապետն է քաղաքականությունում: Մշտապես ընդգծվող տարբերությունները, ինչպիսին են, օրինակ, Ա և Բ կատեգորիաների ֆիլմերի կամ ամսագրերի հրապարակումներում գների տարբեր մակարդակների միջև տարբերությունները, ծնվում են ոչ այնքան գործի էությունից, որքան ծառայում են սպառողի դասակարգման, կազմակերպման և հաշվառման խնդրին: Այստեղ բոլորի համար ինչ-որ բան նախատեսված է ստացվում նրա համար, որպեսզի ոչ ոք չկարողանա «պլստալ», տարբերությունները սերմանվում և քարոզվում են: Հանրության՝ որակների սերիական արտադրության հիերարխիայով ապահովումը նպաստում է ավելի ու ավելի համապարփակ քվանտիֆիկացիային: Իբր ինքնաբուխ ամեն մեկը պետք է իրեն պահի ինդեքսիկացիայի միջոցով նախապես սահմանվող իր «մակարդակին» համապատասխան և գործունենա զանգվածային արտադրանքների այն կատեգորիաների հետ, որոնք արտադրվում են հատուկ իր տեսակի համար: Որպես վիճակագրական նյութ սպառողները հետազոտական ատյանների (որոնք արդեն ոչնչով չեն տարբերվում քարոզչական ատյաններից) աշխարհագրական քարտեզի վրա բաժանվում են խմբերի ըստ իրենց եկամտի՝ ձևավորելով կարմիր, կանաչ և կապույտ դաշտեր»:

«Ողջ աշխարհը դառնում է մշակութային արդյունաբերության գոտիչի միջով անցած: Կինոդիտողի լավ հայտնի զգացողությունը, որը փողոցը, որտեղ գտնվում է կինոթատրոնը, ընկալում է որպես հենց նոր ավարտված տեսարանի շարունակություն հենց այն պատճառով, որ վերջինը միշտ կողմնորոշված է աշխարհի սովորական ընկալման ճշգրիտ վերարտադրմանը, դառնում է արտադրական պրոցեսի ուղեցույց: Որքան ավելի խիտ և համատարած է ստացվում այն իրականացնող տեխնիկաների կողմից էմպիրիկ առարկայականության երկակիացումը, այնքան ավելի հեշտ է հաջողվում այսօր այն պատրանքի հաստատումը, որ արտաքին աշխարհը լոկ այն բանի անմիջական շարունակությունն է, որի հետ ծանոթանալուն «բերում» են կինոթատրոնում: Կայծակնային արագությամբ տեղի ունեցածը ձայնային կինոյում ներդնելու պահից իրականության մեխանիկական բազմապատկումը լրիվ և ամբողջովին սկսում է սպասարկել այդ մտահղացմանը: Այս միտմանը համապատասխան՝ իրական կյանքին այլևս թույլ չի տրվում որևէ բանում տարբերվել ձայնային ֆիլմից»:

Ընկեր Ստալինը դա վաղուց էր հասկացել և գրեթե անձամբ էր զբաղվում ակնկալվող քարոզչական գլուխգործոցների խմբագրական աշխատանքով: Ֆիլմը ստեղծում է իրականության իդեալական պատկերը: Իսկ նման իդեալի առկայությունը գաղափարախոսություն է զանգվածների համար: Միայն թե գաղափարախոսության այս տեսակի մեջ կողավորումն ուրիշ է: Սովորական գաղափարախոսությունում կգրվի «մարդ», իսկ դրանում՝ «Պյոտր», սովորական գաղափարախոսության միջի բանվորը կդառնա աշխատանքի հարվածային, թշնամին կունենա Ադոլֆ կամ Ալբերտ անունը: Ի դեպ, Գերման Տիտովն աշխարհում առաջին տիեզերագնացը չդարձավ իր անվան պատճառով, նրա փոխարեն ուղարկեցին Յուրի Գագարինին:

Այս գաղափարախոսությունը կողազերծվում է անմիջապես փողոցի, այլ ոչ թե քաղաքական գործիչների կամ գիտնականների կողմից, դա ուղղակի ներգործության գաղափարախոսություն է, որը գրքային մտահանգումների և հստակ ձևակերպումների կարիք չունի: Պուտինի Ռուսաստանը Սուրկովի օգնությամբ հասավ նախագահին աջակցության այդպիսի մակարդակի հենց այդ «ուղղակի» գաղափարախոսության պատճառով: Այն գալիս է նորությունների և կինոյի միջոցով, կողավորման նոր տեսակի օգնությամբ, որը տարբերվում է կրոնից և գաղափարախոսությունից:

Փ.Ռիկերը, հղում կատարելով Գիրցին [35], գաղափարախոսությունը տեսնում է երևակայելիի ոլորտում ([36-37], տե՛ս, ի դեպ, Ֆրանսիայի նորընտիր նախագահ Մակրոնի գործողությունների վերլուծությունը Ռիկերի տեսանկյունից, որի երկրպագուն է [38]): Ըստ Ռիկերի, առանց գաղափարախոսության չի կարելի ձևավորել ինքնություն, չի կարելի ինտեգրվել: Երևակայելիի ոլորտը հետաքրքիր է նաև Ալեքսանդր Դուգինի համար [39]:

Ֆրանկֆուրտյան դպրոցից բացի հնագանդության ասպեկտը հետաքրքրել է նաև մետրոպոլիայի գաղութներում աշխատող հոգեբաններին [40-42]: Է.Լինսթրամի «Կառավարելով ուղեղները» գրքի մասին գրախոսը գրում է. *«Կառավարելով ուղեղները» ընթերցողին տանում է հիմնականում մոռացված պատմության միջով, թե ինչպես Մեծ Բրիտանիան փորձում էր բարելավել կայսրության արդյունավետությունը և էֆեկտիվությունը «բանականության մասին նոր գիտությունների» օգնությամբ, որոնք լայն կատեգորիա էին ներկայացնում՝ ներառելով ինչպես անձի և խելքի թեստավորումը, այնպես էլ Յունզի և Ֆրեյդի տեսությունները: Ուզանդայից մինչև Հնդկաստան և Բիրմա կառավարական բյուրոկրատները, գիտնականները,*

միսիոներները և անթրոպոլոգներն օգտագործում էին թեստեր, որպեսզի հետազոտեն, ռացիոնալացնեն և վերահսկեն կայսրությունը» [43]:

Շատ հեղինակներ ընդգծում են, որ հոգեբանական թեստավորումը կոչված էր ապացուցելու գաղութացվող ժողովուրդների անբավարար զարգացումը, ինչն իր հերթին արդարացնում էր նրանց իբրև երեխաների վերաբերվելն ավագների կողմից, որոնց դերում հանդես են գալիս գաղութարարները:

Է.Լինսթրամն ասում է. *«Ինչպես և այլ տեխնոլոգիաները, որոնք աննկատ շարժվում են սահմանների միջով, հոգեբանության գործիքները հնարավոր դարձրին գլոբալ կառավարման հնարավոր կայսերական ամբիցիաները՝ խոստանալով անհրաժեշտ գիտելիքի ծնունդը բանվորների, ուսանողների, զինվորների, ապստամբների և գաղութացված այլ խմբերի մասին: Բայց այդ նույն տեխնիկաները կասկածի տակ դրեցին այն հիերարխիաները, որոնք ընկած էին բրիտանական կառավարման հիմքում և վեր են հանել բրիտանական արտասահմանում սոցիալական փոփոխությունների բրիտանական պլանների թուլությունը: Ինտելեկտուալների և պաշտոնական անձանց միջև փոխանակումների պատմությանը հետևելը հասկանալի է դարձնում, որ գիտության և կայսրության կոմբինացիան, որը Էդվարդ Մաիդն անվանել է «տրամաբանական դաշինք», եղել է աննշան փոխգործակցություն՝ նշված անվտանգությանը և թյուրըմբռնմամբ» [44]:*

Նման նախագծերից մեկն էլ երագների հավաքումն ու վերլուծությունն էր: Լոնդոնի Էկոնոմիկայի դպրոցի պրոֆեսոր Ջեյրզմանը երագահավաքությանը զբաղվում էր Նիգերիայում, Սուդանում, Ուգանդայում, Հնդկաստանում, Ավստրալիայում և Սոդոմոնյան կղզիներում: Մի կողմից՝ նման հսկայական նյութի կուտակումը ցույց տվեց դրա ադեկվատ իմաստավորման անհնարինությունը: Բայց մյուս կողմից այն ի հայտ բերեց ոչ այնքան հաճելի պատկեր. «սպիտակ մարդու» կերպարը վախի, նախանձի և ատելության բարդ զգացումներ էր առաջացնում գրեթե ամենուրեք, որտեղ եղել էին հետազոտողները: Բյուրոկրատները, միսիոներները, առևտրականները կայսերական սուբյեկտների երագներում հանդես էին գալիս որպես տիրաններ, որոնք դիմում էին բռնության, նախորդ տասնամյակների պատերազմի և նվաճման հիշողությունը բավական վառ էր: Բրիտանական պաշտոնական անձինք միաժամանակ շփոթված էին և անհանգստացած, որ իրենք եղել են ժողովրդական դժգոհության և դրա դեմ պայքարելու անհնարինության աղբյուր, քանի դեռ իրենք իշխանությունում են» ([45], տե՛ս նաև երագի անթրոպոլոգիայի վերաբերյալ արդի հետազո-

տությունները [46]): Ի դեպ, Զելիգմանն ասում էր, որ լուրջ հոգեկան հիվանդություններ չեն եղել Նոր Գվինեայում՝ մինչև «արևմտականացումը» (տե՛ս նաև քրիստոնեության և շիզոֆրենիայի [47], ինչպես նաև կրոնի և հոգեկան շեղումների [48] թեմայով հոդվածը):

Գոյություն ունի նաև հակառակ երևույթը. գաղութարար կողմը նույնպես հայտնվել է փսիխոզի ազդեցության տակ: Գրքի «Կայսրություններ և հույզեր» ներածական հոդվածում, որն ուսումնասիրում է գաղութատիրական ժամանակների վախերն ու խուճապները, փաստվում է հետևյալը. *«Ասիմետրիայի պարադոքսալ թվացող արդյունքներից մեկը, որոնք բնորոշ են գաղութային իրավիճակի համար, որը գաղութարարների ոչ մեծ մշակութային էլիտային դրել է հաճախ նրանց թվով գերազանցող տեղի բնակչության վրա ուժ գործադրելու դիրքում, եղել է այն փաստը, որ վախը, անհանգստությունը, թախիծը դառնում էին նրանց ամենօրյա փորձի մի մասը: Համենայնդեպս, այս առումով նշանակություն չունենք՝ արդյո՞ք նրանք բարձրաստիճան պաշտոնական անձինք էին, միսիոներներ, սովորական վերաբնակներ, թե՞ զինվորներ»* [49]:

Այս պատճառով հասկանալի է դառնում, որ գրականությունը, որը դուրս է եկել այն մարդկանց գրչի տակից, ովքեր եղել են այնտեղ, զուտ երևակայության արդյունք չէ: Ջորջ Օրուելը, որ ուներ Էրիկ Արթուր Բլեք անունը, քսանականներին ուստիկան էր Բիրմայում, Ջոզեֆ Կոնրադն իր «լորդ Ջիմին» վերցրել է կոնկրետ ուղևորությունից՝ Մինգապուրից Մեքքա ուխտավորների հետ 1880թ. կատարած ճամփորդությունից:

Սույն հիմնախնդրի կարևորությունն այն է, որ այն ազդում է զանգվածային գիտակցության վրա անգամ անցյալից՝ ներգործության ենթարկելով նաև հաջորդ սերնդին: Հետտրավմատիկ ախտանիշը, որն ունենում են զինվորականները, հավանաբար, կարող է լրացվել նաև երկրների հետտրավմատիկ ախտանիշով, որոնք դժվարությամբ են մշակում իրենց սեփական ինքնությունը:

Հետագոտողները շեշտում են այս երևույթի կարևորությունը՝ այն նշելով որպես բանականության գաղութացում. *«Գաղութացնողի և գաղութացվողի գերպարզեցված բինար հակադրումից հեռանալը հոգուտ ավելի հորիզոնական և ուղղահայաց սահմանագատման, չի կարող, սակայն, հերքել այն փաստը, որ գաղութատիրությունը երկարակյաց դրոշմ է թողել նախկին գաղութների վրա: Միատեսակ դրամատիկ, թեև տեսողաբար պակաս նկատելի էր, քան անտառների, հանքերի և գաղութային շենքերի անխնա օգտա-*

գործումը, բանականության գաղութացումը: Այդ արդյունքներն առավել ուժեղ էին քաղաքային բնակչության արտոնյալ հատվածում, քանի որ այդ մարդիկ առավել մեծ շփումներ ունեին գաղութարարների հետ» [50]:

Ի դեպ, այստեղից էլ հետևում է այսպես կոչված հետգաղութատիրական հետազոտությունների կարևորությունը, քանի որ արդի նման հասարակության որոշ պարամետրեր կարող են վերցված լինել անցյալից: Ընդ որում՝ ոչ ոք չի նկատում, որ դրանք «օտար» պարամետրեր են: Դրանք կարող են գալ ուրիշի կամ սեփական անցյալից, ներկայի ոչ ադեկվատ ընկալումից:

Գաղութային բժիշկներն իրենց աշխարհից բերեցին հայացքներ, որոնք չէին համապատասխանում իրականությանը: Օրինակ, ի հայտ եկավ մի հիվանդություն, որը վերագրվում էր տեղի բնակչությանը, որը կոչեցին տրոպիկական ներասթենիա:

Այսօր դրա մասին այսպես են գրում. «Բժշկական գրականության մեծ մասը տրոպիկական ներասթենիայի մասին կարող է ընթերցվել որպես բարոյական և ռասիստական դիսկուրս: Այն արտահայտում է երկյուղներ, որ անհատների շեղվող կամ ինքնաքայքայող վարքագիծը հանդիսանում է ռասայի այլասերման վաղ նախազգուշացնող ազդանշան: Սպիտակ մարդիկ գտնվում էին ռիսկի որոշակի աստիճանի ներքո, քանի որ շատ ժամանակ էին անցկացնում գաղութային առաջնագծում, ուղղակի շփման մեջ էին մերձարևադարձային միջավայրի և մարդկանց հետ, ինչը նրանց ավելի ընկալունակ էր դարձնում ալկոհոլիզմի, դեպրեսիայի և ներասթենիկ այլ հիվանդությունների հանդեպ» [51]:

Մենք դիկտատուրան հակադրում ենք դեմոկրատիային այն բանի հիման վրա, որ դիկտատուրայի պարագայում մեկ սուբյեկտությունը դառնում է նշանակալի բոլորի համար: Բայց դա բնութագրական գիծ է հասարակությունների բոլոր տարբերակների համար, որոնք աշխարհի միասնական պատկերի կարիք ունեն: Հավանաբար, դա գոյության ամենահարմարավետ տեսակն է, իսկ աշխարհի մյուս պատկերների բոլոր կրողներն անցնում են մարզինալ դիրքեր:

Եվ սա նորմ է ոչ միայն հին տեսակի հասարակությունների համար: Ա.Սոլնցևան, օրինակ, գրում է ռուսական զանգվածային գիտակցությունում Ղրիմի իմաստային ներկառուցման մասին. «Ղրիմի հետ կապված իրավիճակում Ռուսաստանի առաջնորդը ժողովրդի հետ կարևոր կոմպենսատորային գաղափար է կիսել. մեզ նվաստացնում են, իսկ մենք դիմադրում ենք: Մեզ նվաստացնում է Ուկրաինան, իսկ նրա միջոցով՝ Ամերիկան,

Արևմուտքը, լիբերալները, մասոնները, այսինքն՝ օտարները: Իսկ մենք յուրային ենք, հարազատ, այնպիսին, ինչպիսին կանք, ուզում ենք մնալ այնպիսին, ինչպիսին կանք և թքած ունենք ձեր օտար արժեքների վրա: Մի սովորեցրեք մեզ քիթը չքշփորել: Ձեր գործը չէ: Մենք ինքներս էլ գլուխ կհանենք: Այս դիրքորոշումը նրա հեղինակների համար անգամ անսպասելիորեն այնքան պոպուլյար և հուզականապես արդյունավետ եղավ, որ այն սկսեցին գործադրել անխնա: Ե՛վ հեռուստաշոուներում, և՛ քաղաքական առաջնորդների ելույթներում, ողջ հանրային ոլորտում: Կուրսը հստակ տրված է» [52]:

Այս կոնկրետ պարագայում մենք բախվում ենք աշխարհի ընկալման այն մոդելներին, որոնք արդեն եղել են զանգվածային գիտակցությունում: Ղրիմը պարզապես դարձավ ևս մեկ օրինակ արդեն գոյություն ունեցող կանոնի: Ստալինի կերպարի բարձրացումը զուգահեռաբար ընթանում է պետական ուղղահայացի ուժեղացման հետ: Այսինքն՝ մի բան ասելով՝ մենք միաժամանակ ակտիվացնում ենք մյուսը:

Այսօր սոցցանցերում հույզերի վերլուծություն շատերն են անում (տե՛ս, օրինակ, Ֆեյսբուքում ըստ լայքերի կախվածությունների (ալկոհոլային, նիկոտինային, թմրանյութերի) կանխատեսմանն ուղղված աշխատանքները [53]): Աշխատանքում կարելի է տեսնել ֆիլմեր և երաժշտական խմբեր, որոնց «լայքերը» ցույց են տալիս այս կամ այն կախվածության հետ կորելյացիան: Օրինակ, ֆիլմերի կամ խմբերի շարքում՝ ծիւելը և «Աղջամուղջը», ալկոհոլը և «Քաղցած խաղերը», թմրանյութերն ու «Դեփեշ մոդ» խումբը: Եվ սա վկայում է այն մասին, որ սուբյեկտիվությունը նոր կյանք է ստացել՝ դադարելով *terra incognita* լինել հետազոտողների համար:

Ինչպես տեսնում ենք, մեր ժամանակներում սուբյեկտիվ գործոնները դադարել են պատնեշ լինել զանգվածային գիտակցության վրա ներգործության համար: Ստացվել է հակառակը. նա, ով տիրում է սուբյեկտիվությանը, կարող է հասնել լավագույն օբյեկտիվ արդյունքների: Աշխարհը կրկին կորցրել է բարդությունը, քանի որ ալգորիթմերը տիրել են նրան:

Հունիս, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. The human fabric of the facebook pyramid // labs.rs/en/the-human-fabric-of-the-facebook-pyramid/

2. Mapping and quantifying political information warfare. Part 1, Propaganda, domination & attacks on online media // labs.rs/en/mapping-and-quantifying-political-information-warfare/
3. Mapping and quantifying political information warfare. Part 2, Social media battlefield, arrests & detentions // labs.rs/en/mapping-and-quantifying-political-information-warfare-2/
4. *Doward J.* a.o., Did Cambridge Analytica influence Brexit vote and the US election? // www.theguardian.com/politics/2017/mar/04/nigel-oakes-cambridge-analytica-what-role-brexit-trump
5. *Cadwalladr C.*, The great british Brexit robbery: how our democracy was hijacked // www.theguardian.com/technology/2017/may/07/the-great-british-brexit-robbery-hijacked-democracy
6. *Cadwalladr C.*, Follow the data: does a legal document link Brexit campaigns to US billionaire? // www.theguardian.com/technology/2017/may/14/robert-mercercambridge-analytica-leave-eu-referendum-brexit-campaigns
7. *Cadwalladr C.*, Revealed: how US billionaire helped to back Brexit // www.theguardian.com/politics/2017/feb/26/us-billionaire-mercerc-helped-back-brexit
8. *Cadwalladr C.*, Robert Mercer: the big data billionaire waging war on mainstream media // www.theguardian.com/politics/2017/feb/26/robert-mercerc-breitbart-war-on-media-steve-bannon-donald-trump-nigel-farage
9. How social media, big data and communism influence politics // en.hromadske.ua/posts/how-social-media-big-data-and-communism-influence-politicst
10. *Miller J.*, How Facebook's tentacles reach further than you think // www.bbc.com/news/business-39947942
11. *Marr B.*, Using your personal data is now second nature for politicians // www.theguardian.com/commentisfree/2017/may/08/personal-data-politicians-election
12. *Raeside J.*, What Facebook knows about you review — start panicking now! // www.theguardian.com/tv-and-radio/2017/may/09/facebook-panorama-bbc-what-knows-about-you-mark-zuckerberg-comedy-loaded
13. *Solon O.*, Facebook admits: governments exploited us to spread propaganda // www.theguardian.com/technology/2017/apr/27/facebook-report-government-propaganda
14. *Mathieson S.*, Trump, Brexit, and Cambridge Analytica — not quite the dystopia you are looking for // www.theregister.co.uk/2017/03/07/cambridge_analytica_dystopianism/
15. Facebook and Twitter prediction // applymagicsauce.com/demo.html
16. On What Facebook Knows – An Interview with the Man Behind Facebook's Personality Experiment // www.socialmediatoday.com/technology-data/adhutchinson/2015-10-01/what-facebook-knows-interview-man-behind-facebooks
17. *Mathieson S.*, Meet the Loughborough 'emo' boffins who predicted Trump's victory // www.theregister.co.uk/2016/11/24/loughborough_emotive_study_predictive_trump_election/

18. *Sykora M.*, a.o. National security and social media monitoring: a presentation of the emotive and related systems // dspace.lboro.ac.uk/dspace-jspui/bitstream/2134/18767/1/National%20Security%20and%20Social%20Media%20Monitoring%20-%20A%20Presentation%20of%20the%20EMOTIVE%20and%20Related%20Systems.pdf
19. *Sykora M.*, a.o. Twitter based analysis of public, ne-grained emotional reactions to significant events // dspace.lboro.ac.uk/dspace-jspui/bitstream/2134/16454/1/Twitter+based+Analysis+of+Public,+Fine-Grained+Emotional+Reactions+to+Significant+Events.pdf
20. Computer system uses Twitter to ‘map mood of nation’
// www.bigdata4analytics.com/blog/computer-program-uses-twitter-to-map-mood-of-nation-from-bbc-news-analytics
21. *Pentland A.*, Social Physics. How Good Ideas Spread. The Lessons from a New Science, New York, 2014.
22. *Микел Б.*, Программисты скоро будут никому не нужны. Почему (и какие профессионалы будут востребованы) - объясняет миллиардер Марк Кьюбан // in-crussia.ru/understand/programmisty-skoro-budut-nikomu-ne-nuzhny-pochemu-i-kakie-professionalny-budut-vostrebovany-obyasnyae/
23. *Bhaskar M.*, In the age of algorithm, the human gatekeeper is back // www.theguardian.com/technology/2016/sep/30/age-of-algorithm-human-gatekeeper
24. *Thaler R.H.*, a.o. Nudge. Improving Decisions About Health, Wealth, and Happiness, New York etc., 2009.
25. *Thaler R.H.*, Misbehaving. The Making of Behavioral Economics, N.Y., 2015
26. *Санстейн К.*, Иллюзия выбора. Кто принимает решения за нас и почему это не всегда плохо, М., 2016.
27. *Sunstein C.*, The ethics of nudging // digitalcommons.law.yale.edu/cgi/viewcontent.cgi?article=1415&context=yjreg
28. *Sunstein C.S.*, The Ethics of Influence. Government in the Age of Behavioral Science, Cambridge, 2016.
29. *Nye J.S., Jr.* Soft Power. The Means To Success In World Politics, New York, 2004.
30. *Marshall C.*, How Korea got cool // www.the-tls.co.uk/articles/public/how-korea-got-cool-hanguk/
31. *Дондурей Д.*, Российская смысловая матрица // kinoart.ru/editor/rossijskaya-smyslovaaya-matritsa
32. *Переслегин С.*, Дополненная реальность // iz.ru/news/714488
33. *Yun Y.*, a.o. Perceived social presence reduces fact-checking // www.pnas.org/content/early/2017/05/16/1700175114.full
34. *Хоркхамер М., Адорно Т.*, Диалектика просвещения. Философские фрагменты, М., СПб., 1997.
35. *Geertz G.*, Ideology as a cultural system // www.sociosite.net/sociologists/texts/geertz_ideology.php
36. *Ricoeur P.*, Lectures on ideology and utopia, New York, 1986.
37. *Ricoeur P.*, Ideology and utopia as cultural imagination // digitalcommons.brockport.edu/cgi/viewcontent.cgi?article=1193&context=phil_ex

38. *Humphreys J. Paul Ricoeur*. The philosopher behind Emmanuel Macron // www.irishtimes.com/culture/paul-ricoeur-the-philosopher-behind-emmanuel-macron-1.3094792?utm_content=bufferc018f&utm_medium=social&utm_source=facebook.com&utm_campaign=buffer
39. *Дугин А.*, Социология воображения. Введение в структурную социологию, М., 2010.
40. *Linstrum E.*, Spectres of dependency. Psychoanalysis in the age of decolonization // Psychoanalysis in the Age of Totalitarianism. Ed. by M. ffytche, D. Pick, London etc., 2016.
41. *Linstrum E.*, Ruling Minds. Psychology in the British Empire, Cambridge, 2016.
42. *Labiste M.D.*, Spectres of new media technologies: the hope for democracy in the postcolonial public sphere // etheses.bham.ac.uk/3800/1/Labiste_13_PhD.pdf
43. *Meserve J.*, How Psychology Helped Support — and Subvert — the British Empire // nymag.com/scienceofus/2016/02/psychology-helped-and-hurt-the-british-empire.html
44. What we're reading now: Ruling Minds: Psychology in the British Empire by Erik Linstrum // www.bbk.ac.uk/hiddenpersuaders/blog/reading-now-ruling-minds-psychology-british-empire-erik-linstrum/
45. *Linstrum E.*, The Weird Experiment by Colonial Powers to Read the Minds of the People They Ruled // historynewsnetwork.org/article/161758
46. *Edgar I.R.*, Anthropology and the dream // community.dur.ac.uk/i.r.edgar/
47. *Littlewood R.*, Did Christianity lead to schizophrenia? Psychosis, psychology and self reference // www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC4107833/
48. *Dein S., Littlewood R.*, Religion and psychosis: A common evolutionary trajectory? // Transcultural Psychiatry, 2011, Vol. 48, N 3.
49. *Fischer-Tine H.*, Introduction: Empires and Emotions // Anxieties, fear and panic in colonial settings empires on the verge of a nervous breakdown. Ed. by H. Fischer-Tine, London etc., 2016.
50. *Hartnack C.*, Colonial Dominions and the Psychoanalytic Couch: Synergies of Freudian Theory with Bengali Hindu Thought and Practices in British India // Unconscious Dominions: Psychoanalysis, Colonial Trauma and Global Sovereignties, Ed. by W. Anderson a.o., Durham, 2008.
51. *Kennedy D.*, Minds in Crisis: Medico-moral Theories of Disorder in the Late Colonial World // Anxieties, fear and panic in colonial settings empires on the verge of a nervous breakdown. Ed. by H. Fischer-Tine, London etc., 2016.
52. *Солнцева А.*, Шинели в первом ряду // www.gazeta.ru/comments/column/solnceva/10694819.shtml
53. *Ding T.*, a.o. Social Media-based Substance Use Prediction // arxiv.org/pdf/1705.05633.pdf

**ՀԱՂԹԱՆԱԿ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ
ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ
(Ինչպես է աշխատում օբյեկտիվ գործիքանին սուբյեկտիվ հիմքի վրա)**

Գեորգի Պոչեպցով

Ամփոփում

Սուբյեկտիվ գիտելիքները կարող են բերել օբյեկտիվ արդյունքներ, երբ դրանք դառնում են ներգործության բազա: Զանգվածային սուբյեկտներին դիմելը սուբյեկտիվ գործիքանու օգնությամբ կարող է հանգեցնել օբյեկտիվ արդյունքների: *Զանգվածային գիտակցությունն ասես «նոսր» տարածք է, որտեղ յուրաքանչյուր տարրի հատկանիշները տարբեր են, ուստի դժվար է հասկանալ ամբողջի վարքագիծը:* Այդ դեպքում մասնագետները «խտացման» այդ գործընթացը կատարում են իրենք՝ ստեղծելով օբյեկտի հարկավոր տեսակը: Ինչպես տեսնում ենք, մեր ժամանակներում սուբյեկտիվ գործոնները դադարել են արգելապատնեշ լինել զանգվածային գիտակցության վրա ներգործելու համար: Ընդհակառակը, նա, ով սուբյեկտիվության է տիրապետում, կարող է հասնել լավագույն օբյեկտիվ արդյունքների:

**ПОБЕДА НАД МАССОВЫМ СОЗНАНИЕМ И МЫШЛЕНИЕМ
(как работает объективный инструментарий на субъективной основе)**

Георгий Почепцов

Резюме

Последние кампании, достигнутые с помощью обращения к *big data*, говорят о том, что субъективные знания могут нести объективные результаты, когда они становятся базой кампании воздействия. Получается, что обращение к массовым субъектам с помощью субъективного инструментария может вести к объективным результатам. **Массовое сознание представляет собой как бы «разреженное» пространство, где свойства каждого элемента разные, поэтому трудно понять поведение целого.** Тогда специалисты делают такой процесс «уплотнения» сами, создавая нужный тип объекта. Как видим, в наше время субъективные факторы перестали быть барьером для воздействия на массовое сознание. Оказалось, наоборот: тот, кто овладевает субъективностью, может достичь наилучших объективных результатов.

**THE VICTORY OVER COLLECTIVE CONSCIOUSNESS AND THOUGHT
(how the objective toolkit works on subjective base)**

Georgiy Pocheptsov

Resume

It appears the recent campaigns implemented with the use of Big Data prove that subjective knowledge may bring about objective results, when they become a basis for influence. It turns out an appeal to mass subjects with the use of subjective toolkits may lead to objective results. Collective consciousness represents sort of a “thin” space, where properties of each element are different and that is why it is hard to understand the behavior of the whole. Then the specialists implement a “densifying” process themselves, thus creating the needed type of object. As seen, in modern days subjective factors are no longer an obstacle for influence on collective consciousness. In fact, it is the other way around: those who control subjectivity are able to achieve the best objective results.

**ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.
ԱԶԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԳԱՅԹԱԿՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԸ**

Թաթուլ Մանասերյան*

Բանալի բառեր՝ պատերազմի տնտեսագիտություն, ֆինանսատնտեսական ճգնաժամ, ռազմարդյունաբերական համալիր, պետության վարկանիշ, առերևույթ և քողարկված պատերազմներ:

Տնտեսվարման նոր պայմաններում ավելի քան քառորդ դարի ընթացքում արտաքին աշխարհին տպավորելու գայթակղությունը պետական կառավարիչների շրջանում յուրահատուկ «տարու» է առաջացրել տնտեսության զարգացման ազգային մոդելի ձևավորման հարցում: Ներքին անփորձությանն ու արտաքին խաղացողների նախապայմաններին հավելվել են նաև տարածաշրջանային ու գլոբալ մարտահրավերներ, որոնք ավելացրել են երկրի խոցելիության մակարդակն ինչպես տնտեսական, այնպես էլ ազգային անվտանգության տեսանկյուններից: Արևմուտքում սանձազերծված գաղափարախոսական և ֆինանսատնտեսական ճգնաժամերը, բոլոր վնասների հետ միասին, հնարավորություն ընձեռեցին սկսել ազգային տնտեսության ձևավորման փնտրտուքն առանց արտաքին խիստ սահմանափակումների: Խճանկարն առավել ամբողջական դարձնելու համար կարևոր է հաշվի առնել նաև պատերազմի վերսկսման սպառնալիքի պայմաններում աշխարհաքաղաքական և տրանսֆորմացվող տարածաշրջանային միտումների հնարավոր ազդեցությունները երկրի կառավարման նոր մոդելի ձևավորման գործընթացի վրա:

1. Փոխազդեցություններ

Ընդամին, պատերազմի տնտեսագիտության կարևոր պոստուլատներից մեկը փոխազդեցություններն են: Դրանք կարևոր են՝ հասկանալու Հայաստանում և արտաքին միջավայրում տեղի ունեցող զարգացումները և պար-

* «Այլընտրանք» հետազոտական կենտրոնի ղեկավար, տ.գ.դ., պրոֆեսոր:

զելու դրանց դերը պատերազմի ու տնտեսության առավել էական փոխպայմանավորվածություններում, գնահատելու երկրի մարտունակության բարձրացման իրական հնարավորությունները: Մեր համոզմամբ, դրանցից առավել կարևորներն են.

Ռազմարդյունաբերական համալիրի զարգացման մակարդակի ազդեցությունը հակամարտության ընթացքի վրա:

Իսրայելի փորձը վկայում է, որ հիշյալ փոխազդեցությունը չի սահմանափակվում այլ երկրների հետ միայն տվյալ երկրի հակամարտություններով: Դրա մասին են խոսում հետևյալ փաստերը: Ներկայում Իսրայելի ռազմական ծախսերը կազմում են այդ երկրի ՀՆԱ 5,4%-ը, իսկ 1990թ. կազմել են ՀՆԱ 17,5%-ից ավելին: Մա բնավ չի նշանակում, որ ռազմական ծախսերը երեք անգամ կրճատվել են. փոխարենը կտրուկ աճել են ՀՆԱ ծավալները: Այսպես, օրինակ, այս երկրում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2005թ. մինչև 2014թ. աճել է 1,67 անգամ, իսկ մոտ \$3 մլրդ-ի հասնող ամերիկյան ռազմական օգնությունը կազմում է Իսրայելի ՀՆԱ ավելի քան 1%-ը: Ակնհայտ է, որ եթե Իսրայելը կարողացել է զարգացնել տնտեսությունը 1990թ.՝ ՀՆԱ-ի մեջ ռազմական ծախսերի 17,5% տեսակարար կշռով, ապա ավելի բարեհաջող կարող է զարգացնել այն ՀՆԱ-ի մեջ հիշյալ ծախսերի ընդամենը 6%-ի պայմաններում: 2016թ. Իսրայելի ՀՆԱ-ն աճել է 3,8%-ով՝ ծրագրված 2,7%-ի փոխարեն, բնակչության 2%-անոց աճի, մեկ շնչին ընկնող \$37,3 հազար եկամտի պայմաններում, ինչը զգալիորեն բարձր է ՏՀԶԿ երկրների միջին ցուցանիշից¹:

Տնտեսության և պատերազմի փոխազդեցությունները, որոնք նյութականացված, ապրանքայնացված տեսք ունեն. առկա տնտեսական ռեսուրսները հարմարեցվում են ռազմական նպատակներով գործածվելու համար:

Այս իմաստով ռազմական նշանակության ապրանքների արտադրության կազմակերպումը պետք է լինի ազգային տնտեսության բաղկացուցիչներից մեկը:

Համաշխարհային պրակտիկայում հայտնի են նման փոխազդեցության հակասական օրինակներ: Երկրորդ համաշխարհային պատերազմին նախապատրաստվելով՝ Գերմանիան օգտագործեց ազգային տնտեսության

¹ *Марк Аврутин*, Цена американской военной помощи Израилю, https://israelections2015.wordpress.com/2016/07/06/avrutin_aidamer_2/;
ԸՇԵ: рост ВВП на душу населения в Израиле превысил средний показатель по ОЭСР, <http://9tv.co.il/news/2016/12/29/236617.html>

գրեթե ողջ ներուժը, դրանով իսկ հսկայական կախվածություն ձևավորելով պատերազմից, ինչն էլ հետագայում ավերիչ ազդեցություն գործեց երկրի հետագա զարգացման համար: Մյուս դեպքում, նույն պատերազմի օրոք, գտնվելով պատերազմական գործողություններից մեկուսացված տարածաշրջանում, ԱՄՆ տնտեսությունը ոչ միայն միակողմանի օգուտներ քաղեց քաղաքացիական արդյունաբերությունը ռազմական ռելսերի վրա տեղափոխելով և զենք վաճառելով մասնակից երկրներին, այլև ոսկու հսկայական ներհոսք ապահովեց երկիր¹ և նյութական շահեկան վիճակը 1944թ. հուլիսին Բրետոն-Վուդսում կայացած միջազգային համաժողովին կարողացավ վերածել արտաքին քաղաքական գերակայության: ԱՄՆ արժույթը դարձավ ոսկու համարժեք, ինչն ապահովեց ԱՄՆ վերընթաց զարգացումը հետագա տասնամյակների ընթացքում:

Բուն պատերազմական գործողություններում կարևորվում է երկրի մարդկային, հանքահումքային, ֆինանսական և արտադրական ռեսուրսների ներգրավումը, իսկ սպառազինությունների արդյունաբերության մեջ վճռորոշ է դառնում գիտատեխնիկական առաջընթացի ձեռքբերումների կիրառումը:

Կասկածից վեր է, որ ԽՍՀՄ մարտունակության մակարդակը պայմանավորված էր մարդկային, հանքահումքային, ֆինանսական և արտադրական ռեսուրսների ներգրավմամբ և դրանց արդյունավետ օգտագործմամբ: Մասնավորապես, ՌԱՀ համակարգում կարևորվել է մարդկային կապիտալն ինչպես նյութական, այնպես էլ բարոյական խթանների հստակ մեխանիզմների կիրառմամբ: Հայաստանում ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի, միջուկային ֆիզիկայի, էլեկտրոնիկայի, ռադիոէլեկտրոնիկայի, հաշվիչ տեխնիկայի, ճշգրիտ մեքենաշինության, տիեզերական հետազոտությունների և այլ բնագավառներում տպավորիչ առաջընթացը հիմնականում պայմանավորված էր ՌԱՀ մրցունակության բարձրացման և մարդկային կապիտալի արժևորման գործոններով: Դրա արդյունքն էին Հաշվիչ մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի (Մերգելյան ինստիտուտ), «Լիզին», «Բազալտ», «Մարս» և այլ գործարանների ինչպես ՌԱՀ ուղղվածության, այնպես էլ քաղաքացիական նշանակության խիստ պահանջարկված և կիրառական բնույթի ձեռքբերումները: Ավելին, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման համար կարևորագույն ռեսուրսի առկայությունն ու տվյալ ոլորտը զար-

¹ Արևմուտքի ոսկու և արժույթային ռեզերվների մոտ երեք քառորդը պատերազմի ավարտին կուտակված էր ԱՄՆ ձեռքում:

գացնելու աշխատուժի աճող զանգվածի հակվածությունն այսօր նույնպես խարսխված են նախկին հանրակարգի օրոք վերելք արձանագրած ոլորտի որոշակի ավանդույթների և հիշյալ փոխազդեցության վրա:

Պատերազմի բացասական ազդեցությունն ազգային տնտեսության վրա, որը, որպես կանոն, հաշվարկվում է մարդկային զոհերով և նյութական վնասներով, ինչպես նաև պետական բյուջեի՝ առողջապահության, սոցիալական, գիտության, կրթության և այլ առանցքային բնույթի ծախսերի կրճատման չափերով:

Բացի մարդկային զոհերից (5865 զոհ, որոնցից՝ 20 հերոս), Արցախյան հերոսամարտի միայն առաջին տարիների միջին տարեկան տնտեսական աճը մոտ -3% էր, իսկ զինադադարից՝ 1994 թվականից ի վեր՝ շուրջ 6%¹: Հայաստանի բնակչության բնական աճն այդ տարիներին կրճատվեց երեք անգամ, և հասարակությունը բաժանվեց երկու մասի: Մի բևեռում հայտնվեց սոցիալապես և իրավական առումով անպաշտպան, չունևոր մեծամասնությունը (մոտ 80%), իսկ մյուս մասում՝ տնտեսական և քաղաքական վերնախավը՝ փոքրամասնությունը, 5-7%-ը: Հայաստանը դարձավ ցայտուն արտահայտված բևեռացված երկիր: Մարդկային զարգացման ցուցանիշներով Հայաստանն աշխարհի երկրների մեջ 35-40-րդ տեղից անցավ 120-130 տեղերը (2015թ. Հայաստանը 187 երկրների ցուցակում արդեն 85-րդն էր)²: 1990-2000թթ. իրականացված բարեփոխումների արդյունքները տնտեսության տարբեր ճյուղերում ներկայացված են *Աղյուսակ 1-ում*:

Հայաստանում տնտեսական անկում է տեղի ունեցել մինչև 1994 թվականը, որից հետո, հետագա հինգ տարիներին (1994-1998թթ.) հանրապետության ՀՆԱ-ն աճել է 32%-ով, և դա հնարավորություն է տվել վերականգնելու միայն 1990թ. նույն ցուցանիշի 62%-ը³: Փորձագիտական գնահատականներով՝ գործազրկության մակարդակը Հայաստանում 1988թ. 1,5-2%-ից 1994թ. հասավ մոտ 36-37%-ի: ՌԱՀ նպատակներին տրամադրվող գումարները կազմում էին ՀՆԱ մոտ մեկ երրորդ մասը: Այս թիվն այժմ կազմում է ՀՆԱ 7-9%-ը, որը նախկինում եղածի մոտ 40%-ի չափով է, այսինքն՝ պաշտպանության նպատակներով կատարված ներկա ծախսերը կազմում են խորհրդային թվերով 1/8 և 1/10⁴:

¹ www.armstat.am

² http://hdr.undp.org/sites/default/files/2015_human_development_report.pdf

³ www.armstat.am

⁴ A. Kennaway, The Military Industry Complex, Conflict Studies Research Center, UK Ministry of Defense, March 1998, C98, p. 3.

Աղյուսակ 1¹

Տնտեսության ճյուղերի տեսակարար կշիռները ՀՆԱ-ում (%)

	Կառուցվածքը (%-ը ՀՆԱ-ում)			2000թ. աճը 1990թ. համեմատ
	1990	2000	2015	
Արդյունաբերություն	44.5	22.1	16,4	-69.2
Գյուղատնտեսություն և անտառտնտեսություն	12.6	23.1	17.3	13.7
Շինարարություն	18.0	19.6	9.4	32.3
Ծառայություններ	24.9	35.2	37.3	-12.1

Տնտեսության զարգացածության մակարդակի ազդեցությունը պատերազմական գործողությունների, թիկունքի նյութական ապահովման վրա:

Համաշխարհային պրակտիկայում արսիումատիկ բնույթ կրող այս ազդեցության օրինակները բազմաթիվ են: Միաժամանակ, Սիրիայի, Հնդկաստանի և Պակիստանի, Աֆղանստանի, ինչպես նաև բազմաթիվ այլ երկրների պարագայում տնտեսության և դրա առանցքային ճյուղերի, ՌԱՀ թերզարգացածությունը, թիկունքի նյութական ապահովման ցածր մակարդակը բնավ բավարար գործոններ չեն դիտարկվել հակամարտությունը դադարեցնելու համար: Ավելին, արտաքին ռազմական օգնությունը, իսկ երբեմն նաև դրա չարդարացված ակնկալիքը լրացուցիչ վնասներ են բերել երկրներին և դրանց բնակչությանը:

Երկկողմանի բնույթը. մի կողմից՝ տնտեսական ներուժը որոշիչ ազդեցություն ունի պատերազմի ընթացքի և էլքի վրա, մյուս կողմից՝ պատերազմն, իր հերթին, շոշափելի ազդեցություն է թողնում տվյալ երկրի (կամ երկրների խմբի) տնտեսության զարգացման վրա:

Նախ՝ պետության ներսում քաղաքական զարգացումների որոշակի «մեկուսացվածությունը» տնտեսական ցուցանիշներից, մասնավորապես Ուկրաինայում, ժամանակին ստեղծել էր թյուր պատկերացում առ այն, որ «նարնջագույն» հեղափոխությունը կանցնի անցնցում և կկանխորոշի երկրի

¹ Աղբյուրը՝ Growth, Inequality And Poverty In Armenia, UNDP, 2002, UN Office in Armenia

հետագա առաջընթացը՝ Եվրամիության և ԱՄՆ անթաքույց հովանավորությամբ: Նման քաղաքական պատրանքներ ձևավորվեցին նաև Վրաստանում, ուր տնտեսություն-քաղաքականություն կապն ավելի զգայուն էր: Ինչպես ցույց տվեցին հիշյալ երկրներում տեղ գտած զարգացումները, ներքին և արտաքին տնտեսական ներուժը բավարար չէր տվյալ պետությունների և Ռուսաստանի միջև զինված հակամարտությունները հոգուտ Վրաստանի և Ուկրաինայի հանգուցալուծելու համար: Ավելին, պատերազմներից և շարունակական արտաքին քաղաքական լարվածություններից որոշակիորեն քայքայված ազգային տնտեսություններն արդեն առանձնապես գրավիչ չեն դարձնում վերջիններիս՝ Եվրամիությանն անդամակցության համատեքստում: Ընդ որում՝ տվյալ պարագայում ոչ Ուկրաինային, ոչ էլ Վրաստանին որևէ կերպ չօգնեց անգամ հստակ հակառուսական ուղղվածության *GUAM* տարածաշրջանային կառույցի շրջանակներում ծավալված համագործակցությունը: Եվ եթե, Ուկրաինայի պարագայում, Խորհրդային Միությունից ժառանգած ՌԱՀ ներուժը հնարավորություն տվեց որոշակի իներցիոն տնտեսական զարգացում ապահովել, ապա Վրաստանի պարագայում ՌԱՀ ռեսուրսային սահմանափակվածությունը ստիպեց ավելի արագ դադարեցնել զինված հակամարտությունը, իսկ որոշ ժամանակ անց առաջին քայլերն անել Ռուսաստանի հետ արտաքին տնտեսական և արտաքին քաղաքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ:

Պետության վարկանիշի ազդեցությունը դաշնակիցներից ռազմական, ֆինանսական և տեխնիկական միջոցներ հայթայթելու կարողության վրա:

Հիշյալ վարկանիշն, իր հերթին, կարող է պայմանավորվել ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական գործոններով, ի վերջո, դրսևորելով տվյալ երկրի հուսալիությունը կամ դրա հանդեպ վստահության մակարդակը: Հարավային Մուդանում, Նիգերիայում, Կենտրոնական Ասիայում ռազմական, ֆինանսական և տեխնիկական միջոցների սահմանափակվածությունը հնարավոր դաշնակիցների հաշվին լուծելու խնդիրն ավելի երկար ժամանակ է պահանջում, քան ենթադրվում էր ի սկզբանե: Մյուս կողմից՝ Հյուսիսային Կորեայի ցածր վարկանիշը լուրջ խոչընդոտ է՝ գրեթե համատարած մեկուսացման պայմաններում միայն ՌԱՀ հաշվին քաղաքական կամ տնտեսական դիվիդենդներ ակնկալելու համար: Ի վերջո, ցածր վարկանիշը կարող է պատճառ դառնալ նաև «սառը պատերազմներում» ներգրավվելու և վերջիններիս պատճառով երկարատև հետընթաց ունենալու համար:

Շահագրգիռ նոր կողմերի և նրանց տնտեսական կարողության ներգրավման ազդեցությունը պատերազմի նախընտրելի տարբերակով ավարտի կամ հակամարտության խաղաղ հանգուցալուծման գործընթացի վրա:

Հաշվի առնելով միջազգային հարուստ փորձը՝ նման սցենարով հակամարտության հանգուցալուծումն առավել իրատեսական է ներկայանում զինված ընդհարումների դեպքում, մինչդեռ նոր կողմերի ներգրավմամբ խաղաղ կարգավորման փորձերն առավել բարդանում են՝ պայմանավորված յուրաքանչյուր կողմի տնտեսական և քաղաքական շահերով: Մա հավասարապես կիրառելի է ինչպես արցախյան հիմնահարցի, այնպես էլ Մերձավոր Արևելքի երկարաշունչ հակամարտության հանգուցալուծման փորձերի առումով: Ընդամենը, շահագրգիռ կողմերի ներգրավմամբ լավագույն օրինակներից մեկը Երկրորդ աշխարհամարտի տարիներին նոր դաշնակիցների մասնակցությունն էր ընդհանուր թշնամու դեմ պայքարում: Միաժամանակ, տարիմաստություն է առաջացնում ԻՊ-ի դեմ պայքարում թվացյալ դաշնակիցների ջանքերի նվազ արդյունավետությունը, ինչը վկայում է նույն կողմում հայտնված պետությունների շահերի տարբերությունների և քողարկված տարաձայնությունների մասին:

Տարածաշրջանային անվտանգության և տնտեսական շահերի պահպանման հարցում շահագրգիռ վերազգային ընկերությունների, ռազմավարական դաշինքների, տարածաշրջանային և միջազգային կառույցների ազդեցությունը հակամարտության կարգավորման վրա:

Անկախություն ձեռք բերելուց հետո ՌԱՀ ձևավորումն ու զարգացումը Կովկասում էական ազդեցություն են թողնում հակամարտությունների հանգուցալուծման փորձերի վրա: Ու թեև Ադրբեջանում նավթադուլարների հաշվին ձևավորված ռազմական ներուժը չի կարող դիտվել որպես որոշիչ գործոն, իսկ Հայաստանի պարագայում մրցունակ ՌԱՀ կայացումը զգալի ռեսուրսներ և ժամանակ է պահանջում, հակակամարտության կարգավորումն, ավելի մեծ հաշվով, պայմանավորված է միջազգային հանրության, տարածաշրջանային և միջազգային կառույցների, մասնավորապես ԵԱՀԿ Մինսկի խմբի, ՀԱՊԿ¹ անկողմնակալ ներգրավվածությամբ և աշխարհաքաղաքական զարգացումներով: Վերջին դերը չի խաղում նաև նավ-

¹ <http://armscoop.com/2014/11/%D5%B0%D5%B0-%D5%A4%D5%A5%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%BF%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%B0%D5%A1%D5%BE%D5%A1%D6%84%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%B6%D5%BE%D5%BF/>

թի արդյունահանման մեջ ներգրավված վերագրային ընկերությունների շահագրգռվածությունը՝ ոչ այնքան հակամարտության խաղաղ հանգուցալուծման, որքան խաղաղ պայմաններում շահույթները բազմապատկելու գործում: Միայն 2016թ. վերջին *SOCAR* պետական նավթային ընկերությունը և Ադրբեջանի միջազգային օպերացիոն ընկերությունը՝ *AIOC*-ը, որի օպերատորն է բրիտանական *British Petroleum*-ը՝ *BP*, Ազերի-Չիրազ-Գյունեշլի համաձայնագիրն են ստորագրել նավթի հանքավայրերի արդյունահանման և վերամշակման հետագա սկզբունքների վերաբերյալ: *AIOC* բաժնետերերն են՝ *BP*-35,78%, *Chevron*-11,27%, *Inpex*-10,96%, *SOCAR*-11,65%, *Statoil*-8,55%, *Exxon*-8%, *TPAO*-6,75%, *Itochu*-4,3% և *ONGC*-2,72%¹:

Պատերազմի ազդեցությունը կապիտալի արտահոսքի, արտագաղթի, ժողովրդագրական անվտանգության այլ սպառնալիքների ու միտումների սրացման վրա:

Նման հետևանքները բնորոշ են ինչպես պատերազմ հրահրող, այնպես էլ այն երկրներին, որոնց պատերազմը պարտադրվել է: Այսպես, օրինակ, եթե Արցախյան պատերազմի ընթացքում Հայաստանից դուրս բերված կապիտալը հիմնականում խորհրդային տարիներին առանձին մարդկանց ձեռքին կուտակված և անկախության առաջին տարիներին մասնավորեցումից ստացված հիմնականում «ստվերային» եկամուտներն էին, որոնց ընդհանուր ծավալը, տարբեր հաշվարկներով, չէր կարող գերազանցել \$1 մլրդ-ն, ապա զինադադարից հետո այդ թիվը տասնապատկվել է: Վերջին տասը տարվա ընթացքում ՀՀ-ից կապիտալի արտահոսքը կազմել է մոտ \$9,8 մլրդ: Միջին հաշվով տարեկան ՀՀ-ից անօրինական ձևով դուրս է բերվում մոտ \$983 մլն: Այդ մասին է վկայում *Global Financial Integrity*-ի տարեկան Չարգացող երկրներից կապիտալի անօրինական արտահոսքը (*Illicit Financial Flows from Developing Countries. 2004-2013*) զեկույցը²: Տարբեր գնահատականներ կան նաև Հայաստանից արտագաղթողների թվի վերաբերյալ, սակայն դրանք տատանվում են մեկ և կես միլիոն մարդու հնարավոր քանակի շուրջ: Լուրջ վնաս է հասցվում նաև ժողովրդագրական անվտանգությանը: Չավարտված պատերազմի պայմաններում փոխվում է ազգաբնակչության սեռահասակային կազմը: Տեղի է ունենում բնակչության

¹ Азербайджан и Запад продлили «контракт века»: что получают азербайджанцы? 27 декабря 2016, <https://easaily.com/ru/news/2016/12/27/azerbaydzhan-i-zapad-prodlili-kontrakt-veka-chtopoluchat-azerbaydzhancy>

² Տարեկան Հայաստանից անօրինական ձևով դուրս է բերվում մոտ մեկ միլիարդ դոլար, <http://verelq.am/hy/node/5126>

«ծերացում», որը պայմանավորված է երիտասարդ, աշխատունակ բնակչության արտահոսքով: Միայն 2015թ. նախորդ տարվա համեմատ ծնվել է մոտ երկու հազարով պակաս երեխա, իսկ նույն՝ 2015թ. Հայաստանից արտագաղթածների թիվն ընդհուպ մոտեցել է նույն տարվա ընթացքում ծնված երեխաների թվաքանակին, իսկ որոշ գնահատականներով՝ գերազանցել է հիշյալ ցուցանիշը¹: Նման միտումներն իրենց որոշակի ազդեցությունն են թողնում տնտեսության և ՌԱՀ մրցունակության և զարգացման վրա:

Համաաշխարհային փորձը վկայում է, որ տնտեսության և պատերազմի փոխազդեցությունները հիմնականում իրացվում են քաղաքականության միջոցով, որն էլ որոշիչ է այդ փոխազդեցության քանակական և որակական բնութագրիչների տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ, հիշյալ փոխազդեցություններն անընդհատ փոփոխվում ու համալրվում են, իսկ դրանց բոլորի վրա կարևոր ազդեցություն են թողնում հետևյալ երեք գործոնները.

- համաաշխարհային աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխությունները,
- զինված հակամարտության ձևերի և միջոցների կատարելագործումը (միջուկային զենք, հրթիռային տեխնիկա, գերձշգրիտ զենքի տեսակներ),
- ժամանակակից պատերազմների և զինված հակամարտությունների բնույթի փոփոխություններ:

Խորհրդային պետության փլուզումից ի վեր տեղի է ունենում անցում երկրներ աշխարհից միաբնեռ աշխարհի, ինչն, իր ավարտին չհասած, զուգորդվում է բազմաբնեռ աշխարհի ձևավորման բարդ ու բազմաբնույթ գործընթացներով: Վերջինիս կարևոր բնութագրիչներից մեկն այն է, որ տնտեսական, քաղաքական և ռազմական կենտրոնի դերի են հավակնում միանգամից մոտ երկու տասնյակ պետություններ, ինչն, իր հերթին հուշում է, որ համաաշխարհային կենտրոնի փոխարեն ձևավորման, կայացման փուլում են գտնվում «աշխարհն իրար մեջ բաժանած» տարածաշրջանային մի քանի կենտրոններ: Զարգացող և զարգացած մյուս երկրներին մնում է կողմնորոշվել ԱՄՆ, Ռուսաստանի, Չինաստանի, Ճապոնիայի, ԵՄ, Հնդկաստանի, Իրանի, Թուրքիայի և այլոց հետ ոչ միայն տարածաշրջանային առևտրատնտեսական, այլև ռազմավարական գործընկերության և դաշինքների ընտրության հարցում: Նման պետությունները, մի կողմից,

¹ <http://www.aravot.am/2016/10/26/820385/>

ձգտում են առավելագույնս օգտագործել ժամանակակից բարձր տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները՝ ՀՆԱ աճի տեմպերի արագացման, սոցիալական խնդիրների կարգավորման, ազգային տնտեսությունների մրցունակության բարձրացման, իսկ մյուս կողմից՝ միջազգային տնտեսական կազմակերպություններում իրենց և դաշնակիցների միասնական կշիռը բարձրացնելու և ազդեցության ոլորտներն ընդլայնելու համար: Նման մրցակցությունն ուղղակիորեն առնչվում է բազմաբնույթ՝ քաղաքական, սոցիալական, բնապահպանական, ժողովրդագրական, տեղեկատվական և ռազմական սպառնալիքներին¹: Իսկ այս ամենի հիմքում ընկած է հակամարտությունների նյութատեխնիկական բազան՝ տնտեսությունը և դրա կարևոր բաղադրիչը՝ ռազմարդյունաբերական համալիրը:

2. Ռազմարդյունաբերական համալիրը նոր իրողություններում

Այսպիսով, չկարգավորված հակամարտության պայմաններում Հայաստանը հասցրել է անցում կատարել նոր տնտեսական համակարգի, կարևոր հաղթանակ տանել Արցախի ազատամարտում և ամրապնդել դիրքերը միջազգային ասպարեզում: *Պատերազմի համար վճարվել է տնտեսական և սոցիալական բարձր գին*. այն «սնվել» է տնտեսության այն ճյուղերից, որոնց զարգացումն առժամանակ կասեցվել է կամ ուղղվել ՌԱՀ զարգացմանը (կապիտալ շինարարություն, տրանսպորտային ենթակառույցներ, քաղաքացիական արդյունաբերության մի շարք ճյուղեր, գիտություն, կրթություն, առողջապահություն, մշակույթ և այլն):

Միաժամանակ, հատկապես ազատամարտի տարիներին տեղ գտած մի շարք բացասական երևույթներ ու միտումներ՝ ավելի սահմանափակ ազդեցությամբ, *իրենց իներցիոն շարունակությունն ունեն* նաև այսօր: Տնտեսական անվտանգության ապահովման տեսանկյունից առավել խոցելի են գնահատվում երկրի սոցիալական համակարգը և գիտությունը:

Ակնհայտ է, որ պետության դերը խիստ պահանջարկված է երկրի տնտեսական սպառնալիքների *վնասազերծման և տնտեսական անվտանգության ապահովման հարցում*: Միաժամանակ, բազմաբնույթ տնտեսական հակամարտությունների գերակշիռ մասն, ի վերջո, վերածվում է *տնտեսական պատերազմների*, որոնց հիմնական նպատակներն են ռեսուրսների վերաբաշխումը, տնտեսական և ֆինանսական ազդեցության ոլորտների

¹ Մանասեթյան Թ., Տնտեսական անվտանգություն. ռազմավարության ուրվագծեր, Երևան, ՀՀ ԳԱԱ, 2014թ.:

ընդլայնումը, տարբեր ճանապարհներով սեփականության բռնագավթումը և այլն: Իսկ առանձին դեպքերում տնտեսական շահն ուղղակի դրսևորվում է *առևտրային պատերազմներում*, երբ կողմերն օգտագործում են անարդար մրցակցության զինանոցն արտաքին շուկաներից հակառակորդին դուրս մղելու և տնտեսական, հետևաբար նաև քաղաքական անդառնալի վնասներ պատճառելու անթաքույց ձգտումով¹: Այն ընդգրկում է ավելի լայն ոլորտներ և առանձին դեպքերում դրսևորվում *գաղափարախոսական պատերազմի* սանձազերծման մեջ, որում ներգրավվում են նաև սովյալ իրավիճակում ընդհանուր շահեր ունեցող այլ պետություններ:

Ի վերջո, ստեղծված իրավիճակում չեն բացառվում նաև *տնտեսական կարևոր կառույցների վրա հակառակորդի զինված հարձակումները*: Այլ խոսքով, պատերազմի իրական սպառնալիքի պայմաններում պետությունից պահանջվում են կրկնակի ջանքեր՝ հանրապետության ռազմավարական նշանակության օբյեկտների՝ էլեկտրակայանների, ջրամբարների, գազատարների, պետական պահեստարանների և այլ կառույցների անվտանգությունն ապահովելու համար:

3. Պետության դերն առերևույթ և քողարկված պատերազմների պայմաններում

1. Ակնհայտ է, որ պատերազմի իրական սպառնալիքի պայմաններում *ազատական տնտեսությունը, մրցակցությունը և այլ ինստիտուտներ կորցնում են իրենց կարևորությունը և դադարում են գործել*:
2. Ներկայում տնտեսության հետագա զարգացումը պահանջում է *պետության դերի վերարժևորում*, կառավարման արդյունավետության շեշտակի բարձրացում, մրցակցային առավելությունների իրատեսական գնահատում, ռեսուրսների նպատակային օգտագործում և հասարակության ներսում հաղթողի հոգեբանության ամրապնդում:
3. Միանգամայն ընկալելի է, երբ պետությունը հանդես է գալիս *մենատիրոջ դերում և դրսևորում իր մենաշնորհը*: Հարցը ոչ միայն զենք և զինամթերք արտադրելու մենաշնորհի մասին է, այլև այն հանգամանքի, որ պետությունը հանդես է գալիս որպես մի շարք ռազմավարական ապրանքների միակ գնորդ, ինչը դասական սահմանմամբ առաջացնում է մոնոպսոնիա: Բացի այդ, պատերազմի ժամանակ անընդունելի է, որ

¹ *Ka Zeng, Trade Threats, Trade Wars, Bargaining, Retaliation, and American Coercive Diplomacy, A multidisciplinary approach that offers practical policy prescriptions, University of Michigan, 2010, pp.2-11. https://www.press.umich.edu/2781196/trade_threats_trade_wars*

պետությունը թույլ տա տնտեսության ցիկլիկ զարգացում: Եթե խաղաղ պայմաններում տնտեսության իրական զարգացումը պահանջում է աշխուժացում, վերելք, լճացում և ճգնաժամ, ապա հիշյալ օրինաչափությունների գոյությունը պատերազմի ժամանակ բառացիորեն հանգեցնում է պարտության: Իրավիճակը պահանջում է ոչ միայն պետության միջամտություն, այլև համատարած պետական կառավարում, պլանավորում և համահարթեցման ու սահմանափակումների համակարգ՝ իրավիճակը վերահսկելու և առկա ռեսուրսները քաղաքացիական և ռազմական ոլորտներում ռացիոնալ օգտագործելու նպատակով: Այսպիսով, մեր համոզմամբ, պետությունը ստանձնում է *պատասխանատվության մենաշնորհ*:

4. Զինված հակամարտությանն առնչվող տնտեսական խնդիրները պետության (Հայաստանի կառավարության) նման մենաշնորհի պայմաններում կարող է դրսևորվել ինչպես *միկրոմակարդակում*՝ առանձին հիմնարկներին ռազմարդյունաբերական համալիրի մեջ ընդգրկելով լրացուցիչ աշխատուժի ներգրավման, աշխատանքային օրվա և աշխատանքային շաբաթվա նոր ռեժիմի սահմանման, գիտատեխնիկական հիմնարկների գործունեության ուղղորդման և հստակ կանոնակարգման միջոցով, այնպես էլ *մակրոմակարդակում*՝ գների հանդեպ հսկողության, գնաճի տեմպերի զսպման, ներդրումների ոլորտների հստակեցման միջոցով, ինչպես նաև *արտաքին տնտեսական գործունեության նոր մեխանիզմի կիրառման* միջոցով, որն ավելի վերահսկելի կդարձնի ներմուծման և արտահանման հոսքերը:
5. Այս ամենը պահանջում է, որպես անհետաձգելի հրամայական, *պատերազմական իրավիճակում ազգային տնտեսության կառավարման նոր մոդելի մշակում*: Կառավարության լիազորությունները և գործառույթները (գներ, աշխատավարձեր, ռեսուրսների տեղաբաշխում) անհրաժեշտ է զուգորդել ռազմական արդյունաբերության, բարձր տեխնոլոգիաների աճին նպաստող՝ մասնավոր ձեռնարկատիրական գործունեության նախաձեռնությունների խթանման կառավարման նոր մեթոդների կիրառման հետ:
6. Պետության դերն առավել կարևորվում է *ազգային տնտեսական օրակարգի ձևավորման գործում*: Ընդ որում՝ կարևոր է գիտակցել, որ պատերազմական պայմաններում գործող տնտեսությունը պահանջում է ինչպես զարգացման որակապես նոր մոդել, *այնպես էլ զարգացման նոր*

ռազմավարություն և հայեցակարգ: Տվյալ դեպքում հանրապետության տնտեսական ներուժը որոշիչ նշանակություն ունի նաև երկրի ռազմական հայեցակետի (դոկտրինի), ինչպես նաև ռազմական ծրագրերի մշակման և իրագործման համար: Հետևաբար, կարևորվում է պետության ռազմական հայեցակետի¹ ազդեցությունը զինված ուժերի տնտեսական պահանջունքների վրա: Մյուս կողմից՝ հնարավոր ազդեցիկներին դիմակայելու երկրի պատրաստվածությունը նույնպես ազդում է տնտեսական զարգացման ռազմավարության, ինչպես նաև ռազմական դրության պայմաններում երկրի տնտեսության կենսագործունեությանը հարմարեցնելու գործընթացի, պետության զինված ուժերի հազվեցվածության և ապահովման ծրագրերի իրագործման վրա: Այլ խոսքով՝ ներկայիս հակամարտությունն իրականում տեղափոխվել է ռազմատնտեսական ոլորտ և շոշափում է հակամարտող կողմերի ազգային տնտեսությունների մրցունակության և մարտունակության մակարդակները:

7. Խորհրդարանական կառավարման պայմաններում պետության օրենսդիր մարմնից պահանջվում է իրավիճակին *համարժեք օրենքների մշակում և ընդունում:* Մասնավորապես, կարևորվում են՝ «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքի մշակումը, ՌԱՀ զարգացմանը միտված հարկային օրենսգրքում և մաքսային օրենսգրքում համապատասխան լրամշակումները, ինչպես նաև «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններն ու նոր օրենքների ընդունումը:
8. Հաշվի առնելով պատերազմը սպասարկելու՝ ռազմարդյունաբերական համալիրը մրցունակ պահելու համար անհրաժեշտ ներքին ռեսուրսների սահմանափակ բնույթը՝ Հայաստանի պարագայում նպատակահարմար է հիշյալ համալիրը դիտարկել ոչ թե որպես տնտեսական գնացքի վերջին և ամենածանրաքաշ վազոն, այլ որպես արագընթաց *տնտեսական շոգեքարշ:* Այս պարագայում ռազմարդյունաբերական համալիրը կարող է ոչ միայն ձևավորել իր նյութատեխնիկական և գիտատեխնիկական բազան, այլև բացի սպառազինություններից, տնտեսությանն առաջարկել այսպես կոչված «երկակի նշանակության» ապրանքներ և ծառայություններ, որոնց մի մասը կարող է ներառվել նաև արտահանման հոդվածների շարքում՝ սկսած էլեկտրոնային սարքերից, սննդի և

¹ Ռազմական հայեցակետն, ընդհանուր առմամբ, տվյալ ժամանակահատվածում հնարավոր պատերազմի, դրա բնույթի, վարման ձևերի ու միջոցների, զինված ուժերի պատրաստության վերաբերյալ պետության մոտեցումների, սկզբունքների և նպատակների ամբողջությունն է:

թեթև արդյունաբերության արտադրանքի որոշ տեսակներից, վերջացրած տեղեկատվական և հաղորդակցության, բարձր տեխնոլոգիաներով, էներգետիկ սարքերով, սարքաշինությամբ, ճարտարագիտության տարբեր ճյուղերով և այլն:

9. Տարածաշրջանում ռազմական գործողությունների ծավալման սպառնալիքների առկայության և դրանց ավելացման պայմաններում Հայաստանը դիմագրավում է ժամանակի պակասուրդ՝ վերանայելու և վերարժևորելու սեփական կարողությունները: Մեր կողմից՝ առաջարկվում է *մշակել ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմի պայմաններում իրադարձությունների զարգացումների և արցախյան հիմնահարցի վերջնական լուծման հնարավոր և իրատեսական սցենարներ:*
10. Ռազմատնտեսական անվտանգության ապահովման նպատակով կարևոր է դիտարկել հետևյալ սցենարը. գիտատար արդյունաբերության տարբեր ոլորտների արտադրանքով և ծառայություններով Հայաստանը հավակնում է իր կարևոր տեղը գտնել *դաշնակից երկրների ռազմարդյունաբերական համալիրներում:* Նման սցենարն իրատեսական է ներկայանում, մասնավորապես այն առումով, որ Հայաստանն անառարկելի մրցակցային առավելություն ունի տեղեկատվական տեխնոլոգիաների՝ ռազմարդյունաբերական համալիրի ծրագրային ապահովման ոլորտում: Հիշեցնենք, որ Ռուսաստանը մեծ վնասներ կրեց հատկապես այս հարցում, երբ Արևմուտքի կողմից կիրառվեցին տնտեսական և տեխնիկական պատժամիջոցներ: Սա նշանակում է, որ Հայաստանն իր ռազմարդյունաբերական համալիրի մրցունակ ապրանքներով ու ծառայություններով ոչ միայն կարող է գտնել իր որմնախորշն արտերկրի, հատկապես ռազմավարական դաշնակիցների շուկաներում, այլև որոշակի կախվածություն ձևավորել հայրենական արտադրությունից:
11. Դաշնակից երկրների հետ նման սցենարի իրագործումն առաջնահերթ նշանակություն է ստանում *Հայաստանի, Միյուռքի* և երկրի ռազմավարական գործընկերների աջակցությամբ ու համագործակցությամբ, ինչը թույլ կտա հանրապետության ՌԱՀ մրցունակության բարձրացումը և ռեսուրսային բազայի զարգացումը հասցնել որակապես նոր, ավելի բարձր մակարդակի:
12. Առաջնահերթ նշանակություն են ստանում նաև *Հայաստան - Արցախ ռազմական և տնտեսական ինտեգրման ծրագրի* մշակումն ու դրա իրագործումը: Առաջարկվող ծրագրի շրջանակներում կարևոր է հանգուցա-

լուծել, մասնավորապես, ազատագրված տարածքների վերաբնակեցման և զարգացման հարցը:

Հուլիս, 2017թ.

**ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.
ԱԶԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԱՅԹԱԿՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԸ**

Թաթուլ Մանասերյան

Ամփոփագիր

Վերջին ավելի քան քառորդ դարի ընթացքում արտաքին աշխարհին տպավորելու գայթակղությունը պետական կառավարիչների շրջանում յուրահատուկ «տարու» է առաջացրել տնտեսության զարգացման ազգային մոդելի ձևավորման հարցում: Ներքին անփորձությանն ու արտաքին խաղացողների նախապայմաններին հավելվել են նաև տարածաշրջանային ու գլոբալ մարտահրավերներ: Դրանք ավելացրել են երկրի խոցելիության մակարդակը ինչպես տնտեսական, այնպես էլ ազգային անվտանգության տեսանկյուններից: Գաղափարախոսական և ֆինանսատնտեսական ճգնաժամերը հնարավորություն են ձևավորում սկսել ազգային տնտեսության ձևավորման փնտրտուքն առանց արտաքին խիստ սահմանափակումների: Կարևոր է հաշվի առնել նաև պատերազմի վերսկսման սպառնալիքի պայմաններում աշխարհաքաղաքական և տրանսֆորմացվող տարածաշրջանային միտումների հնարավոր ազդեցությունները երկրի կառավարման նոր մոդելի ձևավորման գործընթացի վրա:

**ЭКОНОМИКА ВОЙНЫ:
СОБЛАЗНЫ ЛИБЕРАЛЬНОЙ ЭКОНОМИКИ
И НАЦИОНАЛЬНЫЙ ИНТЕРЕС**

Татул Манасерян

Резюме

За последнюю четверть века соблазн впечатлить внешний мир вызвал в среде госуправленцев своеобразное «табу» в вопросе формирования национальной модели развития экономики. К внутренней неопытности и условиям внешних акторов

добавились также региональные и глобальные вызовы. Они повысили уровень уязвимости страны как в экономическом плане, так и с точки зрения национальной безопасности. Идеологические и финансово-экономические кризисы позволили начать поиск путей формирования национальной экономики без жестких внешних ограничений. Важно учесть также возможное влияние геополитических и трансформационных региональных тенденций на процесс формирования новой модели управления страной в условиях угрозы возобновления войны.

**THE ECONOMICS OF WAR:
THE TEMPTATIONS OF LIBERAL ECONOMY
AND THE NATIONAL INTEREST**

Tatul Manaseryan

Resume

In the last 25 years a sort of a “taboo” has emerged among government managers with regard to national model of economic development, apparently prompted by the temptation to impress the external world. Lack of experience internally and preconditions imposed by external actors are in addition complicated by regional and global challenges. These are increasing the extent of the country’s vulnerability both from economic and national security perspectives. The ideological and financial/economic crises afforded an opportunity to commence a search of national economy shaping ways without strict external constraints. It is also important to consider potential impacts of geopolitical and transforming regional trends under the threat of war recurrence on the process of shaping the new model for country’s governance.

ՀՀ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Գայանե Հարությունյան**

Բանալի բառեր՝ ռազմարդյունաբերություն, ռազմական ծախսեր, ռազմական ԳՀՓԿԱ, տնտեսական աճ, տնտեսական զարգացում, երկակի նշանակության արտադրանք:

Պետության կողմից երկրի պաշտպանության ապահովումն առաջնային, չփոխարինվող հասարակական բարիք է, իսկ պաշտպանության գործունեությունը՝ տնտեսական գործունեության տարատեսակ¹, որի թողարկած արդյունքը ոչ նյութական բնույթ ունի և բավարարում է երկրի արտաքին անվտանգության նկատմամբ բնակչության պահանջմունքը: Վերջինս երկրների առաջնահերթությունների սանդղակում ամենակարևոր դիրքում է, անկախ այն հանգամանքից՝ երկիրը պատերազմական իրավիճակում է, թե ոչ:

Որպես օրինաչափություն, ռազմարդյունաբերության ոլորտի զարգացման և պաշտպանությանը հատկացվող պետական ծախսերի առավել արդյունավետ օգտագործման մեխանիզմների մշակման իրողությունները բնորոշ են այն պետություններին, որոնք գտնվել են որոշակի կրիտիկական իրավիճակում (պատերազմ, սառեցված հակամարտություններ, ռազմական էմբարգո, շրջափակում): Օրինակ, 1950-ական թթ. Չինաստանը և Եգիպտոսը սպառազինություններ ներկրում էին հիմնականում Խորհրդային Միությունից, մինչև որ այդ մատակարարումները դարձան անորոշ ու անվստահելի, ինչն էլ հարկադրեց նախաձեռնել զենքի տեղական արտադրություն: Նույնը կարելի է ասել նաև Թայվանի, Թուրքիայի և Բրազիլիայի մասին, որոնք, տարբեր պատճառներով արժանանալով ռազմական արտադրանքի ներկրման էմբարգոյի, սկսեցին զարգացնել սպառազինությունների տեղական արտադրություն [1, p. 5]:

* Տնտ.գ.թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան ՏԻ ավագ գիտաշխատող:

¹ Տնտեսական գործունեության ձևերի դասակարգչի համաձայն՝ «պաշտպանության գործունեությունը» (Օ84.22 կոդով) ներառվում է պետության կողմից հասարակությանը մատուցվող ծառայությունների մեջ:

Հայաստանը կարծես բացառություն է այս օրինաչափությունից, որը, ներքաշվելով Ադրբեջանի կողմից պարտադրված պատերազմին և 1993թ. կնքելով զինադադարի պայմանագիր՝ ըստ էության, համաչափ կերպով չի ձեռնարկել ազգային անվտանգության պահանջներով պարտադրված՝ ռազմարդյունաբերության ոլորտի զարգացման էական միջոցառումներ: Դրա մասին է վկայում նաև այն, որ ռազմական ներուժի միջազգային վարկանիշային հետազոտություններում Հայաստանը 2016թ. հունվարի դրությամբ 126 երկրների շարքում զբաղեցնում է 94-րդ տեղը, այն դեպքում, երբ Ադրբեջանը 60-րդ դիրքում է¹: Նման իրավիճակում առաջնահերթ խնդիր է մոբիլիզացնել երկրի գիտական ներուժը և ուղիներ որոնել երկրի անվտանգության խնդիրների լուծման մոտեցումներում բեկումնային փոփոխությունների համար: Արդի բարդ աշխարհաքաղաքական պայմաններում Հայաստանի նման փոքր, բաց տնտեսությամբ երկրի համար նշված գերխնդրի լուծման առավել արդյունավետ ուղին սեփական ռազմարդյունաբերության զարգացումն է: Նման տեսակետն առավել հիմնավորված է ներկայանում, երբ հաշվի ենք առնում, որ ոլորտի աշխուժացումը կարող է ընդհանուր տնտեսության զարգացման էական խթաններ ստեղծել, իսկ ռազմական ծախսերի խելամիտ կառավարման ու նպատակաուղղված օգտագործման պարագայում կարելի է դրանք վերածել տնտեսական աճին նպաստող էական գործոնի:

***Ռազմարդյունաբերության
դերն ու նշանակությունը տնտեսությունում***

Ռազմարդյունաբերության ոլորտը, որպես ազգային տնտեսության ենթահամակարգ հանդիսացող *ռազմական (պաշտպանական) տնտեսության* բաղադրիչ, ներառում է երեք արտադրական ուղղություն.

- Զենք-զինամթերքի, ռազմական հատուկ տեխնիկայի, սարքավորումների, բացառապես ռազմական նշանակության այլ արտադրանքի թողարկում;
- Երկակի նշանակության արտադրանքի, տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների թողարկում²;

¹ Համեմատության համար նշենք, որ հարևան մյուս պետություններից Թուրքիան գտնվում է 8-րդ տեղում, Իրանը՝ 21-րդ, Վրաստանը՝ 80-րդ տեղում, <http://www.globalfirepower.com/>

² «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքով *երկակի նշանակության ապրանք* է համարվում յուրաքանչյուր տեսակի գույք, որ կիրառվում է քաղաքացիական նպատակների համար և իր բնույթին ու հատկություններին համապա-

- Կոնվերսիոն արտադրանքի թողարկում, երբ ռազմական նշանակության արտադրանք թողարկող ձեռնարկություններն իրենց նախաձեռնությամբ (շահույթը մեծացնելու նկատառումներով) կամ շուկայական կոնյունկտուրայի փոփոխություններին հարմարվելու հարկադրանքով սկսում են արտադրել (կամ արտադրում են) նաև խաղաղ պայմաններում քաղաքացիական պահանջմունքների բավարարման համար նախատեսված արտադրանք՝ օգտագործելով ռազմական նպատակներով իրականացված գիտատեխնիկական մշակումների արդյունքները:

Բացի ռազմարդյունաբերությունից, ռազմական տնտեսությունը ներառում է նաև զինված ուժերի տնտեսությունը, որն էլ իր հերթին ունի երկու բաղադրիչ՝ զինված ուժերի թիկունքի տնտեսություն և զինված ուժերի գորամասային տնտեսություն: Զինված ուժերի տնտեսությունը ձևավորվում է պետության ռազմական ծախսերի միջոցով: Պետական ռազմական ծախսերը ներառում են սպառազինության գնման և ԳՀՓԿ աշխատանքների համար նախատեսված, նյութատեխնիկական ապահովման, անձնակազմի պահպանման և կապիտալ շինարարության ծախսերը: Ակնհայտ է, որ պետության կողմից իրականացված ռազմական ծախսերի մի զգալի մասը վերադառնում է տնտեսություն՝ ռազմարդյունաբերության և արտադրական այլ ոլորտներում պետական պատվերով արտադրության կազմակերպման համար: Ռազմարդյունաբերության և ազգային տնտեսության փոխառնչությունները ներկայացված են *Գծապատկեր 1*-ում¹, որն, ըստ էության, արտացոլում է ռազմարդյունաբերության ոլորտի ներուժային համակարգաստեղծ նշանակությունն ամբողջ տնտեսության համար՝ պայմանավորված տնտեսության այլ ճյուղերի հետ համագործակցության լայն հնարավորություններով²:


տասխան՝ կարող է օգտագործվել նաև ռազմական նպատակներով, ներառյալ՝ զանգվածային ոչնչացման զենքի և դրա փոխադրման միջոցների ստեղծման համար, իսկ *երկակի նշանակության տեղեկատվություն և մտավոր գործունեության արդյունք* են համարվում ցանկացած տեղեկատվություն, մտավոր գործունեության արդյունք, համակարգչային ծրագրեր, որոնք կիրառվում են քաղաքացիական նպատակների համար և իրենց բնույթին համապատասխան՝ կարող են օգտագործվել նաև ռազմական նպատակներով, ներառյալ՝ զանգվածային ոչնչացման զենքի և դրա փոխադրման միջոցների ստեղծման համար:

¹ Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից:

² Ռազմարդյունաբերության և ազգային տնտեսության փոխկախյալությունների մասին առավել մանրամասն տե՛ս *Գ. Հարությունյան*, «Ռազմարդյունաբերության դերն ու նշանակությունը տնտեսության զարգացման ընդհանուր համակարգում», Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում (Գիտական հոդվածների ժողովածու, 2017), էջ 240-246:

Գծապատկեր 1

Ազգային տնտեսության և ռազմարդյունաբերության փոխկապվածությունները



Ռազմական նշանակության արտադրանք կարող են թողարկել մեքենաշինությունը (մասնավորապես ռադիոէլեկտրոնային, էլեկտրատեխնիկական, օպտիկամեխանիկական, սարքաշինական արտադրությունները), որն իր հերթին հիմնվում է մետաղամշակման և քիմիական արտադրությունների վրա, միաժամանակ վերջինիս որոշ ենթաճյուղեր ինքնին կարող են հանդես գալ որպես ռազմական արտադրանքի թողարկման ոլորտ, իսկ ժամանակակից սպառազինությունների գերակշիռ մասը հիմնվում է տեղեկատվական տեխնոլոգիաների վրա: Ինչ վերաբերում է սննդի և թեթև արդյունաբերությանը, ապա դրանց առանձնացումն արտադրական այլ ոլորտներից պայմանավորված է փոխազդեցությունների առավել թույլ դրսևորմամբ, քանի որ դրանք ռազմական տնտեսությանն առնչվում են միայն զինված ուժերի համար պետական գնումների շրջանակներում, որոնք արժեքային ցուցանիշներով նկատելիորեն զիջում են ռազմական ծախսերի այլ բաղադրիչներին: Այնուամենայնիվ, պատերազմական իրավիճակում գտնվող փոքր բաց տնտեսության համար, որտեղ արդյունաբերական արտադրանքի ծավալները չեն գերազանցում ՀՆԱ 20%-ը, բանակի համար պետական պատվերների իրականացումը կարող է հաջող

արտադրական գործունեության մեկնակետ ծառայել, հատկապես եթե հաշվի առնենք, որ այս երկու ոլորտներում առավել նպատակահարմար է փոքր ձեռնարկատիրության զարգացումը:

Փաստորեն, ընդհանուր տնտեսական համակարգի վրա ռազմական տնտեսության ազդեցությունը կարող է դրսևորվել երկու ուղղությամբ, մի դեպքում՝ ռազմարդյունաբերության ոլորտում զարգացումների արդյունքում, մյուս դեպքում պետական ռազմական ծախսերի փոխանցման մեխանիզմով: Ազդեցության ուղղությունների նման տարբերակումն էական է, քանի որ հնարավորություն է տալիս նաև տարբերակված ուսումնասիրել *տնտեսական աճի* և *տնտեսական զարգացման* վրա հնարավոր ազդեցությունները: Տնտեսագիտական հետազոտությունները հիմնականում շեշտադրում են տնտեսական աճի վրա ռազմական ծախսերի ազդեցության ուսումնասիրությունը, մինչդեռ ավելի կարևոր է տնտեսական զարգացման տեսանկյունից երևույթների քննությունը, քանի որ եթե տնտեսական աճի հիմքում երկրի տնտեսական զարգացումը չէ, ապա այն ունի ժամանակավոր ու պատահական բնույթ, և հաճախ չի ապահովում երկրի կենսամակարդակի և բարեկեցության համապատասխան աճ: Հայտնի է, որ ռազմական ծախսերի և տնտեսական աճի միջև գոյություն ունի ուղիղ կախվածություն՝ պայմանավորված ՀՆԱ ցուցանիշի հաշվարկման տնտեսամաթեմատիկական առանձնահատկությամբ, այն է՝ ռազմական ծախսերը համարվում են պետության կողմից երկրի պաշտպանության ծառայության (որպես հասարակական բարիք) ձեռքբերման արժեք, որը ձևավորվում է երեք բաղադրիչներից՝ ռազմամթերքի գնում, հիմնական կապիտալի (գորանոցների, այլ ռազմական նշանակության շինությունների) ամորտիզացիա և ընթացիկ նյութական ծախսեր, և ներառվում է ՀՆԱ կառուցվածքում՝ որպես պետական գնումների բաղադրիչ: Բացի այդ, դրանց աճը հարուցում է համախառն պահանջարկի մուլտիպլիկատիվ աճ և հանգեցնում գործազրկության կրճատմանը: Սակայն ՀՆԱ որակական աճի (տնտեսական զարգացման) տեսանկյունից խնդրի դիտարկումը ենթադրում է ավելի շուտ ռազմարդյունաբերության ոլորտի տնտեսական ցուցանիշների բարելավման նպատակադրում, ինչը երկարաժամկետ հեռանկարում կարող է նկատելի աճ ապահովել ՀՆԱ-ն ձևավորող այլ բաղադրիչների գծով (սպառողական ծախսերի, ներդրումների, արտահանման ծավալների աճ)՝ առաջ բերելով ՀՆԱ ավելի արագ և արդյունավետ աճ:

Տնտեսական աճի վրա ռազմական ծախսերի ազդեցությունը

Տնտեսական աճի և ռազմական ծախսերի միջև փոխկապվածությունների հետազոտումը տնտեսական քննարկումների առանցքային խնդիրներից էր դեռևս 1980-1990-ական թթ., սակայն այդպես էլ չհաջողվեց էմպիրիկ հետազոտություններով համաձայնության գալ այդ խնդրի շուրջ՝ պայմանավորված հետազոտական մոտեցումների զգալի այլատարրությամբ՝ ինչպես երկրների ընտրանքի, այնպես էլ ուսումնասիրությունների համար ընտրված ժամանակային միջակայքերի խիստ բազմազանության առումներով [2, p. 3]: Հետխորհրդային երկրներում ռազմական ծախսերի տնտեսական ազդեցության վերաբերյալ հետազոտությունները սկսել են իրականացվել համեմատաբար վերջերս (2000-ական թթ. սկզբից), ընդ որում՝ դրանք հիմնարար բնույթ չեն կրում, և ներկայացված են հիմնականում առանձին գիտական հոդվածներով, որոնք իրենց հերթին հիմնվում են արևմտյան տնտեսագիտական մտքի վերլուծական գործիքակազմի վրա: Դա մասամբ պայմանավորված էր նրանով, որ երկար ժամանակ գերիշխող էր այն կարծիքը, թե Խորհրդային Միության փլուզման հիմնական պատճառը տնտեսության չափազանց ռազմականացումն էր «սառը պատերազմի» տարիներին, և որ ռազմական ծախսերի աճը բացասաբար է ազդում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Դա, թերևս, հիմնական պատճառներից մեկն է, որ Հայաստանում տնտեսության վրա ռազմական ծախսերի ազդեցության հետազոտական աշխատանքները բացակայում են:

Ռուսաստանում ռազմական ծախսերի և ռազմարդյունաբերության վերաբերյալ տեսական¹ ու էմպիրիկ հետազոտություններ սկսեցին իրականացվել՝ պայմանավորված ռազմարդյունաբերական համալիրի զարգացման նկատմամբ հետաքրքրության աճով: Օրինակ, Գ.Լավրինովը Ռուսաստանի մակրոտնտեսական ցուցանիշների և ռազմական ծախսերի միջև փոխկապվածության աստիճանը գնահատելու համար հաշվարկում է դրանց միջև կոռելյացիայի գործակիցները (1994-2005թթ. տվյալների հիման վրա) և բացահայտում, որ ամենաբարձր փոխկապվածությունը ռազմական ծախսերի ու մեքենասարքավորումների արտադրության միջև է (0.85), մի փոքր ավելի ցածր՝ ռազմական ծախսերի և ընդհանուր արդյունաբերության (0.77) և վերամշակող արդյունաբերության (0,79) հետ կախվածություններ-

¹ Տե՛ս, օրինակ, Военный бюджет государства. Методы обоснования и анализа (под ред. Г.С. Олейника), М., Воениздат, 2000, 180 с.; Хрусталева Е.Ю., Экономические проблемы военной безопасности, М., Наука, 2005.

րում, մինչդեռ ՀՆԱ-ի և ռազմական ծախսերի միջև կոռելյացիան ավելի փոքր է (0.57) [3, c. 19-24]: Գիտնականների մի խումբ էլ (Ս.Սալկով, Դ.Չերնավսկի, Ն.Ստարկով, Յու.Կոսսե, Վ.Կովալյով) տպագրված հոդվածների շարքով առաջարկում է մակրոտնտեսական ցուցանիշների վրա ռազմական ծախսերի ազդեցության գնահատման տնտեսամաթեմատիկական մոդել, որի հիման վրա կատարված սցենարային վերլուծություններով եզրակացվում է, որ պետական ռազմական պատվերի աճը նպաստում է տնտեսական աճին, ընդ որում՝ դրսևորելով գնաճային նվազագույն ճնշում, ինչը պայմանավորված է ՌԱՀ արտադրական հզորությունների առավել արդյունավետ օգտագործմամբ, վերամշակող արդյունաբերության աշխուժացմամբ, արդյունաբերության բարձրտեխնոլոգիական ոլորտներում եկամուտների բարձրացմամբ, բացի այդ՝ պետական ռազմական պատվերի նույնիսկ 2.5-3 անգամ աճի դեպքում Ռուսաստանի տնտեսական զարգացումը չի փոսանգվի [4-6]: Ս.Մենշիկովը ներկայացնում է միջճյուղային դինամիկ մոդելի միջոցով Ռուսաստանի համար հաշվարկված ռազմական ծախսերի մուլտիպլիկատորի գործակիցը՝ 2.2, իրական մուլտիպլիկատորը (այսինքն՝ գնաճի հաշվառմամբ)՝ 1.8, որը բաշխվում է հետևյալ կերպ. ռազմական արտադրանքի աճ՝ 1.0, սպառողական ծախսերի աճ՝ 0.47, կապիտալ ներդրումների աճ՝ 0.33 [7]:

Հայաստանի օրինակով, ռազմական ծախսերի և տնտեսական աճի միջև փոխկապվածության հետազոտությունն իրականացրել ենք *SIPRI*¹ և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տարեգրքերի² համադրելի տվյալների հիման վրա՝ փորձելով պարզել, թե գոյություն ունի արդյոք կոռելյացիոն կախվածություն ուսումնասիրվող փոփոխականների միջև: Հաշվարկվել են հետևյալ զույգային կոռելյացիայի գործակիցները՝ ռազմական ծախսեր և ՀՆԱ, ռազմական ծախսեր և արդյունաբերական արտադրանքի ծավալ, ռազմական ծախսեր և վերամշակող արդյունաբերություն (1995-2015թթ. տվյալներով), ինչպես նաև մեկ տարի ժամանակային լագով ՀՆԱ - ռազմական ծախսեր և ռազմական ծախսեր - ՀՆԱ³:

Վերլուծությունը ցույց է տվել, որ ցածր, բայց էական կախվածություն դրսևորվել է միայն մեկ տարի ժամանակային լագով ՀՆԱ - ռազմական

¹ Աղբյուրը՝ <https://www.sipri.org/databases/milex>.

² Աղբյուրը՝ <http://www.armstat.am/am/?nid=586>

³ Նշված վիճակագրական վերլուծության համար անհրաժեշտ բոլոր հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից, տրվել են համապատասխան գնահատականներ, հոդվածում ներկայացված են միայն կատարված եզրակացությունները:

ծախսեր ժամանակային շարքերի համադրման դեպքում: Դա վկայում է, որ եթե նախորդ տարում ՀՆԱ-ն աճել է, ապա հաջորդ տարվա բյուջեում հնարավոր է եղել ռազմական ծախսերին ավելի մեծ հատկացումներ անել: Միաժամանակ, հակադարձ փոխկապվածությունն ուսումնասիրելիս կոռեյացիայի գործակիցը մոտ է եղել գրոյին, ընդ որում՝ բացասական միտումով, ինչը ցույց է տալիս, որ ռազմական ծախսերի փոփոխությունը հաջորդող ժամանակաշրջանում գրեթե ազդեցություն չի ունեցել ՀՆԱ ցուցանիշի վրա, իսկ եթե նույնիսկ ունեցել է, ապա կապը հակադարձ է եղել. ռազմական ծախսերի աճին հետևել է ՀՆԱ չնչին կրճատում: Կոռեյացիայի բացակայություն է արձանագրվել նաև ռազմական ծախսերի և արդյունաբերական արտադրանքի միջև, իսկ ռազմական ծախսերի և ՀՆԱ-ի միջև դրսևորվել է թույլ կոռեյացիա, ինչն, ըստ էության, արտացոլում է ՀՆԱ և ռազմական ծախսերի թվաբանական փոխառնչությունը: Թույլ կոռեյացիոն կապ է դիտարկվել նաև ռազմական ծախսերի և վերամշակող արդյունաբերության միջև, ինչը նախորդ ցուցանիշների և միտումների հետ համադրության պարագայում թույլ է տալիս եզրակացնել, որ այն պատահական բնույթ է կրել: Մեր եզրակացությունները հաստատելու համար ստուգել ենք նաև Գրեյնջեր պատճառականությունը համեմատաբար բարձր կոռեյացիայի ցուցանիշներ արձանագրած ժամանակային շարքերի համար: Ստացված արդյունքները հաստատել են, որ Հայաստանում ռազմական ծախսերը ՀՆԱ խթանման գործառույթ չեն իրականացրել, և եթե ռազմական ծախսերի աճն ինչ-որ չափով պայմանավորվել է ՀՆԱ փոփոխությամբ, ապա հակառակ պատճառականությունը կարելի է բացատրել: Նման վերլուծությունը համահունչ է Հայաստանի տնտեսական համակարգի կառուցվածքին: Վերջինս բնորոշվում է որպես «սպառող» տնտեսություն (2015թ. դրությամբ ներմուծումը 2.2 անգամ գերազանցել է արտահանմանը, իսկ վերջինիս գերակշիռ մասը շարունակում է մնալ հանքահումքային արտադրանքը), որի ՀՆԱ-ում ամենամեծ տեսակարար կշիռն ունի «Առևտուր և ծառայություններ» բաղադրիչը՝ 46.4%, իսկ արդյունաբերության (ներառյալ էներգետիկան) տեսակարար կշիռն ընդամենը 16.2% է: Մինչդեռ, տնտեսական աճի վրա ռազմական ծախսերի ազդեցության մեխանիզմների գործառնության համար անհրաժեշտ է առողջ տնտեսական համակարգ՝ դիվերսիֆիկացված արդյունաբերական կառուցվածքով, որտեղ տարբեր արտադրական ոլորտների միջև առկա են հաստատուն կապեր և որտեղ տնտեսական ազդակները մի օղակից մյուսին փոխանցվում են անխափան:

Ռազմական ԳՀՓԿԱ ազդեցությունը տնտեսության զարգացման վրա

Նորարարական հիմքով տնտեսական զարգացման հիմնուղին երկրում գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների (ԳՀՓԿԱ) արդյունավետ իրականացումն է: Սակայն, եթե տնտեսագետները համակարծիք են, որ ԳՀՓԿԱ ծախսերը նպաստում են տնտեսության տեխնոլոգիական զարգացմանը, բարելավում են արդյունաբերության ճյուղային կառուցվածքը՝ հոգուտ բարձր տեխնոլոգիական, մեծ ավելացված արժեք ստեղծող արտադրությունների, ապա ռազմական ԳՀՓԿ ծախսերի ազդեցության շուրջ քննարկումներում գիտական տեսակետների միջև հակասություններն առավել սուր բնույթ են կրում: Նույնիսկ այն դեպքում, երբ էմպիրիկ հետազոտությունները բացահայտում են դրական կախվածություն ռազմական ԳՀՓԿԱ ծախսերի և տնտեսության զարգացման կարևորագույն ինդիկատորների միջև, վիճելի է մնում հասարակության լայն շերտերի համար դրանց օգտակարության հարցը:

Գիտական բանավեճերի գլխավոր հակափաստարկ-այլընտրանքն այն է, որ նորարարությունների և դրանց հիմքով տնտեսական զարգացման ավելի մեծ արդյունքների կարելի է հասնել, եթե ԳՀՓԿԱ ծախսերը գերակշռեն քաղաքացիական նշանակության արտադրություններում և իրականացվեն մասնավոր ձեռնարկատերերի նախաձեռնությամբ՝ առևտրային շահի հետապնդմամբ: Այս տեսակետը հաստատող հետազոտությունները սակավաթիվ են՝ պայմանավորված պետությունների կողմից ռազմական նպատակներով ԳՀՓԿԱ-ի վերաբերյալ հրապարակվող տվյալների սահմանափակությամբ, ինչպես նաև արտաքին էֆեկտների գնահատման մեթոդոլոգիական և հայեցակարգային մոտեցումների անկատարությամբ: Այդպիսի հետազոտություններից մեկը բացահայտել է, որ թեև ԱՄՆ-ում 1960-ական թթ. գիտահետազոտական աշխուժությունը (որը չափվում է ընկերությունների կողմից ԳՀՓԿԱ ծախսերով) դրական նշանակալի կոռելյացվածություն է ունեցել 16 արդյունաբերական ոլորտների ձեռնարկությունների իրացման ծավալների, ակտիվների, զուտ եկամտի և այլ ցուցանիշների հետ, սակայն, երբ ներառվել են նաև պետական ԳՀՓԿԱ ծախսերը, կոռելյացիան դադարել է նշանակալի լինել: Բացառելով հետազոտությունից պետական միջոցների 5/6-ը սպառող արտադրական ոլորտները՝ ավիաարդյունաբերությունը, հրթիռաշինությունը և էլեկտրասարքավորումների արտադրությունը, նշանակալի կոռելյացիան վերականգնվել է:

Դա հիմք է տվել եզրակացնելու, որ արդյունաբերական աճը դանդաղում է պաշտպանության նպատակներով ԳՀՓԿԱ ծախսերի վերաբաշխման արդյունքում [8, p. 232-256]:

Ավելի ուշ, *OECD* 16 երկրների համար արտադրողականության աճի վրա ԳՀՓԿԱ ազդեցության ուսումնասիրության ընթացքում, հեղինակները բացահայտում են, որ պետական ֆինանսավորումն ընդհանուր առմամբ բացասական ազդեցություն է ունեցել մասնավոր ոլորտում իրականացվող ԳՀՓԿԱ-ների վրա, և միայն ռազմական ոլորտին առնչվող ծախսերն են էական բացասական ազդեցություն ունեցել արտադրության գործոնների արտադրողականության վրա, մինչդեռ քաղաքացիական նշանակության ԳՀՓԿԱ պետական ֆինանսավորումը դրական է ազդել մասնավոր հատվածում նորարարությունների ու գործարարության աշխուժացման վրա [9, p. 113-114]:

Ինչ վերաբերում է ռազմական ԳՀՓԿԱ ֆինանսավորման արդյունքում քաղաքացիական նշանակության արտադրություններում ԳՀՓԿԱ «արտամղման» էֆեկտին, ապա էմպիրիկ հետազոտությունները հիմնականում չեն բացահայտել որևէ հստակ երկարաժամկետ կախվածություն ռազմական և քաղաքացիական ԳՀՓԿԱ-ների միջև, հետևաբար չեն կարող ապացուցել արտամղման էֆեկտի գոյությունը [10, p. 161-178]: Այնուամենայնիվ, որոշ հետազոտողներ էլ գտնում են, որ ռազմական ոլորտում ԳՀՓԿԱ-ներն ունեն ակնհայտ այլընտրանքային ծախսեր, քանի որ հաճախ մենաշնորհային պայմաններով օգտագործում են սահմանափակ բարձրորակ գիտական կադրերն ու ակտիվները, որոնք հակառակ դեպքում կարող էին օգտագործվել քաղաքացիական նշանակության գիտահետազոտական աշխատանքներում [11, p. 169-175]: Ի հակադրություն, շատ են նաև այն հետազոտությունները (ԱՄՆ օրինակով՝ [12, pp. 136-145], Իսրայելի օրինակով՝ [13, p. 18]), որոնք փաստում են, որ ռազմական ԳՀՓԿԱ-ները նպաստում են քաղաքացիական ոլորտում արտադրանքի թողարկման աճին, և հետևաբար նաև՝ տնտեսական աճին:

Տնտեսության վրա ռազմական ԳՀՓԿԱ-ների ազդեցությունը չի կարելի միանշանակ սահմանափակել արտամղման կամ կողմնակի էֆեկտներով, կարևոր է հաշվի առնել նաև այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են ազգային անվտանգության բարձր մակարդակը, որը մեծացնում է տնային տնտեսությունների օգտակարությունը (անվտանգության էֆեկտ), և ռազմական ԳՀՓԿԱ-ների միջոցով ընդհանուր նշանակության տեխնոլոգիա-

ների մշակման հնարավորությունը, որը տնտեսագիտական գրականությունում հայտնի է որպես *spin-off* էֆեկտ: Այս համատեքստում կարելի է փաստել, որ ռազմական ԳՀՓԿԱ-ների ազդեցությունը տնտեսական աճի վրա զգալի անորոշություններ է ենթադրում: Մասնավորապես, եթե ռազմական ԳՀՓԿԱ-ներին ուղղվող ծախսերի կրճատումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ դրանց մեկնարկային մակարդակը նկատելիորեն բարձր է, ապա դա տնտեսական աճի վրա դրական ազդեցություն կունենա, իսկ եթե ռազմական ԳՀՓԿԱ ծախսերի մեկնարկային մակարդակը ցածր է, ապա ազդեցությունը բացասական կլինի: Փաստորեն, գոյություն ունի ռազմական ԳՀՓԿԱ ծախսերի այնպիսի մակարդակ, որն առավելարկում է տնտեսական աճը՝ պայմանավորված, արտաքին դրական (*spillovers*) և *spin-off* էֆեկտներով, և միաժամանակ, ռազմական ԳՀՓԿԱ ծախսերի այնպիսի մակարդակ, որն առավելարկում է տնային տնտեսությունների բարեկեցության ֆունկցիան՝ անվտանգության էֆեկտի շնորհիվ [14]:

Ընդհանրացնելով գոյություն ունեցող հետազոտությունների արդյունքները՝ առանձնացնենք տնտեսության վրա ռազմական ԳՀՓԿԱ ազդեցության հիմնական ուղղությունները.

- Անվտանգության էֆեկտ (*security effect*), որը մի կողմից ապահովում է տնտեսական գործունեության համար անվտանգ ու վստահելի միջավայր՝ նպաստելով ներդրումների աճին և տնտեսական աշխուժացմանը, մյուս կողմից՝ ենթադրում է հասարակության օգտակարության ֆունկցիայի աճ, քանի որ նրանում ներառված կարևոր հասարակական բարիքներից մեկը՝ ազգային անվտանգությունը, տեխնոլոգիական առաջընթացի շնորհիվ որակապես բարելավվում է;
- Համախառն պահանջարկի աճի էֆեկտ, որի ազդեցության մեխանիզմը միջնորդավորված է հասարակության բարեկեցության ֆունկցիայի փոփոխությամբ. երբ վերջինս աճում է, տնային տնտեսությունները մեծացնում են սպառողական ծախսերը;
- Համախառն առաջարկի աճի էֆեկտ, որը հնարավոր է տեխնոլոգիական առաջընթացի արդյունքում արտադրողականության աճի, արտադրական ծախքերի նվազման շնորհիվ;
- Դրական արտաքին էֆեկտներ (*positive spillover effect*), երբ ռազմական նշանակության տեխնոլոգիաները փոխանցվում են արտադրության այլ ոլորտներ և նպաստում տնտեսությունում ընդհանուր տեխնոլոգիական առաջընթացին:

Կարող ենք տարանջատել դրական էքստերնալների դրսևորման երեք տարբերակ.

- *Spin-off* էֆեկտ, երբ ռազմական ԳՀՓԿԱ արդյունքում մշակված տեխնոլոգիաները, առաջնահերթ բավարարելով ռազմական պահանջ-մունքները, որոշ ժամանակ անց փոխանցվում են (պատենտների և արտոնագրերի վաճառքի միջոցով) քաղաքացիական արտադրության ոլորտ;
- *Spin-in* էֆեկտ, երբ երկրում ԳՀՓԿԱ ծախսերն ուղղորդվում են հիմնականում քաղաքացիական նշանակության տեխնոլոգիաների մշակմանը՝ մասնավոր ընկերությունների կողմից, սակայն վերջիններս իրականացնում են նաև ռազմապաշտպանական պահանջ-մունքների համար պետական պատվերներ կամ իրենց նախաձեռնությամբ (բայց պետության կողմից ստացված արտոնագրերի հիման վրա) արտադրում են նաև ռազմական նշանակության արտադրանք, որի իրացումը կազմակերպում են կոմերցիոն պայմաններով;
- *Spin-on* էֆեկտ, որի դեպքում ռազմական նշանակության ԳՀՓԿԱ-ները հնարավորություն են տալիս մշակել նաև ընդհանուր նշանակության տեխնոլոգիաներ, այնպես, որ ռազմական արտադրանք թողարկող ձեռնարկությունները մշտապես հնարավորություն ունեն արտադրությունը փոխարկել քաղաքացիական արտադրության (կոնվերսիա);

Արտամղման էֆեկտ (*crowding-out effect*), որի ազդեցությունը բացասական է՝ պայմանավորված քաղաքացիական արտադրություններից բարձրորակ կադրերի և ակտիվների ներգրավմամբ, ինչի արդյունքում վատթարանում են այդ ոլորտներում արտադրողականության և այլ տնտեսական ցուցանիշները;

Բացասական արտաքին էֆեկտ (*negative spillover effect*), որը դրսևորվում է ռեսուրսների գերլցման ծախքերի տեսքով, քանի որ թողարկվող արտադրանքի պետականորեն երաշխավորված իրացման և պետական ֆինանսավորման զգալի ծավալների պայմաններում հիմնական բեռը կրում է հասարակությունը, որը միշտ չէ, որ հանդես է գալիս, որպես ԳՀՓԿԱ-ների շնորհիվ թողարկվող արտադրանքի սպառող:

Հայաստանում ռազմական ԳՀՓԿԱ-ներին և դրանց հնարավոր ներուժային օգուտներին անհրաժեշտ ուշադրություն չի հատկացվել: Նախ նկատենք, որ պաշտպանության ընդհանուր ծախսերում հետազոտական ու նախագծային աշխատանքների ֆինանսավորման չափերը ՀՀ պետությու-

ջեի մասին օրենքներում առանձնացված կերպով սկսել են ներկայացվել 2008-ից¹: Մինչ այդ պաշտպանությանը հատկացվող միջոցները պետական բյուջեում ներկայացվել են երկու ենթախմբով՝ «ռազմական կարիքներ» և «պաշտպանության բնագավառի այլ կարիքներ»: Հաշվի առնելով այն, որ 1995-2007թթ. երկրորդ ենթախմբի ծախսերը կազմել են ընդհանուր պաշտպանական ծախսերի 5-7%-ը, և հետևելով հետագա տարիներին ԳՀՓԿԱ ֆինանսավորման դինամիկային, որը տատանվել է ընդհանուր պաշտպանական ծախսերի 0.6-0.8%-ի սահմաններում, կարող ենք պնդել 1995-2016թթ. տվյալների անհամադրելիության մասին: Միաժամանակ, հասանելի վիճակագրական տեղեկատվությունում եռամսյակային կամ կիսամյակային տվյալների բացակայությունն անարժանահավատ է դարձնում էկոնոմետրիկ վիճակագրական հետազոտությունների արդյունքները: Բացի այդ, եթե վստահելու լինենք այն հետազոտություններին, որոնք պնդում են, որ բացարձակ ցուցանիշով ցածր ռազմական ԳՀՓԿԱ ծախսերը գրեթե զրոյական ազդեցություն են թողնում ընդհանուր տնտեսության զարգացման վրա [15, p. 327-339], ապա Հայաստանի տնտեսության վրա ռազմական ԳՀՓԿԱ ազդեցության իրողությունների որոնումը զգալիորեն բարդանում է: Ուստի, փորձել ենք մեր գնահատականները կառուցել առավելապես տրամաբանական դատողությունների վրա:

Այսպես, ռազմական ԳՀՓԿԱ բացասական ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա կարելի է բացառել՝ պայմանավորված զգալի չիրացված արտադրական հնարավորությունների և ազատ արտադրական ռեսուրսների առկայությամբ: Նման պայմաններում, արտամղման էֆեկտի դրսևորման համար պարզապես բավականաչափ ընդարձակ իրական հատված չկա: Բավական փոքր են նաև քաղաքացիական նշանակության գիտահետազոտական աշխատանքների ծավալները (պետական ֆինանսավորումը ՀՆԱ 0.25%-ի շրջակայքում է), ընդ որում՝ արդյունքների առևտրայնացման բավական ցածր աստիճանով: Հետևաբար, ռազմական ԳՀՓԿԱ-ները, որոնց անհրաժեշտությունը թելադրված է երկրի անվտանգության խնդիրների հրատապ լուծման պահանջով, կարող են երկրում տեխնոլոգիական առաջընթացի հաջող նախապայման հանդիսանալ՝ տեխնոլոգիական գործընթացներում ներառելով նաև տեխնոլոգիատար այլ ոլորտներ (քիմիական, մեքենաշինական, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլն): Միաժամանակ, անվտանգության էֆեկտի ապահովումը բավական

¹ Այս և հաջորդիվ բերված թվային տվյալների աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջեի մասին օրենքներ 2008-2016: <http://www.parliament.am/legislation.php?sel=alpha<ype=3&lang=arm>

կարևոր է Հայաստանի համար արդի աշխարհաքաղաքական պայմաններում: Տարբեր գնահատումներով՝ տնտեսական շրջափակման հետևանքով Հայաստանը կորցնում է հնարավոր օտարերկրյա ներդրումների 30-40%-ը, և որ առավել խնդրահարույց է՝ իրական ոլորտում ներդրումներից խուսափում են նաև տեղական ներդրողները՝ հաճախ նախընտրելով ներդրում կատարել այլ երկրներում: Անշուշտ, այս հանգամանքը որոշակի մասով պայմանավորված է նաև երկրի անվտանգության հիմնախնդիրներով:

ՀՀ տնտեսության վրա ռազմական ԳՀՓԿԱ ծախսերի բացասական ազդեցության թերևս միակ ուղղությունը հասարակության համար հարկային բեռի աճն է, քանի որ, ի վերջո, պետական բյուջեից ֆինանսավորումն իրականացվում է հարկատուների հաշվին: Մակայն էթե հաշվի առնենք երկարաժամկետ հեռանկարում ԳՀՓԿԱ ծախսերի շնորհիվ հնարավոր բոլոր ուղղակի և անուղղակի օգուտները, օրինակ, սպառազինությունների տեղական արտադրությունը՝ դրանց տեխնոլոգիական կենսացիկլի նախնական փուլում, տեխնոլոգիաների փոխանցման շնորհիվ քաղաքացիական նշանակության նորարարական արտադրանքի թողարկման հնարավորությունները և այլն, ապա պետական միջոցների նման օգտագործումն ավելի ընդունելի է ներկայանում, քան տեխնոլոգիական կենսացիկլի ավարտում գտնվող սպառազինությունների ներկրման ծախսերը:

Հիմնվելով կատարված հետազոտության, ինչպես նաև ռազմարդյունաբերության զարգացման հիմքով տնտեսական աճի ապահոված փոքր բաց տնտեսությամբ երկրների (Իսրայել, Սինգապուր, Հարավային Կորեա) փորձի վրա՝ առաջարկում ենք ռազմարդյունաբերության զարգացումը դիտարկել որպես ստեղծված աշխարհաքաղաքական պայմաններում երկրի անվտանգության գերխնդրի լուծման *միակ* և տնտեսական զարգացման խնդրի լուծման *առավել արդյունավետ* եղանակ, և այդ համատեքստում իրականացնել հետևյալ միջոցառումները.

Գիտության ոլորտ

- Ապահովել ռազմական ԳՀՓԿԱ նպատակային ֆինանսավորման աճ՝ վերջինիս շարունակականության նախապայման համարելով ստացված արդյունքների կիրառական նշանակությունը, առևտրայնացման հնարավորությունները: Ռազմական նշանակության հետազոտական աշխատանքների ֆինանսավորումն իրականացնել հիմնավոր պահանջարկ ունեցող, հիմնարար ու կիրառական էական արդյունքի ձեռքբերմանն ուղղված հետազոտական նախագծերի մրցույթների անցակցման կարգով;

- Ռեզոլուցիայի նպատակներով գիտական ներուժի արդյունավետ օգտագործման նկատառումներով կիրառել ասպիրանտների այլընտրանքային ծառայության նոր մոտեցում, ըստ որի՝ պարտադիր ժամկետային ծառայությունից մրցութային կարգով կարող են ազատվել պաշտպանության նախարարության առաջարկած գիտական թեմաներով հետազոտական աշխատանք իրականացնող ասպիրանտները: Դա նաև հնարավորություն կտա մեծացնել ինժեներատեխնիկական ու բնական գիտությունների գծով ասպիրանտների և գիտական հետազոտությունների թիվը:

Կրթության ոլորտ

- Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում հիմնել միջգիտակարգային կրթության ուղղվածությամբ նոր ֆակուլտետ, և կենտրոնացնելով համալսարանի գիտական ու կադրային ներուժը (քիմիական և ինֆորմացիոն տեխնոլոգիաների, ռադիոտեխնիկայի և կապի համակարգի, կիրառական մաթեմատիկայի ու ֆիզիկայի բնագավառներում)՝ այն նպատակաուղղել ռազմական տեխնոլոգիաների և ռազմարդյունաբերական արտադրանքի նախագծման ու մշակման համար համապատասխան մասնագետների կրթմանն ու պատրաստմանը;
- Բուհերում հիմնել գիտահետազոտական լաբորատորիաներ և կենտրոններ, որոնք կմասնագիտանան երկակի նշանակության տեխնոլոգիաների մշակման ուղղությամբ՝ այդ տեխնոլոգիաների առևտրայնացման գործառույթը վերապահելով պետությանը:

Արտաքին տնտեսական քաղաքականություն

- Մշակել և հետևողականորեն իրականացնել սպառազինությունների և ռազմապաշտպանական նպատակներով ներմուծվող այլ արտադրանքի ներմուծման աստիճանական փոխարինման քաղաքականություն՝ սկսելով սպառազինությունների արտադրության աստիճանակարգի (Կրաուզի աղյուսակ [16]) նախնական փուլերից մինչև երկարաժամկետ հեռանկարում սեփական նոր տեխնոլոգիական սպառազինությունների արտադրությունը;
- Ներմուծել առավելապես այնպիսի սպառազինություններ, որոնք գտնվում են տեխնոլոգիական կենսացիկլի սկզբնամասում: Դա հնարավորություն կտա ժամանակի ընթացքում կրկնօրինակել արտադրական տեխնոլոգիաները և նախաձեռնել նման սպառազինությունների տեղական արտադրություն (Հնդկաստանի օրինակով);

- Հաշվի առնելով այն, որ սպառազինությունների համաշխարհային շուկա որպես արտադրող մուտք գործելը փոքր երկրների համար բավական դժվար է, այդ ուղղությամբ քաղաքականության հիմքում դնել համաշխարհային շուկայում արդեն որոշակի տեղ զբաղեցնող ընկերությունների հետ համատեղ ձեռնարկությունների հիմնումը, այս ոլորտում միջազգային (մասնավորապես ԵՄՏՄ գործընկեր երկրների) արտադրական արժեշրթաներում որոշակի մասնակցություն (առանձին բաղադրիչների արտադրություն, ներմուծված բաղադրիչների տեղում հավաքում, լիցենզիաների և թույլտվությունների հիման վրա որոշ սպառազինությունների տեղական արտադրություն) ունենալու պայմանագրերի ձեռքբերումը:

Արդյունաբերական քաղաքականություն

- Արդյունաբերական քաղաքականության հիմքում դնել կլաստերային զարգացման հայեցակարգը՝ երկրում նոր արժեշրթանների ձևավորման և դրանցում յուրաքանչյուր արտադրական ոլորտի (ձեռնարկության) որոշակիացված մասնակցության ռազմավարական մոտեցումների մշակման հիման վրա: Նման առաջարկը հիմնավորված է ռազմարդյունաբերության ոլորտի ներուժով՝ արդյունավետ կերպով կենտրոնացնելու մի շարք փոխկապակցված արտադրական ոլորտների (մեքենաշինություն, մետաղամշակում, քիմիական արդյունաբերություն, տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրական ոլորտ) գործունեությունը և նպատակաուղղել երկրի գերակա (տնտեսական, քաղաքական և սոցիալական) խնդիրների լուծմանը;
- Օժանդակել ոլորտում մասնավոր ձեռնարկատիրության զարգացմանը (վարկերի պետական սուբսիդավորման, հարկային արտոնությունների ճանապարհով), մասնավորապես փոքր գիտատար ընկերությունների հիմնադրմանը, որոնք կմասնագիտանան երկակի նշանակության ապրանքների արտադրությունում և կսպասարկեն ռազմարդյունաբերության ոլորտը, իսկ զարգացման որոշակի մակարդակի հասնելուց հետո կդադարեցվի պետական աջակցությունը:

Ֆինանսական ոլորտ

- Ռազմարդյունաբերության ոլորտում ներդրումների սակավության հիմնախնդիրը կարելի է լուծել, եթե ոլորտում գործող ձեռնարկություններին հնարավորություն ընձեռվի թողարկել սեփական պարտքային գործիք-

ներ պետական երաշխավորությամբ, այդպիսով դրանք կարող են շրջանառվել նաև ֆինանսական երկրորդային շուկաներում՝ միաժամանակ նպաստելով երկրում ֆինանսական շուկայի զարգացմանը (Սինգապուրի օրինակ);

- Ռազմարդյունաբերության ոլորտում ներդրումներին կարելի է ուղղել նաև պարտադիր կուտակային համակարգով ձևավորված կենսաթոշակային հիմնադրամների միջոցները: Ներդրումների նպատակայնությունը և ընդհանուր գործընթացի թափանցիկությունը զգալիորեն կբարձրացնեն հասարակության լայն շերտերի վստահությունն իրականացվող կենսաթոշակային քաղաքականության նկատմամբ՝ իրան հանդիսանալով կամավոր կենսաթոշակային վճարումների պատրաստակամության բարձրացման համար;
- Ձևավորել ռազմարդյունաբերության զարգացման հատուկ ֆոնդ (ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների առողջությանը կամ կյանքի վնասի փոխհատուցման ֆոնդի անալոգով), որտեղ կուտակվող միջոցները կուղղվեն ռազմավարական նշանակություն ունեցող արտադրական նախագծերի ֆինանսավորմանը:

Հուլիս, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *J.Brauer*, The Arms Industry in Developing Nations: History and Post-Cold War Assessment. Paper presented at the conference on *Military Expenditures in Developing and Emerging Nations*, Middlesex University, London, 1998.
2. *G.d'Agostino, J.P. Dunne and L.Pieron*, Assessing the Effects of Military Expenditure on Growth. *Oxford Handbook of the Economics of Peace and Conflict*. Oxford University Press, 2010.
3. *Лавринов Г.А.*, “О влиянии военных расходов на развитие экономики стран”, *Военная мысль*, 2007, №12.
4. *Чернавский Д.С., Малков С.Ю., Старков Н.И., Коссе Ю.В.*, Оборонно-промышленный комплекс и развитие экономики России // *Стратегическая стабильность*, 2004, №1, с. 37-47.
5. *Малков С.Ю., Чернавский Д.С., Ковалев В.И., Коссе Ю.В., Старков Н.И.*, Экономика России и обеспечение военно-стратегической стабильности // *Стратегическая стабильность*, 2005, №1, с.67-74.
6. *Малков С.Ю., Ковалев В.И., Коссе Ю.В.*, К вопросу об определении оптимальной величины оборонных расходов государства // *Стратегическая стабильность*, 2007, №2, с. 72-76.

7. Оборонная компонента российской экономики. С.М. Меньшиков, ЭКААР-РОССИЯ. Информ-бюллетень. Июль 2001 г. Выпуск 5, часть 1.
8. William N. Leonard, "Research and Development in Industrial Growth," *Journal of Political Economy* 79, no. 2 (Mar. - Apr., 1971), DOI: 10.1086/259741.
9. Guellec, D. and B. Pottelsberghe de la Potterie (2001). R&D Productivity Growth: Panel Data Analysis of 16 OECD Countries. OECD Economic Studies, no. 33.
10. Buck, D., K. Hartley and N. Hooper (1993). Defence Research and Development, Crowding Out and the Peace Dividend. *Defence and Peace Economics*, vol. 4, Issue 2, April.
11. Hartley, Keith. 2006. Defence R&D: Data issues. *Defence and Peace Economics* 17.
12. Chakrabarti, Alok K., and C. Lenard Anyanwu. 1993. Defense R&D, technology, and economic performance: A longitudinal analysis of the US experience. *IEEE Transactions on Engineering Management* 40.
13. Dan Peled. 2001. Defense R&D and Economic Growth in Israel: A Research Agenda.
14. Angus C. Chu, Ching-Chong Lai. Defense R&D: Effects on Economic Growth and Social Welfare. MPRA Paper No. 16325.
15. Pieroni, Luca, 2009. Military Expenditure and Economic Growth, *Defence and Peace Economics*.
16. Krause, Keith. *Arms and the State: Patterns of Military Production and Trade*. Cambridge: Cambridge University Press, 1992.

**ՀՀ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Գայանե Հարությունյան

Ամփոփագիր

Հոդվածն ամփոփում է «Ռազմարդյունաբերության, նորարարությունների և տնտեսական աճի միջև փոխկապվածությունները փոքր, բաց տնտեսությունում (ՀՀ օրինակ)» թեմայի շրջանակներում իրականացված մի շարք հետազոտությունների արդյունքներ: Մասնավորապես. 1) ներկայացվել է ռազմարդյունաբերության ոլորտի ներուժային համակարգաստեղծ նշանակությունն ամբողջ տնտեսության համար՝ պայմանավորված այլ ճյուղերի հետ համագործակցության լայն հնարավորություններով, 2) վերլուծվել է *տնտեսական աճի* վրա ռազմական ծախսերի ազդեցությունը, 3) ուսումնասիրվել է ռազմական ոլորտում ԳՀՓԿԱ հնարավոր ազդեցությունը *տնտեսական զարգացման* վրա: Հիմնվելով կատարված հետազոտության, ինչպես նաև ռազմարդյունաբերության զարգացման հիմքով տնտեսական աճի էական ցուցանիշներ արձանագրած փոքր բաց տնտեսությամբ երկրների փորձի վրա՝ տեղական ռազմարդյունաբերության զարգացումը դիտարկվել է որպես արդի աշխարհա-

քաղաքական պայմաններում երկրի անվտանգության գերխնդրի լուծման միակ և տնտեսական զարգացման խնդրի լուծման առավել արդյունավետ եղանակ, և այդ համատեքստում առաջարկվել է տարբեր ոլորտներում իրականացնել որոշակի միջոցառումները:

ПРИОРИТЕТЫ РАЗВИТИЯ ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ РА

Գայանե Արությունյան

Резюме

В статье обобщены результаты ряда исследований, проведенных в рамках научной темы «Взаимозависимости между военной промышленностью, инновациями и экономическим ростом в малой открытой экономике (на примере Армении)». В частности: 1) представлена потенциальная системообразующая роль военно-промышленного сектора для экономики в целом, обусловленная широкими возможностями сотрудничества с другими секторами; 2) проанализировано влияние военных расходов на экономический рост; 3) изучено возможное влияние военных НИОКР на экономическое развитие. На основе проведенного исследования, а также опыта стран с малой открытой экономикой, добившихся значительного экономического роста посредством развития военной промышленности, было предложено: рассмотреть развитие собственной военной промышленности как *единственное решение* сверхзадачи обеспечения безопасности страны в современных геополитических условиях и как *наиболее эффективный способ* экономического развития, и в этом контексте были рекомендованы определенные меры в различных секторах экономики.

PRIORITIES OF THE MILITARY INDUSTRY DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

Gayane Harutyunyan

Resume

The article summarizes the results of some studies conducted in the framework of the scientific theme "Interdependence between the military industry, innovations and economic growth in small open economy". In particular: 1) the potential system-

forming importance of the military-industrial sector for the economy is presented, stemming from the broad opportunities for cooperation with other sectors; 2) the impact of military spending on economic growth is analyzed; 3) the possible impact of military R&D on economic development has been studied. On the basis of this study and the experience of countries with small open economies that achieved significant economic growth through the development of the military industry, it is proposed to consider the development of indigenous military industry as a *unique solution* to the ultimate priority of ensuring the country's security in modern geopolitical conditions and the *most effective way* of solving economic development problem of the country. In this context, certain measures are recommended to implement in various sectors of the economy.

ՊԵՏՈՒԹՅԱՆ «ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ՉԱՓԵԼԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՆԴԵՔՄՆԵՐԸ

Նարեկ Մինասյան՝

Բանալի բառեր՝ «փափուկ ուժի» կոնցեպտ, միջազգային հարաբերություններ, «փափուկ ուժի» չափելիություն, ինդեքսներ:

Պետության ուժի բնույթը մշտապես ենթարկվել է փոփոխությունների: Ժամանակի ընթացքում փոփոխվել են ուժի չափորոշիչները, առաջ են եկել ուժի նոր սուբյեկտներ: Պատմականորեն այդ ուժը չափվել է բնակչության քանակով, տարածքով, բնական ռեսուրսներով, տնտեսական հզորությամբ, ռազմական ուժով և այլն: Օրինակ՝ մինչինդուստրիալ ժամանակաշրջանում պետության հիմնական ուժը համարվում էր նրա բնակչությունը. այն մի կողմից պետությանն ապահովում էր զինվորներով, մյուս կողմից՝ հարկերի տեսքով տրամադրում էր ֆինանսական միջոցներ: Ավելի ուշ պետության ուժի հիմնական դետերմինանտ դարձավ արդյունաբերությունը: 18-րդ դարի կեսից սկսած՝ հենց բրիտանական արդյունաբերության աճող պահանջներն էին հանդիսանում բրիտանական նավատորմի բուռն զարգացման խթաններից մեկը: Այնուհետև արդյունաբերությամբ և հետևաբար՝ ուժով առաջ անցավ Գերմանիան, որն իր երկաթուղային համակարգի միջոցով կարողանում էր մեծ հեռավորության վրա իրականացնել զորքերի արագ տեղաշարժ: Արդյունաբերության և բնակչության դերը հաստատում են այն գաղափարը, որ պետության ուժի ավանդական ընկալումը նույնացվել է պետության «պատերազմելու հզորությանը» [1]:

Պետության ուժի ժամանակակից սահմանումներում դասական փոփոխականները (աշխարհագրություն, բնակչություն, օգտակար հանածոներ և այլն) համեմատաբար քիչ են կարևորվում, դրանց փոխարեն ավելի մեծ ուշադրություն է դարձվում տեխնոլոգիաներին, կրթությանը, կոմունիկացիաներին, կազմակերպչական և ինստիտուցիոնալ հմտություններին, տնտեսական հզորությանը և այլ փոփոխականներին:

¹ ԵՊՀ ասպիրանտ:

1990-ականներից միջազգային հարաբերությունների տեսության մեջ պետության ուժի ավանդական՝ ռազմական (կոշտ) ընկալմանը զուգահեռ՝ դրվեց պետության «փափուկ ուժի» կոնցեպտուալ ձևակերպման հիմքը: Հարվարդի համալսարանի Քենեդու անվան պետական կառավարման դպրոցի պրոֆեսոր Ջոզեֆ Նայն առաջինն էր, որը ձևակերպեց և գիտական շրջանառության մեջ մտցրեց «փափուկ ուժ» եզրույթը:

Ըստ Նայի՝ «փափուկ ուժն ունակությունն է հասնելու այն բանին, որպեսզի մյուսները ցանկանան այն արդյունքը, ինչը դու ես ցանկանում» [2], սակայն ոչ թե օբյեկտին հարկադրելու, այլ համոզելու և գրավելու միջոցով: Մյուսների ցանկությունների և վարքի վրա ազդեցությունը կախված է ռեսուրսներից, դրանք կիրառելու ունակությունից, ինչպես նաև դրանց կիրառման միջավայրից: Եթե պետության ավանդական՝ կոշտ ուժը հիմնվում է ռազմական և տնտեսական հզորության վրա, ապա «փափուկ ուժի» ռեսուրսներն են տվյալ պետության մշակույթը, նրա քաղաքական արժեքները, գաղափարախոսությունը և իրականացվող արտաքին քաղաքականությունը [3, p. 11]:

Ըստ մենեջմենթի տեսության՝ կառավարման և վերահսկողության ենթակա են միայն չափելի ցուցանիշները: Չափելիության անհնարինության դեպքում գործունեության այս կամ այն ուղղության կառավարումը ևս դառնում է անհնար: Այս օրինաչափությունը վերաբերում է նաև պետության «փափուկ ուժին»: Միջազգային հարաբերություններում, «փափուկ ուժի» արդյունավետ կիրառման խնդրով պայմանավորված, բավական մեծ է ուշադրությունը «փափուկ ուժի» չափելիության խնդրին: Ի տարբերություն կոշտ ուժի, որի ռեսուրսները նյութական են, իսկ կիրառությունը չափելի՝ «փափուկ ուժի» չափելիությունն ունի որոշակի բարդություն, ինչը պայմանավորված է մի քանի գործոնով, որոնցից կարելի է առանձնացնել.

1. ռեսուրսների ոչ նյութական բնույթը,
2. ռեսուրսների իրացման համար անհրաժեշտ երկար ժամանակը,
3. «փափուկ ուժի» ազդեցության փոփոխականությունը (օրինակ՝ մի քանի վատ որոշումների արդյունքում),
4. «փափուկ ուժի» աղբյուրների բազմազանությունը:

Թեև Ջոզեֆ Նայն իր ներկայացրած կոնցեպտի շրջանակներում առանձին չի անդրադարձել «փափուկ ուժի» չափելիության խնդրին, այնուամենայնիվ, նրա հեղինակած տարբեր աշխատանքներում առկա են որոշակի չափորոշիչներ, որոնք նա կարևորել է պետության «փափուկ ուժի»

ընդգծման համար: Նման չափորոշիչներից մեկը պետության մշակույթի տարածման մակարդակն է իր սահմաններից դուրս: Նա առանձնացնում է բարձրագույն մշակույթի՝ գրականության և արվեստի կարևորությունը՝ նշելով, որ, օրինակ, Գերմանիան և Բրիտանիան երրորդը և չորրորդն են աշխարհում գրքերի վաճառքով [3, p. 76]: Որպես «փափուկ ուժի» մեկ այլ կարևոր փոփոխական նա առանձնացնում է օտարերկրյա ուսանողների կրթությունը տվյալ երկրի կրթական հաստատություններում: Օտարերկրյա քաղաքացիներին սեփական կրթական հաստատություններում կրթություն տալու կարևորությունը բավական հետաքրքիր է բնորոշել ԱՄՆ նախկին պետքարտուղար Քոլին Փաուելը. «Ես չեմ կարող պատկերացնել առավել մեծ հարստություն, քան ապագա համաշխարհային առաջնորդների բարեկամությունը, ովքեր կրթություն են ստացել այստեղ» [4]: Նայի աշխատանքներում հանդիպող մեկ այլ ցուցիչ է ազատությունը: Ըստ նրա՝ այնպիսի արժեքներ, ինչպիսիք են ժողովրդավարությունը, անձնական ազատությունը, սոցիալական շարժունակությունը և բացությունը, նպաստում են ամերիկյան ուժի ամրապնդմանը տարբեր երկրներում [5]: Այդ արժեքների ժամանակակից և առավել համակողմանի չափման օրինակ կարելի է դիտարկել *Freedom House*-ի կողմից կատարվող երկրների վարկանիշավորումը՝ ըստ ազատության տարբեր չափորոշիչների:

«Փափուկ ուժի» չափման առաջին չհամակարգված և ոչ մասնագիտացված փորձերը սկսվել են տեսության կայացմանը զուգահեռ: Արդեն 2000-ական թվականներից լույս տեսան առաջին աշխատանքները, որոնք ուղղված էին ժամանակակից պետությունների «փափուկ ուժի» չափմանը: Առաջին նման հետազոտություններից էր գլոբալ հարցերով Չիկագոյի խորհրդի «Փափուկ ուժն Ասիայում 2008» ծրագիրը, որը, սակայն, սահմանափակվում էր միայն տարածաշրջանի երկրներով [6]: «Փափուկ ուժի» առավել ընդգրկուն և համակարգված չափման ուղղությամբ առաջին փորձը կարելի է համարել բրենդինգի և մշակութային քաղաքականության բրիտանացի մասնագետ Ջոնաթան Մրքթլորիի 2010-ին հեղինակած զեկույցը: Աշխարհում «փափուկ ուժի» չափմանը նվիրված այդ զեկույցում ներկայացված է «փափուկ ուժի» առաջին բարդ ինդեքսը՝ «*Soft power index*»:

Մասնագիտական գրականության մեջ «փափուկ ուժի» չափելիության խնդիրը դիտարկվում է ինչպես պետության ընդհանուր «փափուկ ուժի», այնպես էլ այդ ուժի առանձին բաղադրիչների գնահատման կտրվածքով: Որպես պետության «փափուկ ուժի» չափման փոփոխականներ՝ դիտարկվում են տեխնոլոգիական նորարարությունը, պետության ցուցաբերած

միջազգային օգնությունը, լեզուների տարածումը, արվեստի, ֆիլմերի և մշակույթի այլ դրսևորումների տարածումը, կառավարությունների հեղինակությունը, տուրիզմը, ներգաղթը, դաշնակցային կապերը, հեռահաղորդակցության զարգացածության մակարդակը և այլն: Բացի այդ, երբեմն կիրառվում են հարցումները՝ փորձելով ստանալ այնպիսի հարցերի պատասխաններ, ինչպիսիք են՝ «ո՞ր երկրի արտադրանքը կցանկանայիք գնել», «ո՞ր երկրի լրատվությանը կվստահեիք» կամ «որտե՞ղ կցանկանայիք ապրել, բացի ձեր երկրից» [7]:

Հաշվի առնելով «փափուկ ուժի» չափման մոտեցումների տարբերությունները և չափորոշիչների բազմազանությունը՝ դրանք կարելի է պայմանականորեն բաժանել երեք խմբի.

1. **Վարկանիշային հետազոտություններ:** Նման հետազոտության շրջանակներում «փափուկ ուժի» պոտենցիալն ուսումնասիրվում է որպես պետության «փափուկ ուժի» ռեսուրսների և աղբյուրների ամբողջություն: Համեմատական մեթոդի միջոցով համադրվում են տարբեր պետությունների «փափուկ ուժի» պոտենցիալները, ինչպես նաև նրանց առանձին ռեսուրսները: Այս ամենը հնարավորություն է տալիս դուրս բերել «փափուկ ուժի» տեսանկյունից պետության ուժեղ և թույլ կողմերը, ինչն իր հերթին ստեղծում է գործունեության լայն դաշտ:
2. **Կիրառական հետազոտություններ:** Այս հետազոտություններում վերլուծության են ենթարկվում «փափուկ ուժի» գործիքները (ծրագրեր, միջոցառումներ և այլն), ինչպես նաև պետության և ոչ պետական դերակատարների կողմից դրանց կիրառումը: Նման գործիքները կոչված են պոտենցիալ «փափուկ ուժը» վերածել իրականի՝ թիրախավորված ազդեցություն գործելով այլ երկրների հասարակության տարբեր խմբերի վրա, և բարելավել ազդեցության սուբյեկտի նկատմամբ վերաբերմունքը: Կախված նպատակից՝ նման հետազոտությունները կարող են ուղղված լինել կիրառվող գործիքների քանակական և որակական գնահատմանը (օրինակ՝ տնտեսական նպատակահարմարություն, նպատակահարմարությունը՝ պայմանավորված լսարանի քանակով): Իսկ համեմատական մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս համադրել ինչպես տարբեր պետությունների կողմից կիրառվող գործիքակազմը, այնպես էլ նույն պետության կողմից կիրառվող տարբեր գործիքներ:
3. **Արդյունավետության հետազոտություններ:** Հետազոտությունների այս խումբը խնդիր է հետապնդում գնահատել «փափուկ ուժի» ար-

դյունքը կամ ազդեցությունը թիրախի վրա: Հատկանշական է, որ արդյունքը կարող է դիտարկվել երկու կտրվածքով՝ վերաբերմունքի փոփոխություն և վարքի փոփոխություն: Օբյեկտ երկրում փոփոխությունները դիտարկվում են որակական և քանակական կտրվածքով և կարող են գնահատվել սոցիոլոգիական հարցումների, վիճակագրական տվյալների (գրոսաշրջիկների քանակ, օտարերկրյա ներդրումների ծավալ և այլն) միջոցով: Միննույն ժամանակ, պետք է հաշվի առնել, որ հանրային կարծիքի կամ վարքի փոփոխությունները կարող են տեղի ունենալ այլ, երբեմն՝ իրարից անկախ գործոնների ազդեցությամբ, ուստի բավական դժվար է ապացուցել, որ թիրախի մոտ նկատվող փոփոխությունները հենց «փափուկ ուժի» գործիքների ազդեցության հետևանք են:

Որպես պետությունների «փափուկ ուժի» չափման առավել ամբողջական մեխանիզմներ դիտարկվում են տարբեր փոփոխականների վրա հիմնված միջազգային ինդեքսները: Դրանք տարբերվում են՝ կախված հետազոտության նպատակներից, երկրների ընդգրկման մասշտաբից և առանձնացված փոփոխականներից:

Ջոնաթան Մրքթլորիի հեղինակած *Փափուկ ուժի ինդեքսը (Soft power index)* մշակվել է բրիտանական «Կառավարման ինստիտուտ»-ի և «*Monocle*» ամսագրի համագործակցության շրջանակներում իրականացված ուսումնասիրության արդյունքում [8]: Երեք տարի հրապարակված ուսումնասիրությունների մեջ ներկայացվում է պետությունների «փափուկ ուժի» պոտենցիալի համեմատական համադրում՝ հիմնվելով 50 չափորոշիչների վերլուծության վրա, որոնք բաժանվում են 5 խմբի՝ պետական կառավարում, մշակույթ, դիվանագիտություն, կրթություն և բիզնես/նորարարություն:

Ջոնաթան Մրքթլորին հետագայում «*Portland*» մեդիա-ընկերության հետ 2015թ. հրատարակեց «Փափուկ ուժ 30» («*The Soft Power 30*») զեկույցը՝ Ջոզեֆ Նայի նախաբանով [9]: Այն պետությունների «փափուկ ուժի» չափման թարմացված ինդեքսն է ներկայացնում, որը հիմնվում է 6 ենթաինդեքսների վրա՝ կառավարություն, ներգրավվածություն, մշակույթ, կրթություն, ձեռնարկատիրություն, թվային միջոցներ: Յուրաքանչյուր ենթաինդեքս իր հերթին բաղկացած է ցուցիչներից: «*The Soft Power 30*» ամենամյա զեկույցում ներկայացված են աշխարհի առաջատար 10 երկրները՝ ըստ յուրաքանչյուր ենթաինդեքսի, ինչպես նաև երկրների աշխարհի առաջատար 30 երկրների վարկանիշային ցանկը՝ ըստ «փափուկ ուժի» ընդհանրական ինդեքսի:

«Ernst&Young» ընկերությունը և «СКОЛКОВО» բիզնես դպրոցի արագ զարգացող շուկաների Մոսկվայի ինստիտուտը համատեղ մշակել են *Զարգացող շուկաների փափուկ ուժի ինդեքսը (Emerging Markets Soft Power Index)* [10]: Այս վարկանիշային հետազոտությունը կրում է պարբերական բնույթ: Հրապարակված առաջին ուսումնասիրությունը ներառում է 2005-2010թթ. ընկած ժամանակահատվածը: Ինդեքսը հաշվարկվում է ըստ 13 փոփոխականի, որոնք բաժանված են երեք խմբի՝ համաշխարհային ինտեգրվածություն, համաշխարհային հեղինակություն, գլոբալ ամբողջականություն:

Համաշխարհային ներկայության ինդեքսը (Global Presence Index) հրապարակվում է 2010-ից իսպանական Էլկանո թագավորական ինստիտուտի կողմից [11]: Ինդեքսը բաղկացած է 3 տարբեր բաղադրիչից՝ ռազմական, տնտեսական և «փափուկ» ներկայություն: Դրանցից յուրաքանչյուրը հաշվարկվում է տարբեր երկրներում աշխատող փորձագետների շրջանում իրականացվող հարցումների արդյունքների հիման վրա:

Անհոլտ-GfK Roper ազգային բրենդների ինդեքսը (Anholt-GfK Roper Nation Brands Index) հրապարակվում է մարքեթինգային ուսումնասիրություններում մասնագիտացած GfK ընկերության և ազգային բրենդինգի բրիտանացի հայտնի մասնագետ Սայման Անհոլտի կողմից: 50 պետության վարկանիշավորումն իրականացվում է աշխարհի 20 զարգացած և զարգացող երկրներում կազմակերպվող հարցումների արդյունքների հիման վրա, որոնց մասնակցում է շուրջ 20 հազար հոգի: Պետությունները գնահատվում են 6 չափորոշիչով՝ մարդիկ, պետական կառավարում, արտահանում, զբոսաշրջություն, մշակույթ և ժառանգություն, ներդրումներ և ներգաղթ [12]:

«Reputation Institute» խորհրդատվական ընկերությունը 2010-ից հրապարակում է ամենամյա *Երկրների հեղինակության վարկանիշը (Country-RepTrack)*՝ հիմնվելով Մեծ ութնյակի (G8) երկրների բնակչության շրջանում հանրային կարծիքի հարցումների վրա [13]: Ինդեքսը հիմնված է զբացմունքային և ռացիոնալ գործոնների վրա, որոնք պայմանավորում են մարդկանց վերաբերմունքը որևէ երկրի նկատմամբ: Զբացմունքային գործոններից են հարգանքը, հիացմունքը, վստահությունը, իսկ ռացիոնալներից՝ տնտեսության, կառավարման, միջավայրի գնահատականը:

«Փափուկ ուժի» չափման ներկայացված միջազգային ինդեքսները տարբերվում են թե՛ մեթոդաբանությամբ, թե՛ առանձնացված չափորոշիչներով, թե՛ նպատակով: Այս ամենը, բնականաբար, չի կարող իր արտահայտումը չունենալ այդ ինդեքսների հիման վրա իրականացված հետազո-

տությունների, վարկանիշավորման արդյունքների վրա: Այս ամենն առավել պատկերավոր ներկայացված է *Աղյուսակ 1*-ում.

Աղյուսակ 1

2016թ. «Վիափուկ ուժի» ամենամեծ պոտենցիալն ունեցող 10 երկրները՝ ըստ տարբեր միջազգային ինդեքսների

	The Soft Power 30	Anholt-GfK Nation Brands Index 2016	2016 Country RepTrak
1	ԱՄՆ	ԱՄՆ	Շվեդիա
2	Մեծ Բրիտանիա	Գերմանիա	Կանադա
3	Գերմանիա	Մեծ Բրիտանիա	Շվեյցարիա
4	Կանադա	Կանադա	Ավստրալիա
5	Ֆրանսիա	Ֆրանսիա	Նորվեգիա
6	Ավստրալիա	Իտալիա	Ֆինլանդիա
7	Ճապոնիա	Ճապոնիա	Նոր Զելանդիա
8	Շվեյցարիա	Շվեյցարիա	Դանիա
9	Շվեդիա	Ավստրալիա	Իռլանդիա
10	Նիդեռլանդներ	Շվեդիա	Նիդեռլանդներ

«Փափուկ ուժի» չափելիության և դրա մեխանիզմների ուսումնասիրության պարագայում բավական կարևոր է հստակ պատկերացնել, թե ինչն է համարվում պետության «փափուկ ուժի» չափորոշիչ, այսինքն՝ մի կողմից տարանջատել պետության «փափուկ ուժի» ռեսուրսների որակական և քանակական գնահատականները, մյուս կողմից՝ աշխարհում նրանց իրական ազդեցության ընկալումը: Այս ամենի մանրակրկիտ վերլուծությունը յուրաքանչյուր պետության համար ստեղծում է լայն հնարավորություններ ինչպես «փափուկ ուժի» առավել արդյունավետ իրացման, այնպես էլ ռազմավարական պլանավորում կատարելու համար:

Հաշվի առնելով միջազգային հարաբերություններում «փափուկ ուժի» դերակատարման աճի միտումները, ինչպես նաև «փափուկ ուժի» կոնցեպտի նկատմամբ առկա հետաքրքրությունը՝ կարելի է միանշանակ պնդել, որ «փափուկ ուժի» կոնցեպտի օպերացիոնալացման գործընթացը շարունակելու է թափ հավաքել: Չնայած մինչ օրս չի մշակվել «փափուկ ուժի» չափելիության ունիվերսալ մեխանիզմ, այնուամենայնիվ, այսօր առկա տարբեր ինդեքսների և ուսումնասիրությունների բազմազանությունը յուրաքանչյուր պետության հնարավորություն է տալիս առավել հստակ պատկերաց-

նեկ միջազգային հարաբերություններում առկա իրողությունները՝ ուրվագծելով նաև աշխատանքի լայն դաշտ:

Հունիս, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Joseph Nye*, Why military power is no longer enough, 2002, from <https://www.theguardian.com/world/2002/mar/31/1>
2. *Joseph Nye*, Soft power // Foreign Policy, No. 80, Autumn 1990, p. 167.
3. *Joseph Nye*, Soft Power: The Means to Success in World Politics, Public Affairs, 2004.
4. Secretary Colin L. Powell Statement on International Education Week 2001 Washington, DC, August 7, 2001 from <https://2001-2009.state.gov/secretary/former/powell/remarks/2001/4462.htm>
5. *Joseph Nye*, The Paradox of American Power, Why the World's Only Superpower Can't Go It Alone. New York: Oxford University Press, 2002, p. 11.
6. *Jonathan McClory*, *The new persuaders: an international ranking of soft power*, Institute for Government, 2010 https://www.instituteforgovernment.org.uk/sites/default/files/publications/The%20new%20persuaders_0.pdf
7. *Gregory Treverton*, *Seth Jones*, Measuring National Power, RAND Corporation, 2005, p 11-14 from http://www.rand.org/content/dam/rand/pubs/conf_proceedings/2005/RAND_CF215.pdf
8. *Jonathan McClory*, *The new persuaders III: A 2012 Global Ranking of Soft Power*. 2013 http://www.noravank.am/upload/pdf/21_DAR_02_2017.pdf
9. *Jonathan McClory*, The Soft Power 30: A Global Ranking Of Soft Power, 2015, from http://comresglobal.com/wp-content/uploads/2015/07/Report_Final-published.pdf
10. Rapid-growth Markets Soft Power Ind, Ernst and Young, Spring, 2012, from [http://www.ey.com/Publication/vwLUAssets/Rapid-growth_markets:_Soft_power_index/\\$FILE/Rapid-growth_markets-Soft_Power_Index-Spring_2012.pdf](http://www.ey.com/Publication/vwLUAssets/Rapid-growth_markets:_Soft_power_index/$FILE/Rapid-growth_markets-Soft_Power_Index-Spring_2012.pdf)
11. Elcano Global Presence Report 2017, Real Instituto Elcano, Madrid, 2017, from http://www.globalpresence.realinstitutoelcano.org/en/data/Global_Presence_2017.pdf
12. Anholt-GfK Roper Nation Brands Index, 2016, from <http://nation-brands.gfk.com/>
13. Country RepTrak 2016: The Most Reputable Countries in the World, 2016, from <https://www.reputationinstitute.com/CMSPages/GetAzureFile.aspx?path=~%5Cmedia%5Cmedia%5Cdocuments%5Ccountry-reptrak-2016.pdf&hash=5a4232c6bfda0af12fca90660d5f8d18a657ac230d062e34e0bb589c0d3c1538&ext=.pdf>

**ՊԵՏՈՒԹՅԱՆ «ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ՉԱՓԵԼԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՎ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՆԴԵՔՍՆԵՐԸ**

Նարեկ Մինասյան

Ամփոփագիր

Հոդվածում վերլուծվում է «փափուկ ուժի» չափելիության խնդիրը՝ ներկայացնելով նրա բարդությունը, հիմնական չափորոշիչները և գործիքները: Հոդվածում առաջարկվել է փափուկ ուժի չափման հիմնական մոտեցումների և հետազոտությունների պայմանական դասակարգում, ինչպես նաև ներկայացված են դրանց մեթոդաբանությունը և հիմնական տարբերությունները: Առանձին անդրադարձ է կատարվել պետության փափուկ ուժի չափման տարբեր միջազգային ինդեքսների:

**ПРОБЛЕМА ИЗМЕРЕНИЯ «МЯГКОЙ СИЛЫ»
И МЕЖДУНАРОДНЫЕ ИНДЕКСЫ**

Нарек Минасян

Резюме

В статье анализируется проблема измерения «мягкой силы», в частности, сложность, основные критерии и инструменты ее измерения. Автором предложена условная классификация основных подходов измерения «мягкой силы», а также представлена их методология и основные отличия. В статье отдельно рассмотрены различные международные индексы, измеряющие «мягкую силу» государства.

**THE ISSUE OF MEASURING THE STATE'S "SOFT POWER"
AND THE INTERNATIONAL INDICES**

Narek Minasyan

Resume

The article analyzes the issue measuring the state's "soft power", and presents its complexity, key criteria and tools. The article proposes a conditional classification of the main approaches and studies of measuring "soft power", as well as presents their methodology and the main differences. In addition, various international indices for measuring the "soft power" of a state are discussed.

**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ
ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԳԻՏԵԼԻՔԱԶԵՆՔ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Ռոբերտ Խաչատրյան*

Բանալի բառեր՝ հետազոտական համալսարաններ, գիտելիքահենք տնտեսություն, գիտական արտադրանք, մարդկային կապիտալ, գիտական ներուժ, ֆինանսավորման աղբյուրներ:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի արդյունավետության բարձրացումն ու շարունակական կատարելագործումը մեծապես պայմանավորվում են ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության զարգացմամբ և դրա միջոցով համաշխարհային տնտեսական համակարգում կրթության ազգային համակարգի մրցունակության խթանման անհրաժեշտությամբ: Այս համատեքստում պետության կարևորագույն գործառույթներից է մրցունակ տնտեսության ստեղծումը: Մրցունակ տնտեսությունը ենթադրում է գիտելիքների վրա հիմնված տնտեսության ստեղծում և շարունակական զարգացում: Ըստ ՏՀԶԿ սահմանման՝ գիտելիքահենք է համարվում այն տնտեսությունը, որում առաջնային նշանակություն է տրվում գիտելիքի, նորարարության և տեղեկատվության «արտադրմանը», տարածմանն ու տնտեսության տարբեր ոլորտներում դրանց հետևողական կիրառմանը [1]:

Գիտելիքահենք տնտեսության ձևավորման և զարգացման գործընթացներում բարձրագույն ուսումնական հաստատությունները հանդես են գալիս որպես գիտելիքի ստեղծման ու փոխանցման, գաղափարների առաջացման, մշակման և գործադրման, նորարարությունների ու ստեղծագործական մտքի խթանման առանցքային դերակատարներ: Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում բարեփոխումների իրականացման հաջողության գրավականներից են բուհերի գործունեության ռազմավարա-

*ԵՊԼՀ որակի ապահովման կենտրոնի ղեկավար, կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ:

կան կառավարման արդյունավետությունը և կառավարման գործառույթներին ակնկալվող արդյունքների վերլուծության իրականացումը:

Գիտելիքահենք տնտեսության արագ զարգացման գործընթացում առաջնային դեր ունեն նաև գիտատար ոլորտների զարգացումը, նորարարական (ինովացիոն) գործունեությունը և գիտատար արտադրությունը, որն ընդգրկում է կրթությունը, գիտությունն ու հետազոտությունը, ժամանակակից հաղորդակցման և տեղեկատվական տեխնոլոգիաները: Գիտական հետազոտությունը դարձել է գլոբալ մրցակցային դաշտում շարունակաբար կարևորվող ռազմավարական ռեսուրս: Միջազգային պրակտիկայում այդ ռեսուրսը նպատակային օգտագործող և այդ ուղղությամբ գիտության ու կրթության ոլորտներում ներդրում կատարող ու արտադրանք ստեղծող հիմնական դերակատարներից են հետազոտական համալսարանները: Հետազոտական համալսարանները բարձրագույն կրթության համակարգի շահակիցներին ապահովում են միջազգային գիտական պաշարներից օգտվելու և ազգային ու միջազգային մակարդակներում հետազոտություն իրականացնելու լայն հնարավորություններ, որոնք միտված են գիտելիքի արժևորմանը համաշխարհային մակարդակում:

Հաշվի առնելով այս հիմնադրույթները՝ հողվածում վերլուծության է ենթարկվում հետազոտական համալսարանների և կենտրոնների դերակատարությունը Հայաստանի Հանրապետության գիտելիքահենք տնտեսության զարգացման համատեքստում, ներկայացվում են ՀՀ հետազոտական կենտրոնների հիմնական տեսակները, սահմանվում հետազոտական համալսարանների ստեղծման նպատակները:

Գիտելիքահենք տնտեսության զարգացման գործընթացում որոշիչ դեր ունի մարդկային կապիտալը, որի կարևոր բաղկացուցիչն են մտավոր ռեսուրսները: Ի տարբերություն նյութական ռեսուրսի՝ մտավոր ռեսուրսները շարունակաբար վերարտադրվում են և նոր դրսևորումներ ստանում [2, էջ 8]: ՀՀ-ի համար մարդկային կապիտալը միշտ էլ եղել է երկրի տնտեսության առաջնիչ գործոնը, հետևաբար պետության գերխնդիրը պետք է լինի մարդկային կապիտալի զարգացման և արդյունավետ օգտագործման համար նպաստավոր պայմաններ ստեղծելը: Այս համատեքստում չափազանց կարևոր են մրցունակ և զարգացած կրթության համակարգի ստեղծումը և գիտության ոլորտի անընդմեջ ֆինանսավորումը: ՀՀ գիտելիքահենք հասարակության կայացման և մարդկային կապիտալի ու գիտական ներուժի համախմբման գործում իրենց ուրույն տեղն ունեն նաև բուհական համակարգին կից գործող գիտահետազոտական կենտրոնները: Դրանք

հիմնականում պետության կողմից ֆինանսավորվող պետական հաստատություններ են, որոնք կոչված են ինտեգրելու գիտությունը, կրթությունն ու արտադրությունը՝ շղթայակցելով երկրի կրթության, գիտության և արտադրության համակարգերի շրջափուլերը: Հետազոտության ոլորտում պետական ներդրումների վերադարձելիության ցուցանիշները պետք է նաև արտացոլվեն միջազգային հրատարակությունների և շնորհված արտոնագրերի քանակի մեջ, որն էլ իր հերթին համախմբում է հետազոտողների, հետազոտական կենտրոնների (օրինակ՝ համալսարան, ինստիտուտ), լաբորատորիաների և գրադարանների թվաքանակը, ինչպես նաև հետազոտության ռազմավարությունների թիրախավորված ուղղորդման աստիճանը: Բարձրագույն կրթության համակարգում հետազոտական համալսարանների ենթակառուցվածքի ստեղծումը¹ կարող է ապահովել արդյունավետ համագործակցային և նորարարական հետազոտական միջավայր՝ կիրառման համար առավելագույնս մատչելի դարձնելով առկա ռեսուրսները, բազմազանեցնելով գիտության ոլորտում ֆինանսական միջոցների ծավալները և աղբյուրները, ինչպես նաև բացահայտելով շահակիցների կարիքներն ու խթանելով միջգիտակարգային հետազոտությունների իրականացումն ու գիտական կառավարման մշակույթը:

Բացի ավանդական գիտակրթական կառույցներից, ինստիտուտներից և մասնագիտական կրթության ծառայություններ մատուցող բուհերից, մտավոր ռեսուրսների զարգացման այդ գործընթացի կազմակերպման կարևոր հիմք են հանդիսանում նաև գիտահետազոտական կենտրոնները (*think tanks*): Դրանք հետազոտական-վերլուծական կազմակերպություններ են, որոնք հանրային քաղաքականության ոլորտում իրականացնում են հետազոտական-վերլուծական գործունեություն, տրամադրում խորհրդատվություններ և արտաքին հիմնախնդիրների հաղթահարման ուղղությամբ՝ դրանով իսկ նպաստելով քաղաքականություն մշակողների և հանրության կողմից իրազեկ որոշումների կայացմանը [3, p. 8]: Որոշ երկրներում, հատկապես ԱՄՆ քաղաքական կյանքում, կարևոր դեր ունեն նաև շահերի խմբերին սպասարկող հետազոտական կենտրոնները [3, p. 19]: Մակայն պետք է նշել, որ նրանց ստեղծած գիտական «արտադրանքը» դեռևս ամբողջությամբ չի ներդրվում տնտեսության և առհասարակ պետության զարգացման մեջ: Սա պայմանավորված է մի շարք հանգամանքներ-

¹ Սյս խնդրի իրականացման, հիմնախնդրի դիտարկման ժամանակ հարկավոր է հաշվի առնել նաև ներկայում գործող գիտահետազոտական խնդիրների գործունեության ծավալումը համալսարանների կազմում:

րով: Նախևառաջ գիտելիքահենք տնտեսության մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է շեշտը դնել բուհական հետազոտական կենտրոնների նյութատեխնիկական հագեցածության ապահովման և դեպի նորարարությունները կողմնորոշման վրա: Երկրորդ՝ բուհական գիտահետազոտական կենտրոնները պետք է ցուցաբերեն ճկունություն և ակտիվ համագործակցեն ՏՏ ոլորտի առաջատար կազմակերպությունների հետ, քանի որ գիտելիքահենք տնտեսության կարևոր ակտիվներն են գիտելիքը և բարձր ՏՀՏ-ն, հետևաբար դրանց տիրապետումը և կիրառումը կապահովի պետության մրցակցային առավելությունների ձեռքբերումը: Այս առումով կարևորվում է նաև գիտահետազոտական կենտրոնների «արտադրանքի» նյութականացումը և ապրանքայնացումը, ինչը ենթադրում է «գիտելիքի արտադրում, փոխադրում և վաճառք» [4, p. 133]: Սա հնարավորություն կտա ապահովել գիտության ոլորտում կատարվող ներդրումների վերադարձելիություն և կնպաստի գիտատար արտադրության շարունակական ընդլայնմանը: ՀՀ բուհական հետազոտական կենտրոնների շրջանում լուրջ խնդիր է մասնավոր հատվածի հետ համագործակցության պակասը, որի հետևանքով գիտատար արտադրության ծավալները դեռևս շատ փոքր մաս են կազմում ընդհանուր արտադրության ոլորտում: Նշված խնդիրների հետ մեկտեղ, պետք է նշել, որ բուհական գիտահետազոտական կենտրոններն ունեն նաև լուրջ առավելություններ [5, էջ 63; 6], մասնավորապես.

- դրանք հնարավորություն են տալիս արդյունավետորեն օգտագործել բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի մտավոր ներուժը,
- նպաստում են բուհի հեղինակության բարձրացմանը,
- իրենց հետազոտական աշխատանքներում ներգրավում են գիտական ներուժ ունեցող ուսանողներին՝ առավել գրավիչ դարձնելով բուհի գործունեությունը,
- որոշ չափով լուծում են «ուղեղային կենտրոնների» ֆինանսավորման հետ կապված խնդիրները,
- նպաստում են մի շարք կարևոր ոլորտներում (քաղաքական) կիրառական հետազոտությունների իրականացմանն ու պետական մարմինների հետ համագործակցությանը:

ՀՀ կառավարությունը կարևորում է ՀՀ-ում գիտության վրա հիմնված տնտեսության և հասարակության զարգացումը՝ խրախուսելով ազգային և միջազգային մակարդակներում համագործակցությունների ակտիվացմանը միտված հետազոտության ռազմավարությունների մշակումը: Հետազոտա-

կան համալսարանները սովորաբար ռեսուրսակենտրոն են, և նման համալսարաններ հիմնելն ու գործարկելն ավելի թանկ է, քան այլ ուսումնական հաստատությունները, քանի որ հետազոտական համալսարանների գործունեությունը պահանջում է թանկարժեք գիտական սարքավորումների, արագ զարգացող և թանկարժեք տեղեկատվական տեխնոլոգիաների առկայություն, մուտքի/հասանելիության ապահովում համաշխարհային գիտական գիտելիքի աղբյուրներին, ինչպես նաև գիտական աշխատողներին վճարելու համար անհրաժեշտ ավելի շատ ֆինանսական ռեսուրսներ, բարձր դրույքաչափեր, քան սահմանված է այլ ուսումնական հաստատություններում:

ՀՀ տարածքում հետազոտական համալսարաններ հիմնելու, գործարկելու և այդ գործընթացի արդյունավետ կազմակերպման հիմնական նպատակներն են.

- մշակել և ընդունել գիտության ոլորտի ֆինանսավորման քաղաքականություն, որը միտված է արտադրողականության, որակի և արդյունավետության ապահովմանը՝ հաշվի առնելով գիտության ոլորտում ՀՀ կառավարության առաջնահերթությունները և գերակա ուղղությունները,
- ստեղծել գիտության ֆինանսավորման ապակենտրոնացված մոդելի հիմքեր՝ հնարավորություն տալով համապատասխան ենթակառուցվածքներին հանդիսանալու ծախսային կենտրոններ և ռեսուրսները բաշխելու ըստ ռազմավարական առաջնահերթությունների,
- գիտության զարգացման ռազմավարության համաձայն՝ մինչև 2020թ. գիտության ֆինանսավորումը Հայաստանում պիտի կազմի ՀՆԱ մոտ 2%-ը՝ մինչև 2025թ. 5%-ով պետական բյուջեից ավելացնելով գիտահետազոտություններին հատկացվող ծախսերը և զարգացնելով առանցքային ցուցանիշները՝ վերահսկելով գիտության զարգացմանն ուղղված ռեսուրսների օգտագործումը,
- մշակել տաղանդների կառավարման պետական քաղաքականություն՝ խթանելու կրթության և գիտության բոլոր աստիճաններում ուսումնառող և աշխատող տաղանդների բացահայտմանն ու նրանց ներուժի արդյունավետ օգտագործմանը՝ ապահովելով մասնագիտական վերապատրաստման իրականացման համապատասխան աշխատանքները,
- բազմազանեցնել հիմնարար հետազոտության իրականացման ուղղությամբ ներդրումները մինչև 2025թ.՝ ազգային մակարդակում գիտահետազոտական աշխատանքների իրականացումը սահմանելով որպես ռազմավարական առաջնահերթություն և գերակա ուղղություն,

- խթանել թեկնածուական և դոկտորական գիտական աշխատանքների որակական և քանակական ցուցանիշների բարելավումը համապատասխան ծրագրերի և գիտահետազոտական գործունեության շրջանակի ընդլայնման միջոցով,
- խթանել ցանցային ենթակառուցվածքների ամրապնդումը՝ հասնելով կրիտիկական զանգվածի (օրինակ՝ մեծածավալ ենթակառուցվածքների ֆինանսավորումը կապակցելով ռեսուրսների և ներդրումների համակարգված ու նպատակային օգտագործմանը),
- մշակել կրթության և գիտության պետական ռազմավարություն և ընդլայնել հետազոտական համալսարանների ու այլ հաստատությունների համագործակցության շրջանակը պետական ծրագրերի շրջանակներում,
- սահմանել և կիրառել գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվածության բարձր չափանիշներ՝
 - ⇒ մշակելով գիտահետազոտական աշխատանքների իրականացման հստակ ուղեցույցներ, որոնք կարգավորում են շահերի բախման և պայմանագրային հետազոտությանն առնչվող խնդիրները,
 - ⇒ սահմանելով հետազոտության ոլորտի էթիկական նորմերը,
- ապահովելով ֆինանսավորվող գիտահետազոտական աշխատանքների արդյունքների հանրային մատչելիությունը;
- մշակել հստակ պետական ռազմավարություն միջգիտակարգային հետազոտություններն ու նորարարությունը խթանելու նպատակով՝ արձագանքելով և՛ հանրության շրջանում հիմնական մարտահրավերներին, և՛ ՀՀ կառավարության հաստատած գերակա ուղղություններին,
- իրականացնել թիրախավորված միջոցառումներ ֆինանսական աղբյուրների հայթայթման և համագործակցության հնարավորությունների մասին իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով՝ բարձրացնելով տեղական և միջազգային հետազոտություններում ընդգրկվածության մակարդակը ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող համագործակցությունների խթանման միջոցով,
- խրախուսել և զարգացնել նոր նախաձեռնություններ հետազոտության ոլորտում և ապահովել գիտության ու հետազոտության ներդաշնակեցումն ըստ գիտությունների խմբավորումների (օրինակ՝ բնական գիտություններ, ֆիզիկական գիտություններ, հումանիտար և հասարակական գիտություններ),

- մշակել ռազմավարական ծրագիր թիրախային ոլորտների այնպիսի առաջատար ազգային և միջազգային գիտնականներին ներգրավելու համար, որոնք կզարգացնեն գիտության տվյալ ոլորտը և կցուցաբերեն հետազոտական զարգացած ու բարձր հմտություններ տվյալ գիտակարգի զարգացման նպատակով,
- խթանել Հայաստանի գիտական հանրության համար միջազգային գիտական տեղեկատվական շտեմարանների մատչելիությունը, ինչպիսիք են *Elsevier, SpringerNature, Tomson Reuters, ինչպես նաև ընդլայնել EBSCO, Web of Science, Scopus* շտեմարաններից օգտվելու հնարավորությունները գիտական ուղղություններով զբաղվող գիտնականների հետազոտությունների բարելավման նպատակով,
- մշակել արտոնությունների շրջանակ արդյունաբերության/արտադրության ասպեկտների հետ համագործակցության համար՝ խթանելով հետազոտական համալսարանների և ազգային կրթության ու գիտության համակարգերի գրավչությունը և մրցակցային առավելությունը,
- բարելավել ՀՀ բնակչության ֆունկցիոնալ գրագիտության (հենակետային գիտելիքները, հաղորդակցման, հետազոտության իրականացման, ճանաչողական և գործնական բնույթի այլ հմտությունները կենսագործունեության բոլոր ոլորտներում կիրառելու ընդունակություն) մակարդակի ցուցանիշները,
- նպաստել գյուտերի համար շնորհվող արտոնագրերի, պատենտների և մտավոր սեփականության օբյեկտների կիրարկմանն առնչվող ցուցանիշների բարձրացմանը (1 մլն բնակչի հաշվով),
- մշակել ներդրումների եկամտաբերության գործակցի հաշվարկման համապատասխան մեթոդաբանություն և դրա կիրառման գործիքակազմ՝ ներդրումների կատարման անհրաժեշտությունը և իրաչափությունը որոշելու նպատակով,
- բարձրացնել ներդրումային գրավչության մակարդակի ցուցանիշները՝ բարձրացնելով կրթության և գիտության ոլորտներում ներդրումների մասնահատվածի ցուցանիշները և մշակելով ներդրումների (պետական, օտարերկրյա, համատեղ) խթանման նոր գործիքներ,
- ստեղծել ՀՀ ԿԳՆ-ին կից խորհրդակցական մարմին՝ նոր կազմակերպությունների, այլ համալսարանների և նույնիսկ ոչ ակադեմիական ոլորտում գործունեություն ծավալող հաստատությունների հետ համագործակցության ձևաչափեր մշակելու, նոր հնարավորություններ

ձեռք բերելու և հետազոտության ոլորտում առկա կարիքները բացահայտելու համար,

- մշակել ռազմավարություն տեղեկատվական և գիտակրթական նոր տեխնոլոգիաների ներմուծման ցուցանիշները բարելավելու նպատակով՝ հաշվի առնելով կրթության ձևերի բազմազանեցման և մրցակցային առավելության ձեռքբերման անհրաժեշտությունը,
- մշակել ՏՀՏ-ներով կազմակերպվող կրթության և գիտահետազոտական աշխատանքների որակի ապահովման չափանիշները և բարելավել այդ ոլորտի ցուցանիշները,
- խթանել ՏՀՏ և բարձր տեխնոլոգիաների ընկերությունների կողմից պահանջվող մասնագետների (պահանջարկ) և երկրի բարձրագույն կրթության համակարգի միջոցով մատակարարվող հմտությունների (առաջարկ) միջև որակական ու քանակական դրական փոփոխությունները թափուր աշխատատեղերի համամասնության տեսանկյունից,
- նպաստել արտադրության տեխնոլոգիաների, գիտահետազոտական աշխատանքների և նորարարության զարգացման ու արդյունաբերության բազմազանեցման քաղաքականության դրական փոփոխությունների իրականացմանը,
- խթանել ՏՀՏ հմտություններին տիրապետող երիտասարդների և մեծահասակների համամասնության հավասարակշռումն ազգային մակարդակում՝ ըստ հմտության տեսակի,
- խթանել նորարարական հիմնադրամների կազմավորման ու գործունեության և վենչուրային կապիտալի (փոքր և միջին ձեռնարկություններում առանց գրավի երաշխիքի կատարված ներդրումներից ստացված կապիտալ) ձևավորման ու շրջանառության օրենսդրական հիմքերի փոփոխությունների իրականացումը,
- բարձրացնել ՏՏ ոլորտի արտադրանքի (ներառյալ բարձր տեխնոլոգիական արդյունքը՝ համակարգչայինը, դեղագործականը, գիտական սարքերը և էլեկտրամեքենաները) և ծառայությունների արտահանման ցուցանիշները՝ բարելավելով ՀՀ-ում նորարարությունների համակարգի և ՏՏ ոլորտի ենթակառուցվածքներ հանդիսացող այլ կառույցների (հետազոտական, վերլուծական-տեղեկատվական, կրթական կենտրոններ, տեխնոպարկեր, լաբորատորիաներ և այլն) հիմնադրման և զարգացման տեմպի ցուցանիշները,

- բարձրացնել ՀՀ պետական բյուջեով նախատեսված՝ գիտության բնագավառում պետության նպատակային ներդրումների և բուհերի գիտահետազոտական աշխատանքներին տրամադրվող պետական ֆինանսավորման ցուցանիշները,
- բարձրացնել գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների ու գիտական արտադրանքի ապրանքայնացման և առևտրայնացման ցուցանիշները,
- մեծացնել գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական ծրագրերում և ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող (բազային ֆինանսավորում, նպատակային ֆինանսավորում, թեմատիկ ֆինանսավորում) ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտաշխատողների և պրոֆեսորադասախոսական կազմի՝ գիտական աստիճանների համար հավելավճարների ծավալները և հավելավճարներ ստացողների թիվը՝ ըստ սեռատարիքային բաշխվածության,
- բարելավել գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման, հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման համար պետական բյուջեով նախատեսված ֆինանսական ցուցանիշները,
- բարձրացնել գյուտերի համար շնորհված արտոնագրերի, պատենտների և մտավոր սեփականության օբյեկտների կիրարկմանն առնչվող ցուցանիշները 1 մլն բնակչի հաշվով,
- բարելավել տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաների ներմուծման ցուցանիշները՝ հաշվի առնելով կրթության ձևերի բազմազանեցման և մրցակցային առավելության ձեռքբերման անհրաժեշտությունը, ինչպես նաև բարելավելով ՏՀՏ-ներով կազմակերպվող կրթության և գիտահետազոտական աշխատանքների իրականացման որակի ապահովման ցուցանիշները,
- խթանել ՏՀՏ և բարձր տեխնոլոգիաների ընկերությունների կողմից պահանջվող մասնագետների (պահանջարկ) և երկրի բուհական համակարգի միջոցով մատակարարվող հմտությունների (առաջարկ) միջև որակական և քանակական փոփոխությունները՝ թափուր աշխատատեղերի համամասնության տեսանկյունից,

- Խթանել արտադրության տեխնոլոգիաների, գիտահետազոտական աշխատանքների ու նորարարության զարգացման և արդյունաբերության բազմազանեցման քաղաքականության փոփոխությունները:

Անհրաժեշտ է ներդրումներ կատարել նաև հետազոտական գերազանցության այն կենտրոններում, որոնց անձնակազմը ցուցաբերել է բարձր մասնագիտական որակներ՝ զարգացնելու առկա ներուժը և ուժեղ կողմերն ու հասել է չափելի արդյունքների հետազոտության և բարձրագույն կրթության բնագավառներում: Հիմնարար հետազոտությունն ամենաթանկ արժեցողն է համալսարանի համար՝ հաշվի առնելով նաև այն, որ բարձր որակի հետազոտություն իրականացնելու համար անհրաժեշտ սարքավորումները թանկ արժեն: Բացի այդ, հիմնարար հետազոտությունը հանրային աջակցության կարիք ունի, քանի որ այն հիմնականում հազվադեպ է ուղղակի եկամուտ բերում: Հետազոտական համալսարաններ հիմնադրելու համար պետական ֆինանսավորումից բացի պետք է ներառվեն արտաքին ֆինանսավորման աղբյուրներ ևս՝ հետազոտության ոլորտում տրամադրվող դրամաշնորհների և գիտության թիրախավորված ոլորտների համար հատկացվող ֆինանսական ռեսուրսների ու մասնավոր ներդրումների ձևով:

Հետազոտական համալսարանները պետք է գործունեություն ծավալեն նաև գիտության և հետազոտությունների ոլորտում միջազգայնորեն հաճախակի կիրառվող լեզվով, օրինակ՝ անգլերենով: Միաժամանակ, նրանք հանձնառություն ունեն տարածելու իրականացված հետազոտությունների արդյունքներն ու վերլուծություններն ազգային մակարդակում: Հետազոտական համալսարանները պետք է հիմնական ռեսուրսները տրամադրեն ինչպես մայրենի, այնպես էլ միջազգայնորեն ընդունելի լեզվով՝ գիտական և հետազոտական աշխատանքներ մշակելու և զարգացնելու, ինչպես նաև ազգային մակարդակում համապատասխան հետազոտական տերմինաբանություն ստեղծելու համար:

Ի լրումն վերոգրյալի, մագիստրոսական ծրագրերի կառավարման և իրականացման միջազգային փորձի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համալսարանները հստակ տարանջատում են գիտամետ մասնագիտական մագիստրոսական ծրագրեր՝ *M.S. (Master of Science)* և գործնական ակադեմիական մագիստրոսական ծրագրեր՝ *M.A. (Master of Arts)*: Մասնագիտական մագիստրոսական ծրագրերը պետք է իրականացվեն պետական ֆինանսական միջոցների հաշվին, իսկ ակադեմիականները՝

ուսումնառողների ֆինանսական միջոցների հաշվին: Իսկ դասախոսուսումնառող հարաբերակցությունը պետք է լինի 1:5-6, այսինքն՝ 5-6 ուսումնառողի հետ 1 դասախոս պետք է աշխատի, իսկ ավանդական համալսարաններում այդ հարաբերակցությունը 1:12-14 է: Հետազոտական համալսարաններում հիմնականում մագիստրոսական և հետբուհական կրթություն է իրականացվում, մինչդեռ ավանդական համալսարաններում՝ բակալավրական և մագիստրոսական: Հետազոտական համալսարանների պրոֆեսորադասախոսական կազմում ոչ միայն տվյալ պետության, այլ նաև այլ երկրների փորձառու և ճանաչված գիտնականներ կարող են ընդգրկված լինել [7]: Ուստի, հաշվի առնելով գիտամետ մասնագիտական գործնական ակադեմիական մագիստրոսական ծրագրերի վերոնշյալ առանձնահատկությունները՝ անհրաժեշտ է, որ ազգային մակարդակում հստակ տարանջատվեն այդ կրթական ծրագրերը:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետությունում հետազոտական համալսարանների հիմնադրամաբ կրթության բարեփոխման նոր ուղիների կառուցման հիմնախնդրին, ինչպես նաև հաշվի առնելով ժամանակակից կրթության ոլորտի բարեփոխումների սերտ փոխկապակցվածությունը տեխնոլոգիական արագընթաց զարգացման հետ՝ գիտության և կրթության համակարգերը պետք է հետևողական կերպով բազմազանեցնեն տեխնոլոգիական գործոնների ազդեցության հնարավորությունները գործունեության տարբեր ոլորտներում և բարեփոխումները ծառայեցնելուն հիմնախնդիրների լուծմանը: Տեխնոլոգիական գործոնները գիտության և տեխնիկայի զարգացման արդյունք հանդիսացող տեխնոլոգիական փոփոխություններն են, տարբեր ոլորտներում տեղեկատվական համակարգերի առաջընթացը խթանող շոշափելի նվաճումները, տեխնոլոգիական ոլորտի վերջին ձեռքբերումներն ու տեխնոլոգիական նորարարությունները, ինչպես նաև այդ ոլորտի արդյունաբերությունն իր երեք ենթաձյուղերով՝ սարքավորումների (սարքակազմերի), ծրագրային ապահովման (ծրագրակազմերի) և տեղեկատվության հավաքագրման, մշակման, պահպանման, հաղորդման և ներկայացման բաղադրիչներով: Գիտատեխնիկական առաջընթացին և տեխնոլոգիական գործոններին արձագանքելը կարևոր է տնտեսական մրցակցությանը դիմակայելու և մրցակցային շուկայում առաջատար դիրք գրավելու համար, քանի որ այդ գործոնները փոփոխության են ենթարկում արտադրանքի և ծառայությունների որակն ու տեսականին: Բացի այդ, ներկայիս արտաքին քաղաքական և ներպետական ոլորտներում օրեցօր ավելացող մարտահրավերներին դիմակայելու և պատշաճ

արձագանքելու համար ՀՀ-ն կարիք ունի արդյունավետ որոշումներ կայացնելու համար փորձագիտական հմտությունների և գիտելիքների գործնական կիրառման: Ներկայում առավել, քան երբևէ, կարիք կա շեշտը դնել պետություն-փորձագիտական հանրությո-հասարակություն սերտ կապի ամրապնդման վրա: Այս առումով պետք է նշել, որ ՀՀ-ում գիտահետազոտական կենտրոնների գործունեության նկատմամբ հանրային իրազեկվածության մակարդակը բավական ցածր է. ՀՀ բնակչության գրեթե մեծամասնությունը պատկերացում չունի, թե ինչ է «ուղեղային կենտրոնը», իսկ որոշ մասը, այդ թվում քաղաքականություն մշակողները և շատ մասնագետներ, իրազեկված չեն նրանց գործունեության մասին: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ շատ գիտահետազոտական կենտրոններ պատշաճ ուշադրություն չեն դարձնում իրենց գործունեության լուսաբանմանը: Հատկապես կարևոր է գիտահետազոտական կենտրոնների գործունեության լուսաբանումը բուհերում և պետական մարմիններում, այս գործում կարևոր նշանակություն պետք է տրվի լրատվամիջոցների հետ աշխատանքին և տեղեկատվական տարածությունում նրանց ակտիվությանը՝ մասնավորապես կայքերի միջոցով:

Գիտելիքահենք տնտեսություն ձևավորելու նպատակով պետք է խթանվեն մարդկային կապիտալի և գիտական ներուժի պահպանումն ու շարունակական զարգացումը ՀՀ-ում: Այս առումով պետությունը պետք է ապահովի.

- գիտատեխնիկական ներուժի պահպանում և շարունակական զարգացում,
- անհատի, կազմակերպության մտավոր սեփականության պաշտպանության համար իրավական հենքի ապահովում,
- գիտահետազոտական կենտրոնների հետ սերտ համագործակցության ապահովում և գիտական «արտադրանքի» առևտրայնացում ու տեղայնացում տնտեսության տարբեր ոլորտներում,
- գիտության ոլորտի շարունակական ֆինանսավորում և գրավչության բարձրացում,
- աջակցություն գիտահետազոտական կենտրոնների համար ֆինանսավորման աղբյուրների բազմազանության ապահովման հարցում:

Այնուամենայնիվ, չնայած վերոնշյալ բոլոր թերություններին և առավելություններին, ՀՀ-ում վերջին տարիներին գիտահետազոտական կամ այսպես կոչված «ուղեղային կենտրոնների» թիվը կտրուկ աճ է արձանա-

գրել: Ոչ միայն ընդլայնվել է հետազոտությամբ զբաղվող կառույցների թիվը, այլ նաև իրականացվող հետազոտությունների ծավալը՝ հասնելով որակական նոր մակարդակի, ինչն էլ ենթադրում է բավական մեծ առաջընթաց և զարգացման նոր միտումներ:

Հուլիս, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. The knowledge-based economy, OECD, Paris, 1996 <https://www.oecd.org/sti/sci-tech/1913021.pdf>
2. Տնտեսական զարգացման քաղաքականության արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, ՀՊՏՀ Գիտաժողովի նյութեր, Երևան, 2014, 8, 267 էջ:
3. *McGann J.G.*, Think tanks and policy advice in the US, US, Pennsylvania, 2005, 8, 19 p.
4. *Dahlman C. J., Andersson T.*, Korea and the knowledge-based economy: Making the transition WBP, 2000, 133, 144 p.
5. *Աթոյան Վ.*, «Արտասահմանյան առաջատար համալսարանական «ուղեղային կենտրոնների» գործունեության ուսումնասիրությունն ու լավագույն փորձի ներդրման հնարավորությունները ՀՀ-ում», Երևան, 2014, էջ 63, 81:
6. *Աթոյան Վ., Օհանյան Ս., Մալքոջյան Ա.*, «Ուղեղային կենտրոններն արդի քաղաքական գործընթացներում», Երևան, 2016, 132 էջ:
7. *Խաչատրյան Ռ.*, Հետազոտական համալսարանների անհրաժեշտությունը ՀՀ կրթական համակարգում // Բանբեր Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի. կրթության կառավարում, Երևան, «Լինգվա», 2012, 2(22):
8. *Հարությունյան Գ.*, «Ուղեղային կենտրոններ» և ազգային անվտանգություն, Երևան, 2009:
9. *Bejenova T.*, Think tanks and universities in the knowledge-based economy: crossing, blurring and shifting boundaries, NZ Journal of research on Europe, vol. 10, num. 1, 2016, 55 p.

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԳԻՏԵԼԻՔԱԶԵՆՔ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ռոբերտ Խաչատրյան

Ամփոփագիր

ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի արդյունավետության բարձրացումը և շարունակական կատարելագործումը պայմանավորվում են ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության զարգացմամբ և դրա միջոցով համաշխարհային տնտեսական համակարգում կրթության ազգային համակարգի մրցունակության խթանման անհրաժեշտությամբ: Գիտելիքահենք տնտեսություն ձևավորելու նպատակով պետք է խթանվեն մարդկային կապիտալի և գիտական ներուժի պահպանումն ու շարունակական զարգացումը երկրում: Այս առումով ՀՀ-ում վերջին տարիներին գիտահետազոտական կամ այսպես կոչված «ուղեղային կենտրոնների» թիվը կտրուկ աճ է արձանագրել: Ընդլայնվել է հետազոտությամբ զբաղվող կառույցների թիվը, ինչպես նաև իրականացվող հետազոտությունների ծավալը:

РОЛЬ ИССЛЕДОВАТЕЛЬСКИХ УНИВЕРСИТЕТОВ В КОНТЕКСТЕ РАЗВИТИЯ ЗНАНИЕВОЙ ЭКОНОМИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Роберт Хачатрян

Резюме

Повышение эффективности и перманентное усовершенствование системы высшего профессионального образования РА обуславливаются развитием знаниевой экономики в РА и необходимостью стимулирования конкурентоспособности национальной образовательной системы в мировой экономической системе. Для развития знаниевой экономики нужно стимулировать сохранение и перманентное развитие человеческого капитала и научного потенциала в стране. В этом плане в РА за последние годы зафиксирован резкий рост числа научно-исследовательских или так называемых «мозговых» центров. Увеличилась численность исследовательских структур, а также объем осуществляемых исследований.

**THE ROLE OF RESEARCH UNIVERSITIES
IN THE CONTEXT OF DEVELOPING KNOWLEDGE ECONOMY
IN THE REPUBLIC OF ARMENIA**

Robert Khachatryan

Resume

Increasing the efficiency of Armenian higher education system and its continuous improvement are necessary conditions for development of knowledge economy in the country and boosting through it the competitiveness of the national educational system in the global economic order. In order to shape a knowledge economy, the country needs to promote the preservation and continuous development of its human capital and scientific potential. In this regard, the recent years saw a drastic rise in the number of scientific/educational centers or so-called “think tanks” in the Republic of Armenia. There has been an increase both in the number of research institutions and the volume of studies implemented.

ՌՈՒՍ-ԹՈՒՐԳԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

*Տարոն Սարգյան**

Բանալի բառեր՝ ռուս-թուրքական հարաբերություններ, Հայաստանի Հանրապետություն, թուրք-ադրբեջանական դիվանագիտություն, մարտահրավերների գնահատում:

Համաշխարհային պատմության մեջ քիչ չեն եղել այն պետությունները, որոնց փոխհարաբերություններն անմիջականորեն անդրադարձել են նրանց հարևան ու հարակից պետությունների և ժողովուրդների ճակատագրերի վրա: Ասվածն առավել որոշակի պատկերացնելու համար բավական է հիշատակել ռուս-գերմանական փոխհարաբերություններն ու Լեհաստանի բաժանումները, պարսկա-բյուզանդական, ինչպես նաև թուրք-պարսկական փոխհարաբերությունները և Հայաստանի բաժանումները: Այս համատեքստում իր կարևորությամբ ուշադրության է արժանի նաև Հայաստանի համար բացասական դերակատարում ունեցած՝ 20-րդ դարասկզբի ռուս-թուրքական (խորհրդա-թուրքական) փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրությունը: Պատմությունը՝ որպես հիմնարար գիտություն, ներկայացնելով անցյալի ռազմաքաղաքական, հասարակական, մշակութային և այլ գործընթացները, ինչպես նաև դրանց օրինաչափություններն ու պատճառահետևանքային կապերը, ուսումնասիրողից, ըստ էության, պահանջում է սթափ, անաչառ և խիստ օբյեկտիվ մոտեցում (անկախ նրա ազգային, կրոնական ու ռասայական պատկանելությունից) դրանց գնահատման ու համապատասխան վարկածների առաջադրման պատասխանատու գործում: Հետևաբար, պատմական նախադեպն ինքնին ակնկալում է համապատասխան վարկածի առաջադրում, հատկապես եթե այն գրանցված է եղել ոչ վաղ անցյալում:

Այսպես, դեռևս չէր ավարտվել Առաջին համաշխարհային պատերազմը (1914-1918թթ.), երբ 1917թ. Ռուսաստանում տեղի ունեցած Փետրվա-

* «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի «Հայոց պատմություն» առարկայի դասախոս:

րյան հեղափոխության արդյունքում ձևավորվեց ժամանակավոր կառավարություն, ինչը, սակայն, չփոխեց Ռուսաստանի արտաքին քաղաքական կուրսը: Նա շարունակեց պատերազմը՝ մնալով Անտանտի (Ռուսաստան, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ) կազմում: Իրավիճակը կտրուկ փոխեց 1917թ. Հոկտեմբերյան հեղափոխությունը, որի արդյունքում իշխանությանը տիրացան բոլշևիկները, որոնց առաջին քայլերից էր «հողի» և «հաշտության» մասին դեկրետների ընդունումը: Վերջինն, ըստ էության, ազդարարում էր Ռուսաստանի պատերազմից դուրս գալու մասին, որը վերջնականապես ձևակերպվեց 1918թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում Գերմանիայի և նրա դաշնակիցների հետ կնքված պայմանագրով, ըստ որի՝ Ռուսաստանն ընդհանուր առմամբ կորցնում էր մոտ 1 մլն կմ² տարածք: Մասնավորապես, Օսմանյան կայսրությանն էին անցնում Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերը, որով վերականգնվում էին մինչև 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմը գոյություն ունեցող սահմանները: Այդ պայմանագրով բոլշևիկյան Ռուսաստանը պարտավորվեց նաև ցրել հայկական կամավորական ջոկատները [1, էջ 561-562]:

Որպես արտաքին քաղաքականության հիմնաքար որդեգրելով պանթյուրքիզմի ազդեցիվ գաղափարախոսությունը (այն է՝ Թուրքիայի գլխավորությամբ Եվրասիայում բնակվող թյուրքալեզու ժողովուրդների համախմբումը մեկ պետության՝ Մեծ Թուրանի կազմում)՝ Օսմանյան կայսրությունը խրախուսեց Անդրկովկասի անջատումն ու անկախացումը Ռուսաստանից (1918թ. ապրիլին), որին հետևեց թուրքական ներխուժումը տարածաշրջան: Հարկ է նշել, որ պանթյուրքիզմն, ըստ էության, Թուրքիայի շովինիստական և ծավալապաշտական նկրտումների էությունն է, ինչը սպառնում է հայ ժողովրդի գոյությանը և ենթադրում Իրանի, Ռուսաստանի և Չինաստանի մասնատումը [2]:

Մայիսյան հերոսամարտերը՝ Սարդարապատը, Բաշ-Ապարանը և Ղարաքիլիսան, դարձան հայ ժողովրդի ազգովին պայքարելու պատրաստակամության և վճռականության վկաները և ի չիք դարձրին Հայաստանի արևելյան հատվածին տիրելու և արևելահայերին ոչնչացնելու երիտթուրքերի ծրագիրը: Դրանք նաև նախադրյալներ ստեղծեցին հայկական պետականության վերականգնման համար: 1918թ. մայիսի 26-ին Անդրկովկասյան սեյմի լուծարմամբ իրենց անկախությունը հռչակեցին Վրաստանը (մայիսի 26), Ադրբեջանը (մայիսի 27) և Հայաստանը (մայիսի 28): Մինչև Թիֆլիսից Հ.Քաջազնունու գլխավորությամբ Հայոց ազգային խորհրդի ժամանումը Հայաս-

տան, երկրի կառավարումն իրականացվում էր Երևանի ազգային խորհրդի ղեկավար Արամ Մանուկյանի կողմից, որն անուրանալի ներդրում էր ունեցել մայիսյան հաղթանակների կայացման գործում [3, էջ 15-24]: Հարկ է արձանագրել այն փաստը, որ Հայաստանի առաջին Հանրապետությունը ձևավորվեց ծանր պայմաններում. կազմալուծված, ոչ արհեստավարժ բանակ, գաղթականների հոծ բազմություն, քայքայված տնտեսություն, սով, համաճարակներ, պատմական տարածքների կորստի վտանգ և այլն [3, էջ 20]:

Անկախության հռչակումից մի քանի օր անց՝ հունիսի 4-ին, Բաթումում Օսմանյան կայսրության (Վեհիբ-Մահմեդ փաշա, Խալիլ բեյ) և Հայաստանի Հանրապետության (Հ.Քաջազունի, Ալ.Խատիսյան) պատվիրակությունների միջև կնքվեց հաշտության պայմանագիր, որով օսմանյան իշխանությունները ճանաչեցին Հայաստանի անկախությունը մոտ 12 հազ. կմ² տարածքի սահմաններում: Հայկական նորաստեղծ պետությունն ընդգրկելու էր Նոր Բայազետի գավառն ամբողջությամբ, ինչպես նաև Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գավառների առանձին մասեր: Օսմանյան կայսրությունն իրավունք ստացավ Հայաստանի տարածքով զորք տեղափոխելու Բաքու, որտեղից պետք է դուրս բերվեին Բաքվի կոմունան պաշտպանող հայկական ուժերը: Սակայն տեղի Հայոց ազգային խորհուրդը մերժեց այդ պահանջը, քանի որ դրա կատարումը կվտանգեր քաղաքի հայ ազգաբնակչության գոյությունը: Հարկ է նշել, որ այս ամենով հանդերձ Օսմանյան կայսրությունը լուծել էր պանթուրքիզմի գաղափարախոսությամբ նախատեսված ծրագրերի մի մասը, մնում էր լուծել Բաքվով Միջին Ասիայի հետ կապ հաստատելու խնդիրը, ինչը Ռուսաստանում ընթացող քաղաքացիական պատերազմի պայմաններում թվում էր միանգամայն իրական: Բաթումի պայմանագրով Հայաստանը նաև պարտավորվում էր զինաթափել իր տարածքում առկա հակաթուրքական «ավազակային զորաջոկատները» [1, էջ 221-222]՝ նկատի ունենալով մասնավորապես Անդրանիկ Օզանյանի հրամանատարությամբ գործող ստորաբաժանումները: Չընդունելով և քննադատության ենթարկելով Բաթումի պայմանագիրը՝ Անդրանիկը 1918թ. հունիսին իր ջոկատով անցավ Նախիջևան, որտեղից էլ՝ նույն թվականի հուլիսի 14-ին Բաքու՝ Ստեփան Շահումյանին հղեց իր հայտնի հեռագիրը, ըստ որի՝ երկրամասը հայտարարվում էր խորհրդային Ռուսաստանի «անբաժանելի մաս» [4, էջ 301, 307-308]:

Բաքվի ազգային խորհուրդը, որի զգալի մասը դաշնակցականներ էին, նույնպես սուր քննադատության ենթարկեց Բաթումի պայմանագիրը:

Հայաստանի հասարակությունը ևս ալեկոծված էր, մարդիկ հոգեբանորեն չէին հաշտվում կատարվածի հետ [3, էջ 20]:

Իրավիճակը փոխվեց 1918թ. նոյեմբերին, երբ ավարտվեց Առաջին աշխարհամարտը և պարտված Օսմանյան կայսրությունը ստիպված էր թողնել Անդրկովկասը, իսկ 1919թ. ապրիլին՝ Կարսի մարզը, որը միացվեց Հայաստանին: Վերջինիս միացվեց նաև Նախիջևանը:

Հայաստանի Հանրապետությունն էլ ավելի պետք է ընդարձակվեր ըստ 1920թ. օգոստոսի 10-ին կնքված Սևրի պայմանագրի, որով Օսմանյան կայսրությունը Անտանտի ճնշմամբ Հայաստանին պետք է զիջեր ընդարձակ տարածքներ՝ Էրզրումի, Վանի, Բիթլիսի և Տրապիզոնի վիլայթների հաշվին [5, էջ 327]: Սակայն Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող հոդվածներին վիճակված չէր դառնալ իրականություն:

Հայաստանի առաջին Հանրապետության ավելի քան երկու տարվա գոյության ընթացքում հայ ժողովուրդն ունեցավ բազում փորձություններ: Մովին ու համաճարակներին գումարվեցին պատերազմները՝ հայ-վրացական ընդհարումները Լոռու պատճառով (1918թ. դեկտեմբեր-1919թ. հունվար) և 1920թ. թուրքական ներխուժումը: Ադրբեջանը տարածքային հավակնություններ ուներ Զանգեզուրի, Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի նկատմամբ: Հարևան երկրներից միայն Պարսկաստանի հետ էին հաստատվել բարիդրացիական հարաբերություններ: Գաղթականների անդադար ներհոսքը խոչընդոտում էր երկրի կառավարությանը ազգաբնակչության պարենային ապահովման և բնակավորման հարցերի արդյունավետ կազմակերպման գործում: Կառավարությունը ջանում էր սովի դեմ պայքարել արտերկրից ստացվող մարդասիրական օգնությունների հաշվին: Սակայն վարչապետ Քաջազնունու ջանքերով 1919թ. մայիս-հունիս ամիսներին ԱՄՆ-ից ստացված օգնությունը, ինչպես նաև 1918թ. սեպտեմբերի 28-ին կառավարության ընդունած օրենքը կարիքավոր գաղթականների խնամատարության վերաբերյալ ունեցան կոսմետիկ նշանակություն [3, էջ 20, 23]: Նման պայմաններում ստեղծված ներքաղաքական անկայուն վիճակը հանգեցրեց 1920թ. մայիսին հայ բոլշևիկների կողմից կազմակերպված խռովությանը, որը թեև անհաջողության մատնվեց, սակայն դրա թողած ազդեցությունն էական եղավ նորաստեղծ պետության վրա: Այս հանգամանքների համախումբը կանխորոշեց Հայաստանի առաջին Հանրապետության անկումը, որն էլ իրավաբանորեն ձևակերպվեց 1920թ. դեկտեմբերին քեմալա-բոլշևիկյան համագործակցության պայմաններում:

Անդրադառնալով նաև Հայաստանի առաջին Հանրապետության անկմանը հանգեցրած արտաքին գործոններին՝ նշենք այն օրինաչափությունները, որոնցով և պայմանավորված էին ժամանակաշրջանի պատմական իրադարձությունները: Հասկանալի է, որ պատճառները շատ էին ու բազմազան: Հայտնի ճշմարտություն է, որ Անդրկովկասը պատմականորեն մշտապես հանդիսացել է տարբեր ուժային կենտրոնների շահերի բախման հանգույց: Ռուսական կայսրությունից բոլշևիկյան իշխանությունները որդեգրեցին Անդրկովկասում ցարական արտաքին քաղաքականության հիմնական կուրսը, որի նպատակն էր տարածաշրջանում գերիշխող դիրքի հաստատումը: Մակայն, եթե Ռուսական կայսրությունն իր հակաթուրքական տրամադրություններում միանգամայն կայուն էր (բացառություն է կազմում երկրորդ հակաֆրանսիական խմբավորման (1798-1801թթ.) շրջանակներում ռուս-օսմանյան դաշնակցությունը, երբ Ռուսաստանը Մեծ Բրիտանիայի ֆինանսավորմամբ և դրդմամբ ագրեսիվ պատերազմ էր վարում Ֆրանսիայի դեմ [6]), ապա նույնը չի կարելի ասել բոլշևիկյան Ռուսաստանի մասին: Պատճառը «համաշխարհային հեղափոխության» գաղափարն էր, որ փայփայում էր նորաթուխ խորհրդային իշխանությունը, և ինչը վարպետորեն օգտագործեց Օսմանյան կայսրությունում սկիզբ առած քեմալական շարժման առաջնորդ Մուսթաֆա Քեմալը, որն իրեն ներկայացնելով որպես Արևելքում սոցիալիստական հեղափոխության նախաձեռնող և բոլշևիկյան Ռուսաստանի դաշնակից՝ վերջինիս կողմից սկսեց ստանալ անհրաժեշտ աջակցություն [7, c. 160]: Մինչդեռ իրականում քեմալական շարժումն Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության կրած պարտության ուղղակի հետևանքն էր, քանզի տերությունը հայտնվել էր տարածքային մասնատման սպառնալիքի առաջ: Քեմալականները ձեռնամուխ եղան պետության տարածքների պահպանման գործին, որոնց մի մասը, համաձայն Սերի պայմանագրի, պետք է անցներ Հայաստանի Հանրապետությանը:

Հարկ է արձանագրել այն, որ Սերի պայմանագրի կնքմամբ «խորհրդային Ռուսաստանը կտրուկ կերպով հանդես եկավ քեմալական Թուրքիայի կայացման օգտին և Հայաստանի Հանրապետությանը վերջնականապես դիտելով իբրև Անտանտի դաշնակցի՝ նրա նկատմամբ որդեգրեց բացահայտ նվաճողական քաղաքականություն» [8, էջ 13]:

Արդյունքում՝ Սերի պայմանագրի կնքումից երկու շաբաթ անց՝ 1920թ. օգոստոսի 24-ին, Մոսկվայում կնքվեց քեմալա-բոլշևիկյան դաշինքը, որով

խորհրդային Ռուսաստանը ճանաչեց Թուրքիայի տարածքային ամբողջականությունը՝ ներառյալ Կարսը, Արդահանը և Բաթումը [9, էջ 145]: Համաձայնագրին անմիջապես հետևեց թուրքական ներխուժումը Հայաստան՝ 1920թ. սեպտեմբերին: Քեմալականները Ռուսաստանից ստացել էին ֆինանսական և ռազմական օժանդակություն, որը վճռորոշ դեր խաղաց Հայաստան թուրքական ներխուժման գործում [10, էջ 142]:

Անհրաժեշտ է արձանագրել այն փաստը, որ նույնիսկ թուրքական ներխուժումը չստիպեց հայ բոլշևիկներին մի կողմ դնել իրենց տարածանությունները: Ավելին, վերջիններս ստեղծված դժվարին իրավիճակը դիտելով միանգամայն նպաստավոր՝ փորձում էին ջլատել ռազմական ուժերի համախմբման և անհրաժեշտ հակահարվածի կազմակերպման գործընթացը՝ որպես վերջնական նպատակ տեսնելով Հայաստանի խորհրդայնացումը:

Արդյունքը երկար սպասել չտվեց: Բոլշևիկյան քարոզչության ազդեցության տակ հայտնված Ալեքսանդրապոլի բնակչությունը նոյեմբերի 7-ին քաղաք մտած թուրքական բանակին ցույց չտվեց անհրաժեշտ դիմադրություն: Մինչ այդ՝ հոկտեմբերի 30-ին, հակառակորդն առանց դիմադրության տիրել էր Կարսին: Ստեղծված պայմաններում հուսալքված դաշնակցական կառավարությունը, դրսից ոչ մի աջակցություն չստանալով, հարկադրված էր 1920թ. նոյեմբերի 18-ին ընդունել թուրքերի առաջարկած զինադադարը:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության պարտությունն ու լիկվիդացումը նախատեսված և կանխորոշված էր 1920թ. քեմալա-բոլշևիկյան դաշինքով: Նոյեմբերի 19-ին, ապա և դեկտեմբերի 2-ին դաշնակցականների և ՌԽՖՍՀ ներկայացուցիչ Բորիս Լեզրանի միջև բանակցություններն ավարտվեցին դեկտեմբերի 2-ին Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմամբ:

1920թ. դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը լիազորությունները դադարեցրած դաշնակցական կառավարությունն Ալեքսանդրապոլում նախագահությամբ Ալեքսանդրապոլում Թուրքիայի հետ ստորագրեց հաշտության պայմանագիր:

Այսպիսով, Անդրկովկասում բոլշևիզմի օրեցօր աճող ազդեցության, ինչպես նաև քեմալա-բոլշևիկյան սերտ համագործակցության պայմաններում Հայաստանի Հանրապետության անկումն ու երկրում խորհրդային կարգերի հաստատումը անխուսափելի էին: Այսքանով, սակայն, քեմալա-բոլշևիկյան հակահայ շփումները չդադարեցին: 1921թ. ընթացքում կնքվեցին

Մոսկվայի (մարտի 16) և Կարսի (հոկտեմբերի 13) պայմանագրերը, որոնց արդյունքներով Թուրքիան ստացավ Կարսը, Արդահանը և Մուրմալուն:

Այս ամենով հանդերձ, պետք է նշենք, որ Հայաստանի առաջին Հանրապետության ղեկավարներն ընդհանուր առմամբ չդրսևորեցին համապատասխան դիվանագիտական որակներ ժամանակի աշխարհաքաղաքական գլխավոր մարտահրավերը՝ ի դեմս քեմալա-բոլշևիկյան դաշինքի, ըստ արժանվույն գնահատելու և այն կանխելուն ուղղված անհրաժեշտ քայլերի իրագործման առումով: Համագործակցելով Անտանտի հետ՝ նրանք, թերևս, չէին նկատել, որ Առաջին աշխարհամարտում պարտված Թուրքիայում այլևս որոշիչ չէր Սևրի պայմանագիրը ստորագրած օսմանյան վերնախավի դերը, որը փաստացի իշխանությունն, ըստ էության, զիջել էր Մուսթաֆա Քեմալին: Վերջինս էլ, չընդունելով Սևրի պայմանագիրը, գործուն և արդյունավետ քայլեր էր ձեռնարկել դրա արդյունքներն ու Հայաստանին վերաբերող պահանջները վիժեցնելու ուղղությամբ՝ առաջին հերթին դիվանագիտական համաձայնության գալով բոլշևիկյան Ռուսաստանի հետ և ստանալով նրա ռազմաֆինանսական օժանդակությունը: Մինչդեռ հայաստանյան իշխանությունները, անհրաժեշտ չափով կարևորություն չտալով նույն Ռուսաստանի գործոնին ու նրա արտաքին քաղաքական և գաղափարախոսական նկրտումներին, շարունակում էին անպտուղ հույսեր փայփայել Արևմուտքի հետ: Միևնույն ժամանակ, հանուն օբյեկտիվության պետք է արձանագրենք, որ հիշյալ պայմաններում հայաստանյան իշխանությունները, ընդունելով ժամանակաշրջանի աշխարհաքաղաքական մարտահրավերներին միանգամայն ոչ համահունչ դիրքորոշում, ցուցաբերում էին անարդյունավետ քաղաքական վարքագիծ ու, թերևս, ավելորդ համատություն, ինչը ճակատագրական հետևանքներ ունեցավ հայկական պետականության և հատկապես նրա տարածքային ամբողջականության համար: Արդեն 1920թ. ապրիլից խորհրդային Ադրբեջանի առկայության պայմաններում Հայաստանի խորհրդայնացումը դարձել էր անխուսափելի: Այն ընդամենը ժամանակի հարց էր և դրված էր խորհրդային Ռուսաստանի արտաքին քաղաքական օրակարգում, իսկ հայկական իշխանությունների դիվանագիտական սերտ շփումներն Արևմուտքի հետ սրել էին հայ-բոլշևիկյան հարաբերությունները: Արդյունքում՝ Հայաստանի խորհրդայնացումն իրականացվեց քեմալա-բոլշևիկյան դաշինքի միջոցով և տարածքային զգալի կորուստների պայմաններում: Հաշվի առնելով Հայաստանի խորհրդայնացման անխուսափելիությունը՝ համարձակվենք տեսակետ

հայտնել, որ հայ բոլշևիկների 1920թ. մայսիսյան խռովության հաջող ելքը, թերևս, առավել նպաստավոր կլիներ հայության համար, ու թեև այդ գնով, բայց հնարավոր կլիներ պահպանել Կարսը, Արդահանը, Նախիջևանը, Արցախը և Հայաստանի մաս կազմող մյուս տարածքները:

Ելնելով վերը շարադրվածից՝ կարող ենք վստահորեն ասել, որ թուրք-ռուսական մերձեցումն ինքնին միշտ էլ սպառնալիքի տարրեր կպարունակի Հայաստանի ազգային անվտանգության համար, ու, թեև, դեռևս 1869թ. օսմանյան պետական գործիչ Ֆուադ փաշան Ռուսաստանն օբյեկտիվորեն որակել էր որպես «մեր կայսրության բնական թշնամի» [11, էջ 33-34], այդուհանդերձ, 20-րդ դարի 20-ականների սկզբին ռուս-թուրքական մերձեցումը թեև կարճաժամկետ, բայց միանգամայն սպասելի էր ու բխում էր երկուստեք շահերից: Ի դեպ, օրինաչափ ու փոխշահավետ էր նաև 1939թ. խորհրդա-գերմանական մերձեցումը, քանի որ Առաջին աշխարհամարտում պարտված Գերմանիան, ի տարբերություն Թուրքիայի, ավելի քան մեկ տասնամյակ հնազանդվել էր Անտանտի պահանջներին [12]:

Ուստի, երբևէ չի կարելի բացառել Ռուսաստանում (ինչպես և ցանկացած այլ պետությունում) քաղաքական էլիտայի փոփոխության տարբերակը, ինչը հնարավոր է հանգեցնի նրա արտաքին քաղաքական սկզբունքների էական տրանսֆորմացիային, որը կարող է և նպաստավոր չլինել Հայաստանի համար: Ի վերջո, միայն 20-րդ դարում Ռուսաստանն ունեցել է շրջադարձային 1917 և 1991 թվականներ: Առհասարակ, Ռուսաստանն ունի հեղափոխությունների, պալատական և պետական հեղաշրջումների հարուստ ավանդույթներ: Անդրադառնալով նաև Անդրկովկասում ռուսական ներկայիս արտաքին քաղաքականության որոշ ասպեկտներին՝ նշենք, որ ռուս-թուրքական հարաբերություններում մշտապես դրված կլինի Ադրբեջանի՝ որպես Թուրքիայի «կրտսեր եղբոր», շահը, ինչը պետք է կաշկանդի Հայաստանի ռազմավարական դաշնակից Ռուսաստանին: Իսկ Ադրբեջանի հետ հարաբերություններում Ռուսաստանին վիճակված է հանդուրժել Թուրքիայի մշտական ներկայությունը: Այսպիսով, Ռուսաստանի հետ հարաբերություններում և մանավանդ հայությանը վերաբերող հարցերում թուրքական և ադրբեջանական դիվանագիտությունը հանդես է գալիս միասնական ճակատով ու շահարկման ենթակա տարաբնույթ խնդիրների զգալի պաշարով, ինչը հայկական դիվանագիտության և սփյուռքի համար պետք է ռացիոնալ գործողությունների հիմք հանդիսանա: Արցախյան հիմնախնդիրն ինքնին միայն տարածաշրջանային հակամարտություն չէ և

հեշտությամբ կարող է վերածվել առաջավորասիական (և ոչ միայն) «ջրապտույտի», մինչդեռ դրա առկայությունն արդեն իսկ էական խոչընդոտ է (սակայն միակը չէ) ՌԴ-ի համար եվրասիական ինտեգրացիոն գործընթացները հաջողությամբ ավարտին հասցնելու առումով: Անհրաժեշտ է հաշվի առնել այն տեսակետը, որ արցախյան հիմնախնդիրն ունի նաև համաթյուրքական և պանթյուրքական նշանակություն, որի միջոցով շահագրգիռ ուժերի կողմից փորձ կարվի հյուժել հայկական պետության տնտեսական, հասարակական և ռազմական ներուժը, ինչը հավասարապես հակասում է նաև ՌԴ պետական շահերին: Այսօր Թուրքիայի Հանրապետության կողմից ավտորիտարիզմի և օսմանյան «արժեքների» որդեգրման փաստը նոր հեռանկարներ է բացում ալիևյան վարչակարգի, թուրքական հատուկ ծառայությունների և ազգայնական կազմակերպությունների առջև: Ուստի, մարտահրավերների սթափ գնահատումն ու հասարակական-տնտեսական առողջ հարաբերությունների՝ որպես ամուր պետության գրավականի, առկայությունը միայն կարող են երաշխավորել Հայաստանի Հանրապետության «կանաչ ճանապարհը» բավական անհանգիստ սկսված և ֆորսմաժորային իրավիճակներով հարուստ 21-րդ դարի պայմաններում: Հակառակ պարագայում Հայաստանին հերթական անգամ կարող են սպառնալ տարածքային կորուստներն ու «տարօրինակ պատերազմ»-ին բնորոշ իրավիճակները [տե՛ս 13, էջ 69]:

Հունիս, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Հայկական սովետական հանրագիտարան, Երևան, 1976, հ. 2:
2. Մարոյան Տ., Պանթյուրքիզմը որպես եվրասիական ժողովուրդների աշխարհաքաղաքական մարտահրավեր // «21-րդ դար», N 1 (71), Երևան, 2017, էջ 75-84:
3. Մարդարյան Կ., Պատմություն և իրականություն, Երևան, 1991:
4. Հարությունյան Ա., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984:
5. Հայկական սովետական հանրագիտարան, Երևան, 1984, հ. 10:
6. Մարոյան Տ., Նապոլեոն Բոնապարտի արևելյան արշավանքի շարժառիթները // ՀՀ ԳԱԱ ԱԻ «Մերձավոր Արևելք», XI-XII հոդվածների ժողովածու, Երևան, 2017, էջ 150-155:
7. Махнач В.Л., Елишев С.О., Политика. Основные понятия: справочник, словарь, М., 2008.

8. Ներսիսյան Ա., ՀՀ բյուրո-կառավարության և խորհրդային Ռուսաստանի բանակցությունների առաջին փուլը // «Ակունք» ԵՊՀ ԻՄ, Գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1(10), Երևան, 2014, էջ 3-14:
9. Թորոսյան Ջ., Հայաստանի տարածքներն ըստ 1920 թվականի դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրի // «Մխիթար Գոշ», Գիտական հոդվածներ, 2014, 2 (41), էջ 145-152:
10. Զոհրաբյան Է., 1920թ. Թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997:
11. Միմնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:
12. Сакоян Т.А., Сакоян А.К., Взгляд на истоки и результаты Второй мировой войны // Инновации в современном мире: сборник статей Международной научно–практической конференции (10 сентября 2015г., г. Москва), Москва: РИО ЕФИР, 2015. с. 11-14.
13. Վարդանյան Ռ., Պատմական տերմինների համառոտ բառարան, Երևան, 2003:

ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Տարոն Սաքոյան

Ամփոփագիր

Հոդվածը վերաբերում է ռուս-թուրքական հարաբերություններին: Ոչ վաղ անցյալի պատմական իրադարձությունների վերլուծությամբ հեղինակի կողմից զուգահեռներ են տարվել ռուս-թուրքական արդի դիվանագիտական իրողությունների հետ:

РОССИЙСКО-ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ И АРМЕНИЯ

Тарон Сакоян

Резюме

В статье рассматривается проблематика российско-турецких отношений одновременно в научном и политическом аспектах. При анализе исторических процессов недавнего прошлого автором проведены параллели с сегодняшними реалиями российско-турецких отношений.

THE RUSSIAN-TURKISH RAPPROCHEMENT AND ARMENIA

Taron Sakoyan

Resume

The article addresses the Russian-Turkish rapprochement in scientific and political aspects. By analyzing historical processes of the past, the author draws parallels between those and the current realities of the Russian-Turkish relationships.

**ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽԵՂՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՈՒԾԱՑՈՒՄ.
ՀԱՅ ՈՐԲԵՐԻ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ»
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ**

*Միրա Անտոնյան**

Բանալի բառեր՝ ցեղասպանության որբեր, ինքնություն, անվտանգություն, ուժացում, կրոնափոխություն, որբախնամ գործունեություն, «ոչ հայեր»:

Որբությունը, հատկապես մեծածավալ որբությունն ու որբախնամությունը, հայերի սոցիալական կյանքի գրեթե մշտական բաղկացուցիչն էր: Առօրյա կյանքում «որբին տիրություն անելը» պատվաբեր առաքելություն էր, որը բնականորեն ստանձնում էր երեխայի մերձավոր բարեկամը, իսկ դրա անհնարինության դեպքում, քահանայի ընտրությամբ՝ համայնքի մեկ այլ պատվարժան ընտանիք: Որբին խնամողը «հոգեծնող» էր կոչվում, իսկ խնամարկյալը՝ «հոգեզավակ»¹՝ այդպիսով ամրագրելով ծնող-զավակ անդարձելի և բնականին մոտ հարաբերություններ: Սակայն որբախնամությունը հայերի սոցիալական պրակտիկայում յուրահատուկ բնույթ և շեշտադրումներ ունի. «որբ» բառը հայերի համար ավելի շատ ասոցացվում է մեծածավալ ջարդերի, հարձակումների հետ, քան որևէ կենցաղային-սոցիալական պատճառների: Որբախնամ գործունեությունը հայերի սոցիալական պրակտիկայում նշանակել է հիմնականում որբանոցների կազմակերպում, մինչդեռ «որբին տիրություն անելը» ենթադրում էր ընտանեկան այլընտրանքային տարբերակների կիրառում՝ աթալիկություն², խնամակալություն, հոգեծնողություն և հատկապես որդեգրություն³: Այսպիսով, հայերն իրենց սոցիալական պրակտիկայում ձևավորել են որբախնամության սեփական ձեռագիր. ջարդերի ու

*Սոց.գ.թ., դոցենտ, ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետ:

¹ Հետաքրքրական է հոգեզավակության կնքման ծեսի խորհուրդը. անկախ տարիքից՝ երեխան եկեղեցի է տարվում և քահանայի ձեռքով տեղավորվում ապագա մոր մարմնին մոտ, ծածկվում ճերմակ ընդարձակ շապիկով, ապա շապիկը վեր բարձրացնելով քահանան երեխային հանձնում է ապագա ծնողին: Դրանով որբն այլևս որբ չէ, այլ հոգեզավակ:

² Երեխային դաստիարակության հանձնելը՝ կրթելու, «փեշակ սովորելու» նպատակով:

³ Երեխաների խնամքի կազմակերպման ձևերը համապատասխանեցված են ավելի շատ մեծերի կարիքներին, քան երեխաների. ընտանիքը զավակ չունենալու պարագայում փնտրում է «հարմար լուծում»՝ լրացնելու այդ բացը, մինչդեռ հոգեզավակությունը երեխայի ծնող չունենալու բացի լրացումն է:

կոտորածների միջև կարճատև միջնահատվածներում կիրառվել են որբախնամության ընտանեկան-անհատականացված ձևեր, իսկ դրանց ժամանակ և հետևանքով որբանոցներ են հիմնել:

Նշված ընտանեկան ձևերի շնորհիվ, ըստ էության, մինչ Եղեռնը և դրան նախորդած մեծածավալ ջարդերը մեծ որբանոցների կարիք պատմական Հայաստանում չի եղել, և դրանք փոխարինվել են եկեղեցիներին կից դպրոցներով, որտեղ ուսանել են որբերը, և որոնց հովանավորությունը ստանձնել են անհատ բարերարներն իշխանական հայտնի տներից: Թուրքական կառավարության կողմից փուլ առ փուլ պատմական Հայաստանի տարբեր շրջաններում իրականացվող ջարդերի հետևանքով առաջ եկած մեծ թվով որբերին օգնելու նպատակով եվրոպական լուսավորության հետ առնչվող հայ մտավորականները գաղափարական պայքարի, տպագիր խոսքի միջոցով հայ հարուստների բարեգործական եռանդն ուղղում էին դեպի որբանոցների ստեղծումը՝ որբերի խնամքն ու կրթումը կազմակերպված իրականացնելու համար:

Ակնհայտ է, որ պետականության բացակայության պայմաններում հանրային կյանքի նման բարձր կազմակերպչական մակարդակի իրողությունը¹, թելադրված լինելով քրիստոնեական արժեքներով, այնուամենայնիվ «պարտադրված էր» հայերին՝ պայմանավորված մշտապես կրկնվող հարձակումների, փոքր ու մեծ կոտորածների պատճառով մշտապես մեծաթիվ որբեր ունենալու հանգամանքով: Նման հոգածության անհրաժեշտությունը սրացավ հատկապես Մեծ եղեռնի տարիներին: Չնայած ճակատագրի բերումով որբախնամության կազմակերպման ոլորտում կուտակած փորձին՝ հայ հանրությունը Եղեռնի տարիներին կաթվածահար եղավ՝ արհավիրքի մեծ ծավալների ու այդ պատճառով որբ մնացած երեխաների աննախադեպ մեծ թվի պատճառով: Ու թեև Հայաստանը հզոր եկեղեցի ուներ, այնուամենայնիվ, չունեի պետություն. հանգամանք, որը ճարպկորեն օգտագործեց թուրքական կառավարությունը՝ ջանասիրաբար անցնելով Եղեռնից մազապուրծ հայ որբերի կազմակերպված ուժացմանը: Միջազգային գրասիրական կազմակերպությունների և թուրքական կառավարության միջև այդ շրջանում սկսվեց աննախադեպ, չհայտարարված ու անհավասար պատերազմ: Արտասահմանի հայությունն՝ ի դեմս ազգային

¹ Հայաստանում որբախնամ բարեգործության ծաղկման համար էական դեր է խաղացել (և նաև ներկայումս) Քրիստոնեության հոչակած հիմնարար սկզբունքներից մեկը՝ «Նուիրաբերողները վարձ պիտի ստանան թե՛ այս և թե՛ հանդերձեալ աշխարհում», ինչը խթանել է որբերին (ներառյալ սոցիալական որբերին) ուղղված անհատ բարերարների և անձնուրաց միաբնակների գործունեությունը:

տարբեր կազմակերպությունների, ինչպես նաև որոշ, հատուկ այդ նպատակով ստեղծված արտասահմանյան բարեսիրական կազմակերպություններ սկսեցին որբահավաքությանն ուղղված իրենց գործունեությունը՝ գյուղից գյուղ անցնելով ու «հայթայթելով» ցաքուցրիվ եղած, քուրդ և թուրք ընտանիքներին հանձնված որբերին: Նրանք ստիպված էին լարված ու բազմաբնույթ ջանքեր գործադրել՝ հորդորելուց սկսած մինչև գլխագնի վճարում, որպեսզի բացահայտեին որբերին և ներգրավեին նրանց որբանոցներում՝ ի լրումն մեծաթիվ որբանոցների անհապաղ հիմնման ոչ դյուրին հարցի լուծման [1, էջ 120]: Առանձին անհատներ նույնպես շտապեցին ուժերի ներածին չափով օգտակար լինել որբերին: Այսպես, «Կին միսիոներներ» կազմակերպության ներկայացուցիչ, նորվեգացի Կատարինե Բյոդիլ Բյորնին (Կատարինե մայրիկ) Ալեքսանդրապոլում բացեց «Լուսաղբյուր» անունը կրող մանկատունը՝ սեփական միջոցներով հոգ տանելով 33 հայ որբուկների համար: Լայնորեն հայտնի է նաև շվեյցարացի նշանավոր հայասեր Յակոբ Կյունցլերի որբանպաստ գործունեությունը: Կյունցլերը Բելյոթում հայ որբնայրիների համար հոսպիտալ հիմնեց և օժանդակեց մի շարք որբախնամ հաստատությունների ստեղծմանը: Ինչ վերաբերում է Մարիա Յակոբսոնին, ապա նա ոչ միայն ապաստանեց հայ որբերին «Թոչնոց տանը», այլ նաև ինքը հայերեն էր շփվում ու երեխաներին դաստիարակում Առաքելական եկեղեցու քահանաների օգնությամբ՝ այդպիսով հարգելով հայ մանուկների ինքնությունն ու ազգային պատկանելությունը¹:

Աննախաղեպ քաջությամբ ասպարեզում հայտնվեցին նաև առանձին հայ կանայք, ովքեր տազնապը մի կողմ թողած՝ պարզապես սկսեցին գործել, մի բան անել «չխելագարվելու համար»: Կ.Պոլսում Սրբուհի Գալֆայանն իր ինայոդություններով սեփական տանը հոգածության տակ էր առել 2-10 տարեկան որբ աղջիկների, որոնց հավաքում էր եկեղեցու բակերից և փողոցներից²:

Ամենաձավալուն և մասշտաբային որբախնամ գործունեությունը, թերևս, կապված է Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի անվան հետ (Ամերկոմ)³, որը ձևավորվել է 1918թ.՝ այդ տարածա-

¹ https://en.wikipedia.org/wiki/Maria_Jacobsen

² <http://kh-tert.livejournal.com/9817.html>

³ Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեն՝ Ամերկոմը, որի գլխավոր գրասենյակը գտնվում էր Բոստոնում, հիմնադրվել է 1915թ. սեպտեմբերին՝ Թուրքիայում ԱՄՆ այն ժամանակվա դեսպան շենրի Մորգենթաուի խնդրանքով: Դեսպանն ԱՄՆ պետքարտուղարին հեռագիր էր ուղարկել խնդրելով միջնորդել, որ նախագահը ստեղծի մի կոմիտե, որը կօգնի փրկել հայերին: Պետքարտուղարը գրությունը փոխանցել էր ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին: Այնուհետև ամերիկյան մի քանի մտավորականների ջանքերով հիմնվել էր կազմակերպությունը:

շրջանում 1915 թվականից արդեն գործող ամերիկյան բարեգործական հաստատությունների՝ հայկական և սիրիական նպաստամատույց կոմիտեների միավորմամբ: Կոմիտեները ֆինանսավորում էին բազմաթիվ որբանոցներ ոչ միայն Թուրքիայում, այլ նաև Սիրիայում, Հունաստանում, Եգիպտոսում, Պաղեստինում, Կոստանդնուպոլսում և այլուր, որտեղ գաղթել էին հայ որբերը:

Թեև միջազգային գթասրտական կազմակերպությունները, հայկական սփյուռքի կազմակերպություններն ու առանձին անհատներ ջանացին փրկել այդ երեխաներին, թուրքական կառավարության կազմակերպված գործունեության շնորհիվ բազմահազար երեխաներ տեղավորվեցին շուտափույթ ստեղծված կամ վերակազմակերպված պետական մանկատներում: Այսպիսով, ո՛չ միջազգային, ո՛չ հայկական սփյուռքի, ո՛չ եկեղեցու և անհատ անձանց ջանքերը բավարար չէին որոնելու, գտնելու, ապաստան տալու մեծաթիվ որբերին: Դրանից էլ արագորեն օգտվեց թուրքական կառավարությունը՝ «լրացուցիչ օգուտ քաղելով» որբերից՝ որպես հարմար ու հեռանկարային մարդկային ռեսուրս. արագորեն ձևավորվեցին կամ վերաձևակերպվեցին առկա կառավարության ենթակայությամբ գործող մանկատները՝ հավաքելու որբացած երեխաներին:

Որոշ աղբյուրներ վկայում են, որ այդ, այսպես կոչված՝ հումանիստական «բարի կամքի» դրսևորումն իրականում քող էր՝ իրականացնելու որբ մնացած երեխաների զանգվածային մահմեդականացումը («սպիտակ եղեռն») մի կողմից և մյուս կողմից՝ կանխելու հնարավոր համաճարակների տարածումը: Խարբերդում ԱՄՆ հյուպատոս Լեալի Դեիսը գրում է. «Բացահայտ է, որ կառավարությունը որոշել է ամեն կերպ թույլ չտալ, որ այստեղ մնացած արտասահմանյան միսիոներները կրթական կամ կրոնական գործունեություն ծավալեն: Որոշ հայուհիների ամուսնացնում են մահմեդականների հետ, որոշ հայ երեխաների էլ մահմեդականացնում են, բայց ոչ ոքի թույլ չեն տալիս ուրիշ, օտար ազդեցությունների ենթարկվել» [2, էջ 279-280]:

Ի լրումն կենտրոնացված հաստատություններում հայ որբերի մահմեդականացման ջանքերի, Թուրքիայի կառավարությունը քաջալերում էր իր քաղաքացիներին տան աշխատողի, բանող ձեռքի, սև գործեր կատարելու համար ընդունել այն երեխաներին, ովքեր սովի ու համաճարակների պատճառով, միևնույն է, արդեն իսկ դատապարտված էին մահվան: Հատուկ պլանավորված և կազմակերպված ձևով մեծ թվով երեխաներ տեղավորվեցին թուրք կամ իսլամադավան այլ ընտանիքներում: Հայ որբերին մահմեդական տուն ընդունելու գինը մահմեդականացվելու պարտա-

դրանքն էր: Անթաքույց և պաշտոնապես կառավարությունը նաև արտոնում էր, որ «ընդունված» հայ երեխաների անունները թրքացվեին: Այլ խոսքով, կյանքի իրավունք՝ ինքնությունն ու կրոնը փոխելու դիմաց:

Թուրքական կառավարության նպատակները հայ որբերի առնչությամբ հեռուն էին գնում. բռնի մահմեդականացնելով հայ որբերին՝ հարստացվում էր թուրքական գենոֆոնդը¹, երեխաները դառնում էին ձրի աշխատուժ «հյուրընկալված» ընտանիքներում, և լրացուցիչ զինվորական ուժ՝ վարժեցնելով նրանց որպես «ենիչերներ»: Ֆրիտյոֆ Նանսենը, նկատի ունենալով այս իրավիճակը, նշում է. «Իսլամ ընդունողների և թլպատվողների թիվը մեծ էր, հատկապես երեխաների, որոնց ձեռք էին գցում իշխանությունները» [4, էջ 451]: Նման վարքագծի պատճառը նաև քաղաքական ենթատեքստ ուներ. պատերազմի՝ այլ ելք ունենալու պարագայում հայ որբերին իրենց ընտանիքներում և որբանոցներում խնամելը լրացուցիչ երաշխիք էր միջազգային հարթակներում բանակցությունների սեղանի շուրջ հումանիտական դեմքի պատրանք ստեղծելու համար²: Իսկ իշխանությունները, մասնավորապես Ջեմալ փաշան, իրենց վարքագիծն այլ կերպ էին բացատրում. «Բռնագաղթի ենթարկված երեխաներին մահից և բարոյական վտանգներից փրկելու համար Միբիայում պահեցի: Նրանց համար որբանոցներ բացեցի. մեկ հատը Լիբանանում՝ Ային Թուրա մենաստանում, երկրորդը՝ Դամասկոսում, երրորդն էլ՝ Հալեպում: Այս որբանոցները, որտեղ կային 3000-4000 երեխաներ, անձամբ իմ պաշտպանության տակ վերցրեցի և երեխաներին ուտելիք, հագուստ և դաս տալու համար ամբողջ ծախսերը բանակի բյուջեից վճարեցի» [6, էջ 30]:

Մինչդեռ Օսմանյան կայսրության ռազմական նախարար Էնվերի՝ 1916թ. մայիսի 9-ին ներքին գործերի նախարար Թալեաթին ուղղված նամակում նշվում է, թե ինչ լծակներ են օգտագործվել և ինչպես են շահագրգռել, որպեսզի գործընթացը մեծ ծավալներով ընթանա. «Կրոնափոխ և ոչ կրոնափոխ հայ որբերին եթե վերցնենք մեր որբանոցները, ես պատրաստ եմ ռազմական բյուջեից հոգալու դրա համար անհրաժեշտ ծախսերը» [7, էջ 56-57]³: Նա նաև հատուկ կարգադրություն է անում որբերին թուրք ընտա-

¹ Ինչպես ցեղասպանագետ Վահագն Դադրյանն է նշում, թուրքերի համար այդ երեխաները դիտվում էին որպես թուրք ժողովրդի էթնիկ գենային նկարագիրը հարստացնելու համար փնտրված աղբյուր [3, էջ 313]:

² Ցեղասպանության ականատես-վկա, գրող Վահան Մինախոյանը հետաքրքիր դիտարկում է անում՝ նշելով, որ ռուսական գործի հաղթանակների ժամանակ թուրքերը ձգտել են իրենց տներում հայ երեխա պահել, որպեսզի «բարեբարի հանգամանքով պատասխանատու թիւնից պատահին...» [5, էջ 327]:

³ Մեջբերումը՝ Ռուբեն Մելքոնյանի թարգմանությունից:

նիքներում տեղավորելու պայմանների վերաբերյալ. «Երեխաներին իսկամական սովորություններին համապատասխան ձևով բաժանել բարեկեցիկ ընտանիքներին այն գյուղերում և գյուղաքաղաքներում, որտեղ չկան հայեր, եթե երեխաների թիվը շատ է, նրանց տալ մաքուր և պատվարժան (նկատի ունի կրոնը) ընտանիքներին, որոնք ապրուստը դժվար են հոգում, այդ նպատակով ամեն երեխայի համար ընտանիքներին վճարել ամսական 30 քուրու» [7, էջ 57]: Այս գործընթացն այն աստիճան մանրակրկիտ էր կազմակերպված, որ անգամ տեղավորված երեխաների վերաբերյալ կարգադրություն է արվում «կազմել ստույգ աղյուսակներ, թե ում են տրվել այդ երեխաները և մեկ օրինակ ուղարկել կենտրոն» [7, էջ 57], որպեսզի այդ երեխաները մշտական վերահսկողության ու կառավարման ներքո պահվեին: Իսկ Թալեաթն, ավելի հեռուն գնալով, հոգ էր տանում, որ կենդանի մնացածներն արմատախիլ արվեն սեփական ակունքներից ու անգամ հիշողություններից: Այսպես, նա 1915թ. նոյեմբերի 5-ին հրահանգ է ուղարկում Հալեպ՝ պահանջելով. «Կ'իմանանք թե Սվազի, Մամուրեթ-Իլ-Ազիզի, Տիարպեքիի, Էրզրումի նահանգներեն տարագրուած և ճամբուն ընթացքին իրենց ծնողներուն մեռած ըլլալուն հետեւանքով անօգ մնացած ծանօթ անձնաւորութեանց (Հայոց) պատիկները կարգ մը իսկամ ընտանիքներու կողմէ որդեգրութեան և սպասաւորութեան կ'ընդունուին: Ձեր նահանգին մէջ գտնուող այդ կարգի տղաքը հաւաքելով՝ տարագրութեան վայրերը (անապատները) դրկելնիդ եւ յարմար դատուած կերպով ժողովուրդին այս մասին պէտք եղած հրահանգները տալերնիդ իբր շրջաբերական կը ծանուցանենք» [8, էջ 180]: Իսկ հաջորդ՝ 1915թ. դեկտեմբերի 12-ին ուղարկված ծածկագրում «բացատրում» է իրական մտադրությունը. «Հաւաքեցէք և սնուցէք այն որբերը միայն որոնք չեն կրնար յիշել գուլումը որուն ենթարկուեցան իրենց ծնողները: Մնացածները կարաւաններուն ընկերացնելով դրկեցէք» [8, էջ 187]: Ընդ որում, այս հրահանգը վերաբերում էր ոչ միայն արդեն իսկ որբացած երեխաներին, այլ նաև դեռ կենդանի մնացած ծնողների հետ գաղթի քարավաններում քայլող երեխաներին: «...Մարզվանի, Ամասիայի և Թոքատի (Եվդոկիա) տարագիր հայության արքայի ժամանակ պետական պաշտոնյաները քարավաններից առանձնացրել են երեխաներին, իսկ նրանց տարագիր ծնողներին հրամայել շարունակել ճանապարհը: Այնուհետև հայտարարություններ են տարածել շրջակա գյուղերի մուսուլման բնակչության շրջանում, որպեսզի գան և վերցնեն իրենց նախընտրած հայ երեխայի» [9, էջ 138]:

¹ Մեջբերումը՝ Ռուբեն Մելքոնյանի թարգմանությունից:

Իսլամացմանն ու անունների թրքացմանը զուգահեռ, ստրկացված երեխաներին արգելում էին խոսել մայրենի լեզվով. անգամ ցավ զգալուց երեխան չէր կարող մայրենի լեզվով ճչալ, այլապես կկորցնէր կյանքը, ինչպես վկայում է Ային Թուրքա որբանոցի խնամվող որբերից մեկը Ջոն Կիրակոսյանին ուղղած իր նամակ-վկայության մեջ. «Մեզ տեղ հասցնելուց անմիջապես հետո թուրքացրին, անուններս փոխեցին, դասարանների բաժանեցին, Կ.Պոլսից հրավիրված դասատուները սկսեցին մեզ հետ պարապել: Խստիվ արգելեցին հայերեն խոսել: Հատուկ դասարանների ավագներ նշանակեցին մեծահասակներից, որոնց պատվիրել էին հայերեն խոսողներին ցուցակագրել պատժելու համար: Այս ավագները հավատարմությամբ կատարում էին իրենց պարտականությունները: Ամեն երեկո, երբ ամբողջ երեխաներին հավաքում էին աշխատողների հետ միասին ՋԱՌՅԱ-ի¹, և բոլորը միատեղ երեք անգամ թագավորը երկար ապրի էին գոչում, այդ հանդիսավոր ժամին կարդում էին օրվա հայերեն (գլավուրջա) խոսողների ցուցակը և թուրքավարի պատժում ամեն օր, մինչև որ բոլոր երեխաները վերջ տվեցին հայերեն խոսելուն: Պատժի ձևը հետևյալն էր. մեջքի վրա պառկեցնում էին, երկու ոտքերը վերև բարձրացրած, երկու հոգի բռնում, իսկ ինքը՝ որբանոցի ղեկավարը, անձամբ գավազանով 100-200 հարված էր հասցնում ոտքերին: Վայ այն երեխային, որն այդ ծեծի ժամանակ կանչեր մայրիկ, մամա ջան, գազանը առավել կգազազեր և կշարունակեր իր հարվածները՝ մինչև քիչ հանդարտվեին կրքերը: Ծեծի այդ ձևը թուրքերեն ֆալախա քաշել էին անվանում: Շատ տղաներ ոտքերից վնասվածքներ ստացան և կաղ մնացին» [10, էջ 298-299]: Մտահոգված ողջ մնացածների ինքնության կորստի այս կազմակերպված գործընթացով՝ բազմաթիվ հայկական, միջազգային կազմակերպություններ և առանձին անհատներ, ռիսկի դիմելով, փորձ էին անում փրկել որբ մնացած երեխաներին: Հայաստանի խորհրդայնացումից հետո քուրդ և թուրք ընտանիքներում, առանձին հաստատություններում գերեվարված որբերի և կանանց փնտրտուքները ոչ միայն չկանոնակարգվեցին և հետևողական չեղան, այլև անգամ գրեթե անհնար դարձան՝ ելնելով միջպետական հարաբերությունների, այսպես ասած, «չարացման» նկատառումներից: Միակ փնտրողները մնացին առանձին անհատներն ու միջազգային բարեսիրական կազմակերպությունները: Առանց կազմակերպված պետական պահանջատիրության, գերեվարված հայ որբերի փրկության գործընթացը չհաջողվեց ավարտին հասցնել. չնայած հայկական կազմակերպությունների և օտարազգի միսիոներների

¹ Հավաք՝ ներկա-բացակայի նպատակով:

ջանքերին¹ շուրջ 50.000 երեխա դեռևս մնում էր թուրքական հարեմներում և անապատներում, և նրանց հայտնաբերել չհաջողվեց [11, էջ 100]:

Հատկանշական է, որ Թուրքիայի սոցիալական ոլորտի ներկայիս որոշ պատասխանատուներ համոզված են, որ «...հայերը, 1912-15թթ. հեռանալով Թուրքիայի տարածքից, իրենց հետևում թողեցին բազմաթիվ երեխաների, որոնք անխնամ էին, սոված ու որբ: Բազմաթիվ թուրք ընտանիքներ, բարի կամքի դրսևորման միջոցով, իրենց խնամքի ներքո վերցրին այդ «հետևում մոռացված երեխաներին» և ապա խոստովանեցին, որ, բնականաբար, այդ երեխաները հետագայում մահմեդականացվել են»²: Միջազգային հարթակում նման ելույթը, բնականաբար, որևէ քննադատության չկարողացավ դիմանալ, սակայն ակնհայտ են ապատեղեկատվությամբ խեղաթյուրված պատկերացումները թուրք ժամանակակից սոցիալական գործիչների մոտ: Նույն պետական գործիչների հետ արդեն 2012թ. Բրյուսելում տեղի ունեցած մեկ այլ՝ «Խնամագուրկ երեխաներ. օրակարգային հարցեր» թեմայով Սոցիալական աշխատողների միջազգային կոնֆերանսում հանդիպումը (այն բանից հետո, երբ Թուրքիայում մարդիկ սառը ցնցուղի ներքո իրենց «Դինք» էին զգացել) ցույց տվեց իրենց սեփական անցյալը փորփրած և դրանից մտահոգված, սակայն դեռևս զգուշավոր ու հետագա անելիքներում չկողմնորոշված մարդկանց տարակուսանքը:

Թուրքիայի ներկայիս սոցիալական ոլորտի պաշտոնյաների նման դիրքորոշումը կարող է բացատրվել մի քանի գործոններով: Առաջինը՝ անտեղյակությունն է. թուրք հասարակությունը, նաև մտավորականությունը խնամքով զերծ է պահվում այդ տարիներին տեղի ունեցածի վերաբերյալ տեղեկություններից, դրանք խնամքով թաքցնելուց զատ՝ նրանք հայտնվել են իրողությունների խեղաթյուրմամբ պարուրված տեղեկատվության հորձանուտում («կոլեկտիվ ամնեզիա ու դրա տարածմանն ուղղված ջանքեր» [12, էջ 81]): Երկրորդ՝ փախուստ իրականությունից, մի կողմից՝ գրեթե հարյուր տարի թուրքական պետականության հիմնադիր-հերոսների

¹ Այդ գործում հատկապես աչքի ընկավ ազգանվեր գործիչ Ռուբեն Հեյրյանը, ով, անտեսելով իրական վտանգը և բազմաթիվ ղեկավարություններ, կաշառելով արաբ շեյխերին, ծպտվելով անգլիական պաշտոնյայի կամ ամերիկյան միսիոների հագուստներով, Դեր Ջորի անապատներից և թուրքական հարեմներից կարողացավ փրկել հարյուրավոր հայ որբերի: Հիշատակության է արժանի նաև դանիացի միսիոներուհի Կարեն Եփփեն, ով, համագործակցելով արաբական աշիրեթների առաջնորդների հետ, մինչև 1928թ. կարողացավ փրկել 2000 հայ կին և երեխա:

² Այս միտքն արտահայտվել է Մալթայում 2005թ. տեղի ունեցած «Խնամատար խնամք. անցյալը, ներկան և ապագան» թեմայով միջազգային կոնֆերանսում:

կերպարի՝ սեփական ժողովրդի աչքում խեղաթյուրումն ու դրանից ծագող դիմադրությունը, մյուս կողմից՝ սեփական պետականությունը ցեղասպանության «շնորհիվ» կայացնելու փաստի հետ առերեսվելուց պոռթկող ամոթի զգացումը: Ահա թե ինչու միայն առանձին (թեև աստիճանաբար մեծացող թվով) մտավորականների, առավել ևս հազվագյուտ պաշտոնյաների է հաջողվում զերծ մնալ փաստերի աղավաղումից, իսկ ցեղասպանությունը և, մասնավորապես, որբ մանուկների բռնի ուժացումը և դրանից բխող հարյուր հազարավոր ներկա թուրքերի ոչ թուրքական ծագումը շարունակում է հերքվել: Այս երևույթը բացատրվում է որպես մերժում կամ խուսափում՝ «...անբարենպաստ տեղեկատվությունը կամ զգացմունքներն այլընտրանքային պատմության կառուցման, անընդունելի վարքի արդարացման, ցեղասպանության զոհ հանդիսացող խմբին սեփական բռնի գործողությունների ու մտադրությունների վերագրման, ֆրոստրացիայի առաջնային աղբյուրի տեղափոխման, ինչպես նաև զոհի ապամարդկայնացման մեխանիզմների օգնությամբ» [13, էջ 19]: Ուստի, ուժացված հայ որբերի թեման շարունակում է մնալ տաբու, ինչպես արդեն 2015թ. նույն պաշտոնյաների հետ հանդիպման ժամանակ պարզ դարձավ՝ «հենց իրենց՝ ուժացման պատճառով ինքնությունը կորցրած մարդկանց շահերից ելնելով, քանի որ դա անբուժելի տրավմա է հենց այդ մարդկանց համար»¹: Նման մանիպուլյացիան մի կողմից վերահաստատում է Աքչամի հայտնի դիրքորոշումը. «...ցանկացած բացասական դատողություն զինված ուժերի հակաժողովրդավարական ազդեցության վերաբերյալ նույնպես դառնում է տաբու» [14, 16, էջ 23]: Մյուս կողմից, այն որոշակի հիմքեր ունի մտահոգվելու համար, թեև արդեն գործ ունենք ոչ թե անմիջապես տուժած որբերի, այլ նրանց սերունդների հետ:

Տեղի ունեցած մշակութային, կրոնական և ընտանեկան պարտադրված սերտաճումն ու ուժացումը չափազանց ծանր հետևանքներ թողեցին անգամ այդ գնով կենդանի մնացած, սակայն թրքացված որբերի և նրանց հետագա սերունդների վրա: Թրքացած այդ սերունդը բազմակի ձևերով է տուժել. «Ապրանքի վերածված հայ տղա երեխաները թե՛ ցեղասպանության հանցագործությունների ժամանակ և թե՛ իրենց որդեգրած թուրքական ընտանիքներում ենթարկվել են հոմոսեքսուալ բնույթի բռնաբարությունների» [3, էջ 322-323]: Ինչ վերաբերում է հետագա սերունդներին, ապա նրանց

¹ Առանձնագրույց Թուրքիայի սոցիալական աշխատողների ասոցիացիայի անդամ, պրոֆ. Հ.Ակարի հետ:

մշտապես ուղեկցում է «յուրային՝ օտարների մեջ և օտար յուրայինների մեջ» յուրատեսակ սինդրոմը: Վերապրածների ու նրանց սերունդների հիշողություններից դատելով՝ գերեվարված և վերադարձած որբերի և նրանց սերունդների ընկալումը միանշանակ չէ. առկա է «ոչ հայեր»¹ եզրույթն այն հայերի համար, ովքեր ծագումով հայ են, սակայն ժամանակին իսլամացվել են պարտադրաբար կամ հոժարակամ՝ փրկվելու նպատակով:

Այս իրավիճակը վերիմաստավորման կարիք ունի. ուժացված որբերի ներկա սերունդն այլևս առնչվում է ոչ թե փաստերի, իրադարձությունների ու տպավորությունների ու դրանց թողած տրավմատիկ հիշողությունների հետևանքների, այլ «ոչ յուրային, ոչ օտար» ինքնության միջանկյալ տիրույթի հետ, որտեղ նրանք այլևս մի նոր, խառնածին մշակույթի կրողներ են: Նրանք առնչվում են ոչ թե պատմական փաստերի, այլ դրանց հետևանքով առաջ եկած բարդությունների հետ: Դատելով գերեվարված և վերապրած որբերի հուշերից՝ չնայած ֆիզիկական գոյությանը, նրանք ստիպված էին մեռնել ու հառնել գրեթե ամեն օր՝ չկտրվելու համար սեփական ինքնությունից: Հայտնի ցեղասպանագետ Վահագն Դադրյանն այս երևույթն անվանել է վայրենության և հումանիտար միջամտության խառնուրդի հետևանք՝ արտացոլված կոլեկտիվ հիշողության մեջ: «Հիշողությունների շարունակական հոսքը, դրանց կառուցվածքային և իմաստային երկդիմությունը, վերադասավորման հնարավորությունները և նոր հիշողությունների մշտական առաջացումը հանգեցնում են ինքնության անկայունության» [15, էջ 61], մի իրավիճակ, որը հանգուցալուծման կարոտ է:

Եթե պատմական արդարության, վնասի փոխհատուցման վերականգնման և հետագա կրկնությունը բացառելու համար ցեղասպանության ճանաչումը անհրաժեշտ և բավարար պայման է, անհատական մակարդակում ճանաչումը անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է: Ինքնության երկվությունից տառապող վերապրածների ներկա սերնդի «ոչ հայեր» ինքնության հստակեցումը կախված է ցեղասպանության ճանաչումից բխող այն վերադասավորումներից, որոնք ենթադրաբար տեղի կունենան ինչպես թուրք, այնպես էլ հայ հասարակության կյանքում: Անգամ ցանկալի սցենարի՝ ճանաչման պարագայում, թերևս, բարդ հարցերից մեկը կապված կլինի հայերի՝ «ոչ հայերին» ընդունելու պատրաստակամությունից ավելի, քան «ոչ հայերի» թուրք ինքնության հնարավոր ձգողությունից՝ կապված սովոր միջավայրի, լեզվի, մշակույթի արդեն յուրացված տարրերի հետ: Կենսունակ ռազմավարությունն այս հարցում կարող է լինել ներողամտու-

¹ <http://www.mindiaspora.am/res/Hratarakumner/Site-Islamacvac%20hayeri%20khndirnri%20shurj.pdf>

թյունը, ըմբռնումն ու հանդուրժողականությունն այն «ոչ հայերի» հանդեպ, ովքեր դատապարտված են այդպիսին լինելու ոչ իրենց մեղքով և որպես հարգանքի տուրք բոլոր այն որբերին, ովքեր գոյատևած համար ժամանակին ստիպված են եղել վճարել իրենց ինքնության կորստով: Այս մոտեցումն իր հերթին կարող է օգնել ցեղասպանության ճանաչման ներկա ջանքերին՝ որպես միասնականությունը խթանող հարթակ:

Մարտ, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Անտոնյան Մ.*, Ցեղասպանության որբերի հանդեպ հոգածության սոցիալական գինը, Ցեղասպանությունը հասարակագիտական վերլուծությունների կիզակետում, ԵՊՀ հրատարակչություն, 2015թ.:
2. *Դևիս Լ.*, Սպանդի նահանգը: Ամերիկյան դիվանագետի զեկուցագիրը հայկական ցեղասպանության մասին, 1915-1917թթ. (թարգմանությունը՝ Գրիգոր Զանիկյանի), Երևան, 2001թ.:
3. *Դադրյան Վ.*, Երեխաները ցեղասպանության տարիներին, Հայոց ցեղասպանության փաստագրումը թուրքական աղբյուրներում, Հասարակական հոդվածներ 2, Ստամբուլ, 2005թ. (մեջբերումը՝ Ռուբեն Մելքոնյանի թարգմանությունից):
4. *Հովհաննիսյան Պ. (խմբագիր)*, Սև գիրք. նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների և Հայոց ցեղասպանության մասին, Երևան, 2011թ.:
5. *Մինախորեան Վ.*, 1915 թականը. Արհաւիրքի օրեր, Թեհրան, 2006թ.:
6. *Մելքոնյան Ռ.*, Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Երևան, 2010թ.:
7. *Atnur İ., Türkiye'de Ermeni kadınları ve çocukları meselesi (1915-1923) (Աթնուր Ի.*, Հայ կանանց և երեխաների հիմնախնդիրները Թուրքիայում (1915-1923), Անկարա, 2005թ.:
8. *Անտոնեան Ա.*, Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեադ փաշա, Երևան, 1990թ.:
9. *Զավեն Արքեպիսկոպոս*, Պատրիարքական յուշերս. Վաերագիրներ և վկայություններ, Գահիրե, 1947թ.:
10. *Կիրակոսյան Զ.*, Անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում (Արման Կիրակոսյանի թարգմանությամբ), Երևան, 2009թ.:
11. *Ահարոնյան Գ.*, Հուշամատյան Մեծ Եղեռնի (1915-1965), Բեյրութ, 1965թ.:
12. *Հարությունյան Լ.*, Ցեղասպանությունը հասարակագիտական վերլուծությունների կիզակետում, ԵՊՀ, 2015թ.:
13. *Մադաթեյան Ս.Գ.*, Ինչ է ցեղասպանությունը. սոցիոլոգիական մոտեցում, Ցեղասպանությունը հասարակագիտական վերլուծությունների կիզակետում, ԵՊՀ, 2015թ.:
14. *Акчам Т.*, Долгая история отрицания геноцида армян, Le Monde Diplomatique, 2001.

- 15. Մկրտիչյան Ա., Հայոց ցեղասպանություն. անցյալի հիշողություններից դեպի ներկայի հիմնախնդիրներ, Ցեղասպանությունը հասարակագիտական վերլուծությունների կիզակետում, ԵՊՀ, 2015թ.:
- 16. Մելքոնյան Է., Հայկական բարեգործական ընդհանուր միության գործունեությունը 1910-1930թթ., 2001թ.:

**ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽԵՂՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՈՒԾԱՑՈՒՄ.
ՀԱՅ ՈՐԲԵՐԻ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ»
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ**

Միրա Անտոնյան

Ամփոփագիր

Ցեղասպանության պատճառով որբացած բազմահազար հայ մանուկներ Օսմանյան Թուրքիայում ենթարկվել են բազմաբնույթ հալածանքների, օգտագործվել որպես ենիչերներ, ուժացվել, կրոնափոխ արվել, որպես ձրի աշխատուժ «նվիրվել» իսլամ դավանող թուրք և քուրդ ընտանիքներին, ենթարկվել անվանափոխության, սեռական ու ֆիզիկական բռնությունների: Չնայած նշված իրողությունների վերաբերյալ բազմաթիվ վկայություններին ու պատմական փաստագրումներին՝ Թուրքիան այսօր էլ փորձում է տեղի ունեցածը ներկայացնել որպես կառավարության և թուրք ժողովրդի կողմից հայ որբերի նկատմամբ իրականացված գթասիրական որբախնամ գործունեություն՝ իբր ի նշան համամարդկային արժեքների հանդեպ հարգանքի:

Մեփական ժողովրդից հատուկ նպատակադրված ձևով թաքցնելով բազմահազար որբերի բռնի ուժացման փաստը՝ ներկայիս կառավարությունը միաժամանակ առիթը բաց չի թողնում ակնարկել «նախկին հայերին» սպառնացող վտանգների մասին՝ ցեղասպանության ճանաչման պահանջի պարագայում:

Հողվածն անդրադառնում է ցեղասպանության պատճառով որբացած երեխաների հանդեպ հոգածությանը, նրանց «անվտանգության երաշխավորման» հարցում թուրքական կառավարության կողմից կազմակերպված իրական քայլերին ու որբերի ներկա սերնդի «ոչ հայեր» երևույթին՝ որպես բռնի ուժացման և ինքության խեղաթյուրման հետևանք:

**ОТ ИСКАЖЕНИЯ ИДЕНТИЧНОСТИ К АССИМИЛЯЦИИ:
«ОБЕСПЕЧЕНИЕ БЕЗОПАСНОСТИ» АРМЯНСКИХ СИРОТ
ВО ВРЕМЯ ГЕНОЦИДА**

Мира Антонян

Резюме

Тысячи детей, осиротевших вследствие Геноцида армян, подверглись многочисленным актам насилия, были использованы в качестве янычар и подвержены религиозной ассимиляции; в качестве рабочей силы их «дали» мусульманским турецким и курдским семьям, переименовывали, а также подвергали физическому и сексуальному насилию.

Несмотря на многочисленные свидетельские показания и исторические факты, сегодня Турция представляет эти события как благотворительную деятельность со стороны народа и правительства Турции, заботу об армянских сиротах в знак уважения к общечеловеческим ценностям. Целенаправленно скрывая от собственного народа факт о насильственной ассимиляции тысячи детей-сирот, нынешнее правительство не упускает возможность намекнуть «бывшим армянам» об угрозах и опасностях при предоставлении иска о признании Геноцида армян.

Данная статья рассматривает заботу о детях, осиротевших в результате геноцида, и реальные шаги, предпринятые турецким правительством по предоставлению «гарантии безопасности» этим сиротам, а также явление «не армяне» нынешнего поколения как результат принудительной ассимиляции и искажения идентичности.

**FROM IDENTITY DISORDER TO ASSIMILATION:
THE PHENOMENON OF “GUARANTEEING SAFETY”
OF ARMENIAN ORPHANS DURING THE GENOCIDE**

Mira Antonyan

Resume

The Armenian Genocide in Ottoman Turkey left thousands of Armenian children orphans. They were persecuted, renamed, used as Janissaries, assimilated, forced to convert to Islam, “gifted” to Islamic Turkish and Kurdish families as free labor force, abused, physically and sexually assaulted. Despite the overwhelming evidence of said

events, the Turkish government to this day continues to present them as charitable orphan care activities performed by the Turkish government and population, as a tribute to universal humanitarian values.

While thoroughly hiding from its own population the fact of forced assimilation of Armenian orphans, Turkey's current government at the same time takes every opportunity to hint at the perils that the "previously Armenian" population will face, if the Genocide recognition process is pushed forward.

The article addresses the real actions Turkish government took regarding the "care" for Genocide orphans and the "guaranteeing of their safety." It also addresses the phenomenon of "non-Armenians" – the current generation of said orphans formed because of forced assimilation and identity distortion.

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

«21-րդ ԴԱԸ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱԸ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱԸ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 12 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը (*CV*), ինչպես նաև բանալի-բառեր:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա ամփոփագիր (հայերեն, ռուսերեն, անգլերեն):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), շ. (ռուսերեն), ք. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, շ. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝
 - *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
 - *Шарипова Р.*, Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
 - *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from <http://www.internews.ras.ru/books/media>, Sept. 28, 1998.
5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *AI-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ԴԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 25.07.2017թ.
Թիվ 5 (75), 2017թ.
Տպաքանակը՝ 150:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 7 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում